ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

5

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5, 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Սնակ Սարուխանյան

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ
Սերգեյ Սարգսյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Տաթևիկ Քարաուղլանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սնակ Սարուխանյան
Գործընթացներ Իրանի
միջուկային ծրագրի շուրջ 3

Սերգեյ Սարգսյան
Գազատարների աշխարհաքաղաքականությունը
սևծովյան-կասպյան տարածաշրջանում 7

Վահե Դավթյան
Ռուսաստան-ԱՄՆ-Իրան աշխարհաքաղաքական
եռանկյունին և Հայաստանի էներգետիկ
անվտանգությունը 16

Սերգեյ Մինասյան
Հայ-վրացական հարաբերությունները
«հնգօրյա պատերազմից» հետո 25

Արեստակես Միմավորյան
Ջավախքի հայ կաթոլիկ համայնքի
հոգևոր-եկեղեցական խնդիրների շուրջ 32

Թամարա Վարդանյան
Վրաստանի ուղեղային կենտրոններն ու
ակադեմիական համակարգը 39

Վահրամ Հովյան
Վրացական արձագանքը հայ-վրացական
հարաբերությունների վերջին
զարգացումներին ……..... 48

Արաքս Փաշայան
Թալիշական գործոնն Ադրբեջանում 59

Հայկարամ Նահապետյան
Ամերիկյան պարբերական մամուլի
հրապարակումները Լեռնային Ղարաբաղի
վերաբերյալ 1918-1920թթ. 65

Գիտաժողով Ավստրիայում 69

ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ

Սնակ Սարուխանյան

Իրանում ներքաղաքական ճգնաժամը, որի ակտիվ շրջանն ավարտվեց հուլիսին, բերեց իսլամական հանրապետության շուրջ արտաքին քաղաքական նոր զարգացումների: ԵՄ քաղաքացիների ձերբակալումների արդյունքում՝ սրվեցին հակասություններն Իրանի և եվրոպական պետությունների միջև: Միևնույն ժամանակ, ակտիվացան գործընթացներն իրանական միջուկային ծրագրի շուրջ:

Ս.թ. օգոստոսին ԱՄՆ նախագահ Բ.Օբաման անուղղակի պահանջ ներկայացրեց Թեհրանին՝ ակտիվացնել համագործակցությունն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ և բավարարել ԱԷՄԳ ու միջազգային հանրության՝ իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ պահանջները և մինչև սեպտեմբերի վերջը վերացնել բոլոր մտահոգությունները:

Օգոստոս ամսվա երկրորդ կեսն ու սեպտեմբերի սկիզբը վերածվեցին իրանական միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունների, Իրանի դեմ հնարավոր ռազմական հարվածի և տնտեսական պատժամիջոցների կիրառման ակտիվ քննարկման շաբաթների, որոնք ի հայտ բերեցին ոչ միայն բուն միջուկային ծրագրին, այլ նաև միջազգային քաղաքականությանն ու անվտանգությանը վերաբերող հակասությունների մի մեծ փունջ: Միաժամանակ, ԱԷՄԳ գլխավոր քարտուղարի անվան և «իրանական հիմնախնդրում» նրա անաչառության շուրջ ֆրանսիական և ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչությունների կողմից հրահրվեց լուրջ սկանդալ: Օգոստոսի 25-ին Ֆրանսիայի փոխարտգործնախարարը մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ իր գերատեսչությունն ունի բոլոր հիմքերը՝ մեղադրելու ԱԷՄԳ-ին և նրա գլխավոր քարտուղար Մ.Էլ-Բարադեյին՝ Իրանի միջուկային ծրագրին վերաբերող մի շարք կարևոր փաստեր միջազգային հանրությունից թաքցնելու մեջ: Համաձայն ֆրանսիական, իսկ հետո նաև ամերիկյան դիվանագետների, Իրանի միջուկային գործունեությանը վերաբերող շատ կարևոր տեղեկատվություն, որին տիրապետում է ԱԷՄԳ-ն, չի ընդգրկվել գործակալության վերջին զեկույցում, իսկ այս տեղեկատվության մասին հայտարարությունները գործակալության գլխավոր քարտուղարն արել է միայն իր մամլո ասուլիսների ժամանակ, որոնք, չլինելով իրավական նշանակության միջոցառումներ, փաստորեն, միջազգային հանրու-

թյան համար հիմք չեն ստեղծում Թեհրանի նկատմամբ իրավաբանորեն հիմնավորված պատժամիջոցներ կիրառելու համար: Իր հերթին ԱԷՄԳ գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ այս մեղադրանքները «քաղաքական հիմք ունեն»՝ ավելացնելով, որ «նման հայտարարությունները, որոնք ուղղված են մասնագետների աշխատանքը խանգարելուն և նպատակ ունեն զրկել գործակալությանը անկախ և անաչառ կառույցի հեղինակությունից, խախտում են գործակալության կանոնադրությունը և պետք է անմիջապես կանխարգելվեն»:

Սակայն հետագա զարգացումները, այդ թվում ԱԷՄԳ-ում ամերիկյան ներկայացուցչի նոր մեղադրական հայտարարությունները, ցույց տվեցին, որ սկանդալը մարման միտում չունի: Անդրադառնալով այն փաստերին, որոնց վերաբերյալ ԱԷՄԳ գլխավոր քարտուղարը լռել է, ամերիկյան ներկայացուցիչն ասաց, որ խոսքը վերաբերում է Բարադեյի վերջին այն հայտարարությանը, թե «հարաբերություններն Իրանի հետ մտել են փակուղի» և որ այդ հայտարարությունը չի մտել ԱԷՄԳ վերջին զեկույցի մեջ: Սակայն իրականում ԱԷՄԳ-ն իր զեկույցը նվիրել է Իրանի միջուկային հետազոտություններին, անդրադարձել դրանց տեխնիկական կողմին և անգամ մեծ ցանկության դեպքում իր զեկույցում չէր կարող ոչ տեխնիկական բնույթի այնպիսի գնահատական տալ, ինչպիսին «հարաբերությունները մտել են փակուղի»-ն է: Որպես կանոն, նման գնահատականները միշտ էլ տրվել են ԱԷՄԳ գլխավոր քարտուղարի մամլո ասուլիսների և հաղորդագրությունների ժամանակ, ինչն, իսկապես, զրկում է դրանց իրավական կարգավիճակից և վերածում քաղաքական բնույթի գնահատականի: Այս մասին, իհարկե, հայտնի է թե՛ ֆրանսիացիներին, թե՛ ամերիկացիներին, և այս պատճառով սխալ կլիներ Էլ-Բարադեյին ուղղված մեղադրանքները դիտարկել իրավական տեսանկյունից: Խնդիրն ավելի քաղաքական է և պայմանավորված կարող է լինել հետևյալ կարևոր գործոններով.

1. ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան նպատակ ունեն ՄԱԿ ԳՎ և ԱԽ նիստերում բարձրացնել Իրանի դեմ նոր տնտեսական պատժամիջոցների հարցը: ԱԷՄԳ վերջին զեկույցը նման պատժամիջոցների համար իրավական հիմք չի ստեղծում, քանի որ Իրանի ողջ միջուկային գործունեությունը, այդ թվում՝ ուրանի հարստացումը, չեն խախտում միջազգային իրավական նորմերը և Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը: Այս պարագայում, խոսելով «թաքցված փաստերի մասին», արևմտյան պետությունները հիմք են ստեղծում ԱԷՄԳ զեկույցի վրա չհենված պատժամիջոցների կիրառման քննարկումներ սկսելու համար:
2. Բուն Ֆրանսիան վերջին տարիներին ակտիվացրել է «իրանական քաղաքականությունը», քայլեր է ձեռնարկում Թեհրանի վրա լրացուցիչ ճնշումներ գործադրելու համար, ինչը պայմանավորված է նրանով, որ Մ.Ահմադինեժադի կառավարությունն անում է ամեն ինչ ֆրանսիական

«Տոտալ» նավթագազային ընկերությանը Իրանի հետ ունեցած բազմամիլիարդ արժողությամբ պայմանագրերից զրկելու և իրանական էներգետիկ ոլորտից դուրս մղելու համար:

3. Վաշինգտոնն իր հերթին շարունակում է ԱԷՄԳ հեղինակազրկման՝ դեռևս Ջ.Բուշ-կրտսերի նախագահության ժամանակ որդեգրած քաղաքական գիծը, որի նպատակն է ԱԷՄԳ-ին զրկել միջուկային զենքի տարածման դեմ տարվող պայքարի մենաշնորհից և այդ պարտականությունը վերաբաշխել առանձին պետությունների միջև, ինչը թույլ կտա նույն ԱՄՆ-ին միջուկային պոտենցիալի ստեղծման կանխարգելման նպատակով ինքնուրույն, այդ թվում նաև ռազմական միջոցառումներ իրականացնել այս կամ այն պետության դեմ:

Ինչ վերաբերում է բուն Իրանին, ապա ԱԷՄԳ-ի շուրջ ստեղծված սկանդալային իրավիճակը բավական դրական ֆոն ստեղծեց Թեհրանի համար սեփական միջուկային ծրագրի շուրջ բանակցություններն ավելի նպաստավոր դիրքերից շարունակելու համար: Մ.Էլ-Բարադեյն ու ԱԷՄԳ-ն անուղղակիորեն դարձան Իրանի դատապաշտպանները, իսկ միջազգային հանրության շրջանում ստեղծված անհամաձայնության մթնոլորտն էլ ավելի մեծացրեց Թեհրանի մանևրելու շրջանակները:

Իրանում միջուկային ծրագրի քննարկումներն ակտիվացան հիմնականում օգոստոսի վերջերին, քանի որ հուլիս–օգոստոս ամիսներին Իրանում ներքաղաքական զարգացումները միջուկային ծրագիրը և արտաքին քաղաքական հիմնախնդիրները մղել էին հասարակական քննարկումների հետին պլան: Նախագահական ընտրությունների նախկին մասնակից Մ.Քյարուբիի բաց նամակը Փորձագետների վեհաժողովի նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանիին, որում նա բազում օրինակներ և փաստեր բերեց ձերբակալված ընդդիմադիրների դեմ բռնությունների և իրանական բանտերում կանանց զանգվածային բռնաբարությունների մասին, իրանական քաղաքական և լրատվական դաշտից դուրս մղեց մնացած գործընթացների քննարկումները, այդ թվում նաև միջուկային ծրագրի շուրջ: Դրան նպաստեց նաև օգոստոսին կառավարության ձևավորման գործընթացը:

Սակայն արդեն օգոստոսի վերջին, երբ Իրանը ևս մեկ անգամ մերժեց ԱԷՄԳ առաջարկը և Բ.Օբամայի պահանջը, միջուկային հիմնախնդիրը նորից իր կարևոր տեղը զբաղեցրեց իրանական քաղաքական գործընթացներում:

Այսպես, արդեն սեպտեմբերի 9-ին իրանական կողմը ԱԷՄԳ-ին և «վեցնյակին» (Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Չինաստան) ներկայացրեց հերթական «փոխզիջումային առաջարկը» միջուկային խնդրի վերաբերյալ, որը նպատակ ուներ «վերացնել բոլոր անհամաձայնություններն Իրանի և «վեցնյակի» միջև»: Չնայած իրանական առաջարկությունները պաշտոնապես չեն հրապարակվել, սակայն համաձայն եվրոպա-

կան դիվանագետների, դրանք «որևէ նոր բան» չեն պարունակում և չեն ենթադրում Իրանի կողմից ուրանի հարստացման կասեցում կամ ծավալների սահմանափակում, ինչը Թեհրանին ներկայացվող հիմնական պահանջն է: Չնայած Իրանը համաձայնել է բանակցել իր կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթի շուրջ, որևէ լուրջ փոփոխություն Իրանի դիրքորոշման մեջ սպասել չի կարելի: Սրա վկայությունն է Իրանի առաջնորդ Ա.Խամենեիի հայտարարությունը, որը նա արեց սեպտեմբերի 11-ին իր ուրբաթօրյա աղոթքի ժամանակ. «Պետք է մնալ կուռ քո օրինական իրավունքների պաշտպանման գործում, բոլոր ոլորտներում, այդ թվում նաև միջուկային: Հրաժարումը դրանցից պարտություն է նշանակում»:

Նշենք, որ Իրանի արդեն ավանդական դարձած այս մոտեցումը ներկա փուլում պայմանավորված է ոչ միայն բուն միջուկային ծրագրով, այլև այն ներքաղաքական զարգացումներով, որոնք տեղ են գտել իսլամական հանրապետությունում: Հակասությունների սրումը Արևմուտքի հետ հարաբերություններում կարող է մասամբ շեղել հասարակության ուշադրությունը ներքաղաքական զարգացումներից, մասամբ լիցքաթափել ներքաղաքական հակասությունները:

Ներկայումս Իրանի համար առաջնային նշանակություն ունի ՄԱԿ ԳՎ և ԱԽ նիստերում նոր պատժամիջոցների մասին հնարավոր որոշումների ընդունումից խուսափելը: Նման հեռանկարից, չնայած կոշտ հայտարարություններին, ցանկանում են խուսափել նաև ԵՄ-ը և ԱՄՆ-ը, քանի որ երկու տարի առաջ մտցված վերջին պատժամիջոցներից հետո հաջորդ քայլը պետք է դառնան իրանական նավթի գնման սահմանափակումները, ինչին Արևմուտքը պատրաստ չէ, մանավանդ համաշխարհային ներկա ճգնաժամի պատճառով ստեղծված գլոբալ ֆինանսատնտեսական անկայունության պայմաններում:

Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումից խուսափելու նպատակով է հավանաբար պայմանավորված Ֆրանսիայի առաջարկը՝ մինչև սեպտեմբերի 1-ը հանդիպում անցկացնել Իրանի և «վեցնյակի» բարձրաստիճան ներկայացուցիչների միջև, որի կազմակերպմամբ է ներկայումս զբաղվում ԵՄ Արտաքին քաղաքականության գծով հանձնակատար Խ.Սոլանան: Մինչդեռ տեղեկատվությունն այն մասին, որ Իրանը ուրանի հարստացման նոր գործարան է կառուցում, էլ ավելի է բարդացնում ապագա բանակցությունները:

Ինչևէ, չնայած նման հանդիպման ժամանակ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ձևավորված սառույցը դժվար թե հալվի, սակայն այն կարող է արևմտյան պետությունների համար Իրանի նկատմամբ լուրջ պատժամիջոցներ չկիրառելու հիմք հանդիսանալ: Իսկ Թեհրանին միջազգային հարթությունում իր միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակը միայն ձեռնտու է, քանի որ վերսկսված ակտիվ բանակցությունները, հանդիպումներն ու նոր պաշտոնական առաջարկները լեգիտիմացնում են Իրանի վերընտրված նախագահին և նրա կառավարությանը, ինչն այժմեական է դարձել երկրի ներսում վերջին բախումներից, զոհերից և ձերբակալություններից հետո:

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԾՈՎՅԱՆ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Սերգեյ Սարգսյան

Մաս 2. Նաբուկկոն և նրա շուրջ

Գազը Կասպյան տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի պետություններից Եվրոպա հասցնելու գաղափարն ի հայտ է եկել դեռ 2002թ.: 2 տարի անց հինգ գազատրանսպորտային ընկերություններ՝ *OMV Gas GmbH-ը* (Ավստրիա), *Botas-ը* (Թուրքիա), *Bulgargaz-ը* (Բուլղարիա), *S.N.T.G.N. Transgaz S.A.-ն* (Ռումինիա), *MOL Natural Gas Transmission Company Ltd.-ն* (Հունգարիա), միավորվեցին կոնսորցիումում, որը պետք է իրականացներ 3,3 հազ. կմ երկարությամբ, տարեկան 26-32 մլրդ մ^3 հզորությամբ և մոտ $ 5 մլրդ արժողությամբ[1] գազատարի նախագիծը, որն ստացավ *Nabucco* անվանումը: Սկզբում 2004թ. ներկայացված նախագծով ենթադրվում էր Եվրոպային գազ մատակարարել Իրանի՝ Պարսից ծոցում գտնվող Հարավային Փարս հանքավայրից (խոշորագույններից մեկն աշխարհում, հետազոտված պաշարները՝ մոտ 3,5 տրլն մ^3), Թուրքիայի տարածքով մինչև Բաումգարտեն քաղաքում (Վիեննային մոտ) գտնվող եվրոպական գազաբաշխիչ կենտրոններից մեկը:

Բայց 2006թ. Իրանի միջուկային ծրագրի շուրջ ծագած կոնֆլիկտի զարգացման հետ կապված՝ նախագիծը լրամշակվեց Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ադրբեջանի գազի լրացուցիչ կամ այլընտրանքային հնարավոր միացման հաշվառմամբ: Դրա շինարարությունը կարող է սկսվել 2011թ., գազի առաջին մատակարարումները կարող են կատարվել արդեն 2014 թվականից, իսկ 2016-ից նախատեսվում է ընդլայնել դրա հնարավորությունները Անկարա-ԵՄ տեղամասում[2]:

2008թ. հունիսի կեսերին նախագծի (որը լրիվ համապատասխանում է էներգատարանցման խոշոր հանգույցի վերածվելու ռազմավարական պլաններին) իրականացմամբ շահագրգիռ Թուրքիան և Ադրբեջանը պայմանավորվեցին, որ Ադրբեջանը Հարավկովկասյան գազատարով (Բաքու-Թբիլիսի-Էրզրում) իր գազի մի մասը մատակարարի *Nabucco-ին*[3]:

---

[1] Ներկայում նախագծի արժեքը գնահատվում է $7,9-12 մլրդ՝ կախված կոնֆիգուրացիայից:

[2] *Nabucco* գազատարի մամլո քարտուղար Քրիստիան Դոլեժալի հայտարարությունից Լեհաստանի Կռինիցա քաղաքում անցկացված տնտեսական XIX համաժողովում. http://www.oilcapital.ru/news/2009/09/111626_144049.shtml

[3] *Ф.Ализаде,* В высоких ценах на природный газ виновата Европа. Газета «Зеркало» (Баку), 14 июня 2008г.

Քարտեզ 1

Nabucco գազատարի նախագիծը

Սակայն միայն ադրբեջանական գազն ակնհայտորեն բավարար չէ, և ներկայում խնդիրն այն է, որ *Nabucco-ին* միանա Կասպյան արևելյան ծովեզրյա գազը: Դա կարելի է անել հետևյալ կերպ.

1. բնական գազի հեղուկացման գործարան կառուցելով Կասպից ծովի արևելյան ափին և ընդլայնելով անդրկասպյան ծովային փոխադրումների Կասպյան հաղորդակցային համակարգը (հենց այս տարբերակն է նախընտրում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը),
2. Թուրքմենստանից Իրանի հյուսիսային շրջաններով գազատար անցկացնելով (այն իրավիճակում, երբ Թեհրանն ինքն է ակտիվորեն խթանում իր մասնակցությունը *Nabucco-ին,* Կենտրոնական Ասիայի գազի տարանցումն իր տարածքով առանց նախագծին նրա ուղղակի մասնակցության անիրական հեռանկարներ ունի),
3. Անդրկասպյան գազատարով, որի նախագիծն ակտիվորեն պաշտպանում են Վաշինգտոնը և Բաքուն, Ղազախստանով կամ Թուրքմենստանով դեպի Ադրբեջան՝ Կասպից ծովի հատակով:

Գոյություն ունի ևս մեկ՝ բավական ինքնատիպ նախագիծ՝ գազը Հյուսիսային Կովկաս է հասցվում «Միջին Ասիա-Կենտրոն» (ՄԱԿ)-Ալեքսանդրով Գայ-Մոզդոկ (Հս.Կովկաս) գործող գազատարների համակարգով, իսկ հետո՝ 2006 թվականից, մինչև Բաքու ձգվող դատարկ գազատարով:

Անդրկասպյան նախագիծը

Կասպից ծովի հատակով Անդրկասպյան գազատարի (ինչպես և նավթամուղի) կառուցման գաղափարը սկսեց կոնկրետ ուրվագծեր ստանալ 1996թ., երբ դրա իրականացման համար ԱՄՆ նախաձեռնությամբ ստեղծվեց *PSG* միջազգային կոնսորցիումը՝ *General Electric-ի, Bechtel National-ի* և *Shell-ի* մասնակցությամբ:

Նախնական պլաններում դրա հզորությունը պետք է կազմեր տարեկան 30 մլրդ մ^3՝ 16 մլրդ Թուրքիային և 14 մլրդ եվրոպական շուկային գազ մատակարարելու համար: Սակայն շինարարության պայմանների շուրջ համաձայնության չգալու պատճառով 2000թ. նախագծի աշխատանքները դադարեցվեցին:

Նախագիծը պարբերաբար փորձում են վերակենդանացնել ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ տարածաշրջանային դերակատարները: Այսպես, 2006թ. *Nabucco-ի* համար նոր (Իրանին այլընտրանքային) մատակարարներ գտնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Թուրքիան նախաձեռնեց դրա քննարկումը, որը պաշտպանեցին Ադրբեջանը և Թուրքմենստանը, իսկ ավելի ուշ հետաքրքրություն ցուցաբերեց նաև Ղազախստանը:

Տեխնիկապես նախագիծը միանգամայն իրականանալի է, սակայն դրա իրագործման համար հիմնական և դժվարհաղթահարելի խոչընդոտներ են համարվում ոչ թե տեխնիկական, այլ էկոլոգիական, և որ գլխավորն է՝ քաղաքական խնդիրները, մասնավորապես հետևյալները.

- Կասպից ծովի «փխրուն» էկոլոգիական համակարգը, տարածաշրջանի բարձր սեյսմիկ վտանգավորությունը, ինչը նավթի և գազի տարանցման անդրկասպյան երթուղիների հանդեպ էկոլոգների և «կանաչների» կուսակցությունների անբարեհաճությունն է առաջացնում, ընդ որում՝ ոչ միայն հենց տարածաշրջանում, այլ նաև Եվրոպայի երկրներում,
- Կասպից ծովի անորոշ կարգավիճակը,
- տարածքային վեճերի առկայությունը Ադրբեջանի և Թուրքմենստանի, Ադրբեջանի և Իրանի միջև,
- Ռուսաստանի և Իրանի կողմից անդրկասպյան նախագծերին ցուցաբերվող ակտիվ հակազդեցությունը:

Չնայած Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովի մահվանից հետո Բաքվի և Աշգաբադի միջև հարաբերությունների որոշ ջերմացմանը, Աշգաբադի[1] ավելի բաց քաղաքական գծին և միջազգային տարբեր նախագծերին ներգրավվածությանը, առայժմ ոչ մի էական տեղաշարժ չկա Հարավային Կասպիայի կենտրոնական հատվածի նավթի ու գազի հանքավայրերի (որոնց հավակնում են և՛ Ադրբեջանը, և՛ Թուրքմենստանը) պատկանելության շուրջ վեճի լուծման և մշակման հեռանկարների հարցում:

Ս.թ. հուլիսի 24-ին Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովը հայտարարեց, որ փոխադարձ ընդունելի լուծումների որոնումն ու մշակումը հիմնականում կասեցվում են Ադրբեջանի (որը միակողմանիորեն արդեն սկսել է վիճելի գազա- և նավթավայրերի՝ «Օմարի» և «Օսմանի» մշակումը)

[1] 2008թ. մայիսի 19-20-ին, ավելի քան տասնամյա ընդմիջումից հետո, պաշտոնական այցով Բաքու այցելեց Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը:

հատուկ դիրքորոշման և «Սերդար» հանքավայրի (ադրբեջանական անվանումը՝ «Քյափազ») հանդեպ հավակնությունների պատճառով: Նա ընդգծեց, որ դեռ ԽՍՀՄ ժամանակներից առկա բոլոր նորմատիվային փաստաթղթերում հստակ սահմանված է, որ այդ հանքավայրերը գտնվում են Թուրքմենստանի տարածքում: Ինչպես նաև նախազգուշացրեց վիճելի տեղամասերում աշխատող միջազգային կազմակերպություններին, որ եթե Միջազգային արբիտրաժային դատարանը բավարարի Աշգաբադի համապատասխան հայցը, Թուրքմենստանը հենց նրանցից կպահանջի փոխհատուցել վնասը:

Ավելին, իր նավթագազային շահերը պաշտպանելու նպատակով Աշգաբադը մտադիր է Կասպիայում ռազմածովային կայան ստեղծել:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ եթե վիճելի հանքավայրերի համատեղ շահագործման համաձայնագրերը երբևէ կնքվեն, նավթագազատարներն առկա ադրբեջանական խողովակաշարային ենթակառուցվածքից Թուրքմենստանի կողմը կձգվեն ևս 35-40 կմ-ով: Եվ գազատարների թուրքմենական համակարգին այդ հանքավայրերի կցումից հետո, փաստորեն, կստեղծվի դրանց անդրկասպյան ցանցը: Այս պարագայում Անդրկասպյան գազատարի՝ որպես արդեն գործող անդրկասպյան համակարգի ընդլայնման նախագծի, կառուցման հնարավորությունները կտրուկ կաճեն:

Ռուսաստանի խողովակաշարային քաղաքականությունը

Կենտրոնական Ասիայի գազի պաշարների նկատմամբ Եվրոպայի և ԱՄՆ հետաքրքրությունն առաջ բերեց Ռուսաստանի ակտիվությունն այս ուղղությամբ:

«Երկնագույն հոսք» գազատարի անցկացման (ռուսական գազը Սև ծովի հատակով դեպի Թուրքիա արտահանելու համար) հաջող ավարտը մեկնակետ հանդիսացավ, որպեսզի Մոսկվան լոբբիի ենթարկի համանման նախագծի՝ «Հարավային հոսքի» (ուղղակի՝ առանց միջնորդների, գազը ԵՄ մատակարարելու համար) իրականացումը:

2007թ. հունիսին Հռոմում իտալական *ENI* ընկերությունը և ռուսական «Գազպրոմը» համաձայնագիր ստորագրեցին դրա շինարարության մասին: $10 մլրդ արժողության գազատարը պետք է Ռուսաստանից, Սև ծովի հատակով, գազ առաքի դեպի Բուլղարիա, որտեղ հիմնական հոսքը կբաժանվի երկու ճյուղի. մեկը Ռումինիայով և Հունգարիայով կգնա մինչև Վիեննային (նաև *Nabucco-ի* վերջին կետն է) մոտ գտնվող ավստրիական Բաումգարտեն քաղաքի գազաբաշխիչ կենտրոն, մյուսը՝ Հունաստանի և Իտալիայի միջով:

ԵՄ էներգետիկայի հարցերով հանձնակատար Անդրիս Պիեբալգսի կարծիքով՝ «Հարավային հոսքը» *Nabucco-ի* այլընտրանքը չէ, քանի որ դրանց ընդհանուր հզորությունը շատ ավելի փոքր է, քան առաջիկա տասնամյակներում, Եվրամիության կանխատեսումներով, սպասվող պահանջարկի աճը[1]:

[1] *G.Chazan,* Russia Outflanks EU's Pipeline Plan. Wall Street Journal, 16 June, 2008.

Սակայն Մոսկվան, ինչպես երևում է, այս հաշվով ուղիղ հակառակ կարծիքի է, ինչի մասին վկայում է այն հաստատամտությունը, որով Ռուսաստանը «սեղմում» էր գործընկերային համաձայնագրերի կնքումը Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի հետ, և զիջումների այն մակարդակը, որին ստիպված էր դիմել (հիմնականում տարանցման սակագների և նախագծում ազգային ընկերությունների մասնակցության բաժնի հարցերով):

ԵՄ տնտեսական «ծանրքաշայիններին» գազային ոլորտում համագործակցության մեջ ներգրավելու հարմար Ռուսաստանը մեծ խաղադրույք է կատարում. ֆրանսիական *Electricite de France-ի* (EdF)[1]՝ «Հարավային հոսք» նախագիծ ընդգրկվելու սկզբունքային պայմանավորվածություն ձեռք բերելուն զուգընթաց, ինտենսիվ բանակցություններ են վարվում «Հյուսիսային հոսք» նախագիծն իրականացնող կոնսորցիումում (որտեղ «Գազպրոմն» արդեն աշխատում է գերմանական *E.On-ի,* հոլանդական *Gasunie-ի* և *BASF* խմբի հետ) մեկ այլ ֆրանսիական ընկերության՝ *Suez-Gaz de France*-ի[2] ընդգրկվելու մանրամասների շուրջ:

Եվ այնուամենայնիվ, եվրոպական սպառողին գազ մատակարարելուն միանալը և՛ «Հարավային հոսքի», և՛ «Հյուսիսային հոսքի» միջոցով կեղծ դիվերսիֆիկացում է, քանի որ հումքի աղբյուրը և մատակարար ընկերությունը մնում են նույնը: Միակ, թեև էական, տարբերությունն այն է, որ ԵՄ երկրներ Ռուսաստանից գազի մատակարարումը կբացառի տարանցող երկրներին:

[1] Պետությունը վերահսկում է ընկերության բաժնետոմսերի 70%-ը. խոսքը «Հարավային հոսք» նախագծում 10%-ից մի փոքր ավելի բաժնի մասին է:
[2] Ընկերության բաժնետոմսերի 35%-ը վերահսկում է պետությունը:

Nabucco-ն անհանգստացնում է Մոսկվային ոչ միայն նրա համար, որ ռուսական երթուղիների համար կենտրոնասիական գազը Եվրոպա հասցնելու այլընտրանքային նախագիծ է, այլ նաև մրցակից է գազ արտադրող երկրներից (որոնց ռեսուրսների բազան բավականաչափ ուսումնասիրված չէ և անկախ աուդիտ է պահանջում, իսկ արտահանական պոտենցիալի հայտարարված տեմպերը կասկածներ են առաջացնում) գազ գնելու գործում:

Կենտրոնական Ասիայի գազն օգտագործող այլընտրանքային գազատարների կառուցումը կանխելու համար Ռուսաստանին անհրաժեշտ է.

- տեղի արտադրողների հետ երկարատև պայմանագրերի կնքման միջոցով պարփակել տարածաշրջանում արտադրվող գազի որքան հնարավոր է մեծ ծավալներ,
- համարժեք հզորություններ տրամադրել կենտրոնասիական գազի առկա և հեռանկարային ծավալները Եվրոպայի երկրներ տարանցելուն, ինչի համար անհրաժեշտ է ընդլայնել առկա գազատարները և նորերն անցկացնել, որոնք կմիացնեն արտադրող երկրների հանքավայրերը ռուսական մայրուղային գազատարներին,
- արտադրող ընկերություններին առաջարկել հրապուրիչ գնային և տարանցման քաղաքականություն,
- պայմանագրեր կնքել տարածաշրջանում գազի արդյունահանման սպասվող ծավալների շուրջ,
- ընդլայնել մասնակցությունը համատեղ գազարդյունահանման և գազափոխադրման նախագծերում:

Այս խնդիրները լուծելու համար 2007թ. դեկտեմբերի 20-ին, ավելի վաղ Ռուսաստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Ղազախստանի միջև ստորագրված[1] համատեղ Հռչակագրի հիման վրա, համաձայնագիր կնքվեց «Մերձկասպյան գազատարի շինարարության գործում համագործակցության» մասին, որում նշվում էին նախագծի մշակման ընդհանուր հարցերը:

Գալով ընդհանուր համաձայնության այն հարցում, որ գազատարի կառուցումը պետք է ավարտվի մինչև 2010թ. վերջը, իսկ գազի առքուվաճառքի և տեղափոխման ծավալների հետ կապված պարտավորությունները պետք է կնքվեն ոչ պակաս, քան 15 տարի ժամկետով, կողմերն անցան նախագծի գործնական իրականացմանը՝ անգամ անտեսելով այն, որ մանրամասները բավարար չափով չեն մշակված:

Ըստ էության, Մերձկասպյան գազատարը «Բելեք» կոմպրեսորային կայանից (թուրքմենական Թուրքմենբաշի քաղաքից ոչ հեռու) մինչև ռուսական գազաչափիչ «Ալեքսանդրով Գայ» կայանը (Սարատովի մարզ) ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ արդեն գործող Օկարեմ-Բեյնեու գազափոխադրման համակարգի արդիականացում՝ տարեկան 4,2 մլրդ մ^3 թողունակությամբ, որը թուրքմենական գազահանքերը միացնում է «Միջին Ասիա-Կենտրոն» մայրուղուն: Սրանով է մասնավորապես որոշվում դրա ցածր արժեքը (մոտ $1 մլրդ): Ենթադրվում է, որ վերակառուցման առաջին փուլում՝ 2008-2010թթ., դրա թողունակությունը կհասնի 10 մլրդ մ^3-ի, իսկ երկրորդում՝ 2015-2017թթ., կհասնի տարեկան 30 մլրդ մ^3-ի:

Անգամ ողջ գազն արտահանելու դեպքում Մերձկասպյան երկրները չեն կարողանա լցնել նոր խողովակները, եթե վառելիքի արդյունահանումը չավելացնեն 1,5 անգամ:

Աղբյուրը՝ Caspian World Research, «Нефтегазовая вертикаль»

[1] Տաշքենդում՝ 2007թ. մայիսի 9-ին, Թուրքմենբաշիում՝ մայիսի 12-ին:

Այս նախագծի շրջանակներում «Թուրքմենգազը» պարտավորվել է «Գազպրոմին» մատակարարել տարեկան 10 մլրդ մ^3, Ղազախստանը՝ 10 մլրդ, աստիճանաբար մատակարարումներն ավելացնելով մինչև 20 մլրդ մ^3-ի:

Բացի այդ, Ռուսաստանը ծրագրում է հզորացնել «Միջին Ասիա-Կենտրոն» գազատարը՝ տարեկան 12 մլրդ մ^3-ից հասցնելով 62 մլրդ մ^3-ի:

Այսպիսով, Թուրքմենստանի, Ղազախստանի և Ուզբեկստանի գազատրանսպորտային համակարգի՝ դեպի Ռուսաստան կողմնորոշված ընդհանուր թողունակությունը կկազմի տարեկան 92 մլրդ մ^3: Ռուսաստանցի փորձագետների կարծիքով՝ այդ հզորությունները կբավականացնեն, որպեսզի Ռուսաստանը կատարի ավելի վաղ ստանձնած պարտավորությունները և կենտրոնասիական գազի տարանցման վերաբերյալ նոր կնքած պայմանագրերը:

Մերձկասպյան գազատարի շուրջ համաձայնագրի կնքումն արագացնելու համար Մոսկվան նույնպես ստիպված էր որոշ զիջումների գնալ: Կարծում ենք՝ դրա հետ են կապված.

- այն, որ Ռուսաստանն ավելի մեծ զիջողականություն է դրսևորում Կասպյան խողովակաշարային կոնսորցիումի (ԿԽԿ) նավթամուղի ընդլայնման հարցում (Մոսկվայի այն երկյուղների հետ մեկտեղ, որ հետագայում կավելանան Ղազախստանի նավթի արտահանման ծավալները անդրկասպյան տանկերային երթուղով դեպի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի տերմինալներ),
- համաձայնությունը, որ Ղազախստանը մասնակցի Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նավթամուղի շահագործմանը,
- համաձայնությունը, որ 2008թ. բարձրանա Թուրքմենստանի և Ղազախստանի գազի գնման գինը:

Ավելին, 2008թ. մարտին Մոսկվան դիմեց աննախադեպ քայլի. Ղազախստանը և Թուրքմենստանը պահանջեցին վերանայել գազի գնման գները, և Մոսկվան համաձայնեց ոչ միայն բարձրացնել դրանք 2008թ. հունվարի 1-ից (համապատասխանաբար՝ մինչև $190 և 140), այլև ինքն էլ հանդիպական առաջարկություն արեց 2009թ. հունվարի 1-ից այդ երկրների գազը գնել՝ ելնելով շուկայական, միջինեվրոպական գներից՝ հանելով փոխադրածախսն ու շահույթի բանական նորմերը:

Բայց 2009թ. հունիսին, ուշադրության առնելով անդրկասպյան գազատարի անիրական հեռանկարները, գնահատելով Իրան և Չինաստան գազի արտահանման գծով Թուրքմենստանի՝ պարտավորություններով ծանրաբեռնվածությունը և օգտվելով «Միջին Ասիա-Կենտրոն - 4»[1] խողովակաշարի

[1] 2009թ. ապրիլի 9-ին «Միջին Ասիա-Կենտրոն – 4» գազատարում տեխնիկական խափանում էր առաջացել ռուսական և թուրքմենական կողմերի չհամաձայնեցված գործողությունների պատճառով:

վթարից, Ռուսաստանն սկսեց ճնշում գործադրել Աշգաբադի վրա «Գազպրոմին» մատակարարվող գազի գների իջեցման հարցի վերանայման և նոր փոխհամաձայնեցված բանաձևով դրանք հաշվելու հետ կապված:

Չնայած ի պատասխան Թուրքմենստանն ակտիվացավ իր մասնակցությունն այլընտրանքային՝ *Nabucco* նախագծին առաջ մղելու հարցում, կողմերը, այնուամենայնիվ, նոր համաձայնագիր կնքեցին, և վերսկսվեց գազի մատակարարումը ՌԴ-ին լրիվ ծավալով:

Ռուս-թուրքմենական հարաբերությունների անսպասելի լարման ֆոնին դարձյալ ակտիվացան *Nabucco-ի* շինարարության կողմնակիցները, ինչը հանգեցրեց 2009թ. օգոստոսի 13-ին Անկարայում համաձայնագրի ստորագրմանը տարանցող երկրների (Թուրքիա, Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա և Ավստրիա) կողմից նախագծի իրականացման մասին:

Սակայն, չնայած նրանց ջանքերին, գազի մատակարարման աղբյուրների հարցն առայժմ այդպես էլ լուծված չէ. 2009թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ոչ մի համաձայնագիր *Nabucco-ն* գազով մատակարարելու մասին չի կնքվել: Թեև, ԵՄ էներգետիկայի հարցերով հանձնակատար Անդրիս Պիեբալգսի խոսքերով՝ €7,9 մլրդ-ի չափով ներդրումները գազատարի շինարարության մեջ կարդարացվեն տարեկան անգամ 7-8 մլրդ մ^3 գազի մատակարարման մակարդակին հասնելու դեպքում[1]:

Այսպիսով, թերևս, հավակնոտ եվրոպական նախագծի միակ իրական գազամատակարար կարող է դառնալ միայն Իրանը, ինչպես և, ի դեպ, ենթադրվում էր նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումներում՝ դրա մշակման փուլում:

Ամենայն հավանականությամբ, վերջին 2-3 տարիներին նկատվող իրարանցումը Եվրոպային մատակարարվող ռուսական գազի համար այլընտրանքային երթուղիների անհրաժեշտության շուրջ ի սկզբանե պատրվակ էր Իրանի նախագծին աստիճանաբար վերադառնալու համար: Մանավանդ որ ԵՄ-ը ներկա պահին կարող է շահավետորեն օգտվել Թեհրանի հետ հարաբերությունները կարգավորելու համար ստեղծված հնարավորությունից՝ այն ֆոնին, երբ Վաշինգտոնը, Սպիտակ տանը նոր վարչակազմի հայտնվելուց հետո, փոխել է չափազանց կոշտ հռետորականությունը նրա հանդեպ:

[1] Բաքվում 2009թ. սեպտեմբերին Ա.Պիեբալգսի ելույթը Կասպյան-Եվրաինտեգրման գործարար ակումբի *(CEIBC)* անդամների հետ հանդիպմանը, http://www.oilcapital.ru/news/2009/09/151627_144154.shtml

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԱՄՆ-ԻՐԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Վահե Դավթյան

Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի խաչաձևումը հարավկովկասյան տարածաշրջանում այն գլխավոր գործոններից է, որն ազդում է Հայաստանի էներգետիկ անվտանգության ձևավորման և ապահովման վրա: Սկսած ԽՍՀՄ փլուզումից ընդհուպ մինչև մեր օրերը Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իրանի և այլ պետությունների մշտական մրցակցությունը՝ ուղղված տարածաշրջանում իրենց քաղաքական և տնտեսական դիրքերի ամրապնդմանը, այս կամ այն կերպ ազդել և շարունակում են ազդեցություն գործել Հայաստանի Հանրապետության կայուն էներգահամակարգի ձևավորման վրա:

Այս մրցակցության հետևանքով առաջ եկած հարցերն ու խնդիրները մանրակրկիտ դիտարկում են պահանջում:

Այսօր Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Իրանը հարկավոր է դիտարկել որպես յուրատեսակ աշխարհաքաղաքական եռանկյունու տարբեր անկյուններ, որի կողմերը միևնույն նպատակն են հետապնդում. անմիջական ազդեցություն ունենալ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական կառույցի կայացման վրա: Իրանն, ընդ որում, եռանկյունու վերին գլխավոր անկյունն է, քանի որ հենց այդ պետության միջոցով են և՛ Ռուսաստանը, և՛ ԱՄՆ-ը ջանում իրականացնել իրենց աշխարհաքաղաքական ռազմավարությունը տարածաշրջանում: Ինչ վերաբերում է հենց իր՝ Իրանի դիրքորոշմանը, ապա վերջինը, անշուշտ, հետապնդելով սեփական շահերը տարածաշրջանում (դրանց մասին կխոսենք ստորև), առայժմ հանդես է գալիս որպես յուրատեսակ հարթակ երկու գերտերությունների միջև վեճերի համար, ավելի ճիշտ՝ «կռվախնձորի» դեր է խաղում նրանց միջև: Սակայն ստեղծված իրավիճակի փոքրիշատե հանգամանալի վերլուծությունը ցույց է տալիս, որ Իրանը հավակնում է տարածաշրջանային գերտերության դերին և միանգամայն հավակնոտ նպատակներ է հետապնդում: Դրան շատ բանով նպաստում է երկրում ածխաջրածնի պաշարների մեծ քանակության առկայությունը: Ինչպես հայտնի է, երկիրը երկրորդն է աշխարհում բնական գազի պաշարներով, որոնք գնահատվում են 21 տրլն մ^3, այսինքն՝ համաշխարհային պաշարների 14%-ն են կազմում:

Անդրադառնալով, մասնավորապես, Ռուսաստանի և Իրանի շահերի բախմանը Հարավային Կովկասում՝ նշենք, որ այս երկու պետությունների մրցակցությունը խոր պատմական արմատներ ունի: XVIII-XIX դարերում Կասպից ծովում այն ժամանակ գլխավոր տերությունների՝ Ռուսաստանի և Պարսկաստանի հարաբերությունները կարգավորվում էին երկկողմ միջպետական պայմանագրերով, որոնք փոփոխվում էին միջազգային իրադարձություններից կախված: Սակայն ընդհանուր առմամբ դրանք նպաստում էին ռուսական շահերի պաշտպանությանը: 1813թ. կնքվեց Գյուլիստանի պայմանագիրը, որով Պարսկաստանը հաստատեց, որ հրաժարվում է Արևելյան Վրաստանի, Դաղստանի, որոշ արևելահայկական տարածքների, այդ թվում և Ղարաբաղի նկատմամբ իշխանությունից, իսկ 1828թ. կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը: Վերջինն ամփոփում էր 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը, որն ավարտվել էր Ռուսաստանի հաղթանակով, և որից հետո Արևելյան Հայաստանը մտավ նրա կազմի մեջ:

Հարավային Կովկասի երկրների և Ռուսաստանի հետ ժամանակակից Իրանի վարած դիվանագիտությունն ունի այն առանձնահատկությունը, որ համագործակցություն է հաստատվում ռազմական, էներգետիկ, տրանսպորտային և այլ ոլորտներում: Ռուսաստանը և Իրանն այսօր ակտիվորեն քննարկում են համագործակցության հեռանկարները և իրականացնում երկու կողմերի համար էլ կարևոր նշանակություն ունեցող մեծ նախագծեր: Սակայն կարելի՞ է արդյոք Ռուսաստանի և Իրանի կողմից իրականացվող նախագծերն անվանել լիարժեք և բաց համագործակցության դրսևորումներ: Չկա՞ արդյոք մրցակցության տարր, որը հաճախ բավական կոշտ բնույթ է ստանում: Այստեղ ի՞նչ դեր է խաղում ամերիկյան գործոնը: Եվ, վերջապես, ի՞նչ է ստանում (կամ կորցնում) Հայաստանն այդ համագործակցության արդյունքում:

Դիտարկենք հայ-իրանա-ռուսական մի քանի առավել նշանակալի նախագծեր:

1995թ. Իրանի և «Հայգազպրոմ» պետկոնցեռնի միջև ստորագրվեց պայմանագիր, որով նախատեսվում էր ամեն տարի 1 մլրդ մ³ իրանական երկնագույն վառելիք մատակարարել Հայաստանին 15 տարվա ընթացքում: Սակայն անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների բացակայության հետևանքով նախագիծը երկար ժամանակ մնում էր թղթի վրա: Միայն 2005թ. Հայաստանի Հանրապետությունը և իրանական *«SANIR»* գազային ընկերությունը պայմանագիր ստորագրեցին Մեղրի-Քաջարան գազատարի առաջին 42 կիլոմետրանոց տեղամասի շինարարության մասին: Նախագծի նախնական փուլի իրականացման համար Իրանի արտահանման զարգացման բանկը *(Iran's Export Development Bank)* տրամադրեց անհրաժեշտ վարկը: Գազատարի առաջին տեղամասի բացումը տեղի ունեցավ 2007թ. մարտին: Սակայն 42 կմ երկարու-

թյուն ունեցող գազատարն ի վիճակի չեղավ անհրաժեշտ ծավալի գազով ապահովել երկրի ջերմաէլեկտրակայանները: Դրանից ելնելով՝ գազատարի նոր՝ 197,4 կմ տեղամասի շինարարության անհրաժեշտություն առաջացավ, որի իրականացման համար «ՀայՌուսգազպրոմ» ՓԲԸ-ն կատարեց անհրաժեշտ հետազոտական, նախագծային և շինարարական աշխատանքները: Ներկայումս գազատարի երկրորդ տեղամասն արդեն կառուցվել և գործարկվել է:

Գազատարի առաջին տեղամասի շինարարության սկսվելուն պես առաջատար հայ փորձագետներն ու քաղաքական գործիչներն անմիջապես սկսեցին խոսել Հայաստանի տարածքով երրորդ երկրներ իրանական գազի տարանցման հնարավորության մասին: Ենթադրվում էր իրականացնել հետևյալ երթուղին. Հայաստանի տարածքով տարանցվող իրանական գազը պետք է ուղղվի Վրաստան և հետո Սև ծովի հատակով՝ Ուկրաինա և մի շարք եվրոպական երկրներ:

2005թ. փետրվարին Դաշնության խորհրդի հանձնաժողովի նիստին «Գազպրոմ» ԲԲԸ վարչության փոխնախագահ Ալեքսանդր Ռյազանովը հայտարարեց, որ Իրան-Հայաստան գազատարը կարող է մրցակցություն ստեղծել ռուս-թուրքական «Երկնագույն հոսք» գազային նախագծին: «Եթե «Գազպրոմը» չմասնակցի Իրան-Հայաստան գազատարի կառուցմանը, ապա հայտնի չէ, թե ուր կգնա այդ գազը»,- մեկնաբանեց Ա.Ռյազանովը [1]: Հիշեցնենք, որ «Երկնագույն հոսքը» պատկանում է *"Blue Stream Pipeline BV"* ընկերությանը՝ հանձին «Գազպրոմ» և *ENI* իտալական կորպորացիայի ՀՁ-ի: «Երկնագույն հոսքի» հիմնական մրցակից է համարվում եվրոպական *Nabucco* նախագիծը, որը նախատեսված է որպես Ռուսաստանը շրջանցող և ԵՄ երկրների կախվածությունը ռուսական էներգառեսուրսներից նվազեցնող գազատար: Նախնական գնահատականներով՝ նախատեսվում է գազատարը գործարկել 2014թ.: Ակնհայտ է, որ «Գազպրոմ» ԲԲԸ-ն, պետական կորպորացիա լինելով, չէր ցանկանա, որ այուժեն նման զարգացում ստանար: Հիշեցնենք, որ *Nabucco* նախագծի գլխավոր նախաձեռնողը ամերիկյան կողմն է, ինչը դարձյալ վկայում է բարդ և բազմավեկտոր աշխարհաքաղաքականության առկայության մասին: Սկզբում ենթադրվում էր, որ գազատարը պետք է գազն արտահանի Ադրբեջանից, Կենտրոնական Ասիայից, Եգիպտոսից և Իրաքից: 2005թ. Իրաքը դուրս մնաց նախագծից՝ որպես անկայուն գոտի: Ինչ վերաբերում է կենտրոնաասիական երկրներին և Ադրբեջանին, ապա վերջինները, Ռուսաստանի ակտիվ արտաքին քաղաքականության հետևանքով, առայժմ չեն կարողանում կողմնորոշվել նախագծին մասնակցության հարցում: Ակնհայտ է դառնում, որ հենց Իրանի մասնակցությունը *Nabucco-ին* քիչ թե շատ իրական ուրվապատկեր կհաղորդի: Նախագծին Իրանի մասնակցության գաղափարն ակտիվորեն առաջ է մղում նաև Թուրքիան: 2009թ. սկզբին Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանը

Բրյուսելում հանդես եկավ հայտարարությամբ, որ *Nabucco* նախագիծը ոչ մի իմաստ չի ունենա առանց իրանական կողմի մասնակցության: Կարելի է ենթադրել, որ Արևմուտքի համար ստեղծված հիմնախնդրի լուծման հենց այս մոտեցումը ստիպեց Բ.Օբամային ԱՄՆ նախագահ ընտրվելուց անմիջապես հետո Իրանի հետ գործընկերային հարաբերությունների հաստատման պատրաստակամություն հայտնել: Սակայն նախագծին Թեհրանի մասնակցության շուրջ պաշտոնական բանակցությունները դեռ չեն սկսվել: Սա, մեր կարծիքով, կապված է ռուս-ամերիկյան հարաբերությունների կարգավորման հարցի հետ: Ռուսաստանի և Իրանի միջև էներգետիկ, ռազմական և այլ ոլորտներում համագործակցության ակտիվացմանը հետևելով և հասկանալով, որ Իրանում 2009թ. հունիսին կայացած նախագահական ընտրություններում ամերիկամետ թեկնածու Միրհոսեյն Մուսավին պարտվել է, ԱՄՆ-ը ստիպված այսօր Ռուսաստանին առաջարկում է հարաբերությունների «վերալցարկման» սցենարը[1]: Դա հատկապես երևաց 2009թ. հուլիսին նախագահ Բ.Օբամայի Մոսկվա կատարած պաշտոնական այցելության ժամանակ:

«Կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքականությունը» հետազոտության հեղինակների կարծիքով՝ «Իրանի տարածքը խողովակաշարերի անցկացման համար օգտագործելու շատ երկրների շահագրգռությունը զսպվում է ԱՄՆ-ի կողմից, որը, ոչ անհիմն, կարծում է, որ այդ երկրի հարավում առկա ածխաջրածնային հումքի հսկայական պաշարները և շահավետ աշխարհագրական դիրքը կհանգեցնեն Թեհրանի ազդեցության կտրուկ բարձրացմանը Կասպյան տարածաշրջանում, հետևաբար՝ լուրջ աշխարհաքաղաքական փոփոխություններ առաջ կբերեն»:

«Հետևաբար,- շարունակում են հեղինակները,- Ռուսաստանի երկարաժամկետ հետաքրքրություններն այն են, որ Իրանը լինի իր տարածաշրջանային դաշնակիցներից մեկը» [2]: Եվ այսպես, իրանական գործոնի նշանակալիությունը Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև բարդ աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործում ակնհայտ է: Իրանն, իր հերթին, նույնպես գիտակցում է իր նշանակալիությունն այդ բարդ աշխարհաքաղաքական խաղում և հաջողությամբ օգտվում է դրանից:

Հայ քաղաքական դաշտում տեսակետ կա, թե Հայաստանը որոշակի շանսեր ունի դառնալու *Nabucco* նախագծի անդամ: «Հայ-թուրքական երկխոսության կարգավորման և Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունների ակտիվացման պայմաններում կարող է տպավորություն ստեղծվել, թե հնարավոր է, որ *Nabucco* գազատարն անցնի Հայաստանի տարածքով» [3],- գրում է քաղաքա-

[1] 2009թ. մարտի 6-ին Ժնևում ՌԴ ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովի հետ կայացած հանդիպման ժամանակ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը նրան նվիրեց խորհրդանշական մի նվեր՝ կարմիր կոճակ «Վերալցարկում» մակագրությամբ:

գետ Ս.Սարուխանյանը: Հեղինակի կարծիքով՝ արդի փուլում արդեն կարելի է խոսել *Nabucco-ին* Հայաստանի միանալու մասին: Իհարկե, մի վերապահմամբ, որ անգամ ձախողման դեպքում քաղաքական երկխոսության ակտիվացումն այդ ուղղությամբ Հայաստանին կարող է որոշակի դիվիդենդներ տալ:

Վերադառնալով Իրան-Հայաստան գազատարին՝ նշենք, որ նրա տարանցիկ չլինելը հիմնականում պայմանավորված էր հենց վերը նշված հանգամանքներով, որոնք ստեղծվել էին «Իրան-Հայաստան-Երկնագույն հոսք-*Nabucco*» սխեմայի շուրջ: Ավելին, Իրան-Հայաստան գազատարը դիտարկվում էր որպես այսպես կոչված հյուսիսային գազատարի (որով ռուսական գազը Հայաստանին էր մատակարարվում Վրաստանի տարածքով) մրցակից: Հիշեցնենք նաև այնպիսի ոչ անկարևոր հանգամանքի մասին, ինչպիսին գազատարի տրամագծի նեղացումն է. այն 1.4 մ-ից հասցվեց 70 սմ-ի:

Գազատարը գործում է յուրատեսակ բարտերային եղանակով. Իրանից եկող բնական գազը Հրազդանի և Երևանի ՋԷԿ-երում վերամշակվում է էլեկտրաէներգիայի, որն իր հերթին արտահանվում է Իրան: Այսպես, 1 մ^3 իրանական գազի համար Հայաստանը վճարում է 3 կվտ/ժ էլեկտրաէներգիա: Նշենք, որ դեռ Խորհրդային Միության ժամանակներում Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգը նախատեսված էր որպես էներգիայի ավելցուկ ունեցող համակարգ, այնինչ Հայաստանի հարևան երկրները (Թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանը, Իրանը, Իրաքը) առ այսօր էլեկտրաէներգիայի սուր պակաս ունեն:

Եվ այսպես, Իրանը հնարավորությունների սահմաններում փորձում է իր էներգետիկ պոտենցիալն օգտագործել զուտ քաղաքական նպատակներով: «Թեհրանը, որի շուրջ էլ ավելի է սեղմվում ամերիկյան շրջապատի (Իրաք, Աֆղանստան, Պակիստան, հետագայում, հնարավոր է, նաև Ադրբեջան) օղակը, փորձում է թույլ չտալ, որ Անդրկովկասը վերածվի ամերիկյան և ՆԱՏՕ շահերի ազդեցության ոլորտի... Այս համատեքստում էներգետիկ դիվանագիտությունը Թեհրանը դիտարկում է որպես ընդհանուր ռազմավարական գծի իրագործման կարևոր գործիք» [4],- գրում է Ա.Վարդանյանը «Իրանի էներգետիկ դիվանագիտությունը Անդրկովկասյան տարածաշրջանում» հոդվածում: Ասվածին կարելի է ավելացնել, որ Իրան-Հայաստան գազատարը երկար ժամանակ Իրանի կողմից դիտարկվում էր որպես նշյալ ռազմավարական գծի իրականացման էական տարր: Սակայն իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ գազատարը կորցրել է աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական նշանակությունը, որն ուներ սկզբում:

Չնայած Իրան-Հայաստան գազատարն այդպես էլ տարանցիկ չդարձավ, այնուամենայնիվ, արժե գնահատել նրա դերը Հայաստանի էներգետիկ անվտանգության կայացման գործում: Այն թույլ տվեց դիվերսիֆիկացնել հանրապետության էներգետիկ համակարգը, որն ինքնատիպ էներգետիկ կախվածության

մեջ էր հարևան Վրաստանից, որի տարածքով է տարիներ շարունակ անցնում Հայաստանը բնական գազով ապահովող միակ գազատար միջանցքը:

Իրան-Հայաստան գազատարը միակ նախագիծը չէ, որ այսօր իրականացնում են իրանական, հայկական և ռուսական կողմերը: Հարկ է անդրադառնալ նաև Հայաստանի համար այնպիսի կարևոր նախագծի, ինչպիսին է նավթավերամշակման գործարանը (ՆՎԳ) հայ-իրանական սահմանին, ինչպես նաև սահմանամերձ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցումն ու Թավրիզ-Մեղրի նավթատարի անցկացումը, որ գտնվում է բանակցային փուլում: Կողմերն ակտիվ կապեր են հաստատում նաև այլ էներգետիկ նախագծերի ուղղությամբ:

2007թ. սեպտեմբերի 15-20-ին Մեղրի քաղաքում տեղի ունեցավ իրանցի և ռուս փորձագետների հանդիպում՝ նվիրված ՆՎԳ շինարարության նախագծին: Հանդիպմանը մասնակցում էին նաև Իրանի նավթի և գազի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացուցիչներ: Այս նախագծի իրականացման հիմք էր հանդիսացել Հայաստանի և Իրանի նախագահների որոշումը: Փորձագետների նախնական հաշվարկներով՝ 7 մլն տոննա հզորությամբ ՆՎԳ շինարարությունը Հայաստանի վրա մոտավորապես $600-700 կնստեր [5]:

ՆՎԳ շինարարության մասին որոշման ընդունումից հետո մի շարք քաղաքագետներ և լրագրողներ, վերլուծելով տարածաշրջանում ձևավորված իրավիճակը, սկսեցին խոսել այն մասին, թե Իրանն իր էներգետիկ համակարգը պատրաստում է ԱՄՆ էքսպանսիայի պայմաններում գործելու համար: Նման մոտեցումն, անշուշտ, պայմանավորված է այսօր տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական իրողություններով:

ՆՎԳ շինարարության նախագիծը դարձավ ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի քաղաքական և քաղաքագիտական շրջանակներում ամենից շատ քննարկվող հարցը: Սակայն 2008թ. սեպտեմբերին կայացած ռուս-հայկական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստում հանձնաժողովի ռուս համանախագահ, ՌԴ տրանսպորտի նախարար Իգոր Լևիտինը պաշտոնապես հայտարարեց նավթավերամշակման գործարանի շինարարության անշահութաբերության մասին: Նա նշեց, որ այդ նախագիծը շահավետ չէ, քանի որ առաջին հերթին լուծված չեն սպառման շուկայի, հետևաբար և՝ հումքի մատակարարման հարցերը [6]: Սրանով նախագիծը ժամանակավորապես սառեցվեց: Այսօր, սակայն, Հայաստանի ղեկավարությունը ուղիներ է փնտրում դրա իրականացման համար: Այսպես, 2009թ. մարտին, ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի Թեհրան պաշտոնական այցից հետո, ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Ա.Մովսիսյանը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ ընդունվել է Հայաստանում ՆՎԳ շինարարության իրագործման նախագիծ՝ $250-280 մլն ար-

ժողությամբ: «ՆՎԳ-ն կլինի հայ-իրանական համատեղ ձեռնարկություն: Աշխատանքների առաջին խմբաքանակի իրականացումը՝ նավթամթերքների համար տերմինալի կառուցումը Երասխում և խողովակաշարի անցկացումը Թավրիզից պատրաստի նավթամթերքների մղման համար, կսկսվի արդեն ընթացիկ տարում»,- հայտարարեց նախարարը [7]:

Հայաստանում ՆՎԳ կառուցման անշահութաբերության մասին ռուսական կողմի հայտարարության առնչությամբ տեսակետ կա, թե իր տարածքում նավթավերամշակման գործարան ունեցող Հայաստանը տարածաշրջանում նոր տնտեսական և քաղաքական նշանակություն ձեռք կբերի, ինչը չի համապատասխանում մի շարք պետությունների աշխարհաքաղաքական շահերին:

Անդրադառնանք ոչ պակաս կարևոր մեկ ոլորտի ևս, որը կարող է ներկայացնել տարածաշրջանում էներգետիկ համագործակցության աշխարհաքաղաքական համատեքստը: Հայաստանում, ինչպես նշեցինք, էներգետիկ հանածոներ չկան, և էլեկտրաէներգիայի միակ աղբյուրը, չհաշված ոչ ավանդական աղբյուրները, հիդրոէներգառեսուրսներն են: Հայաստանի պոտենցիալ հիդրոէներգառեսուրսները գնահատվում են 21,8 մլրդ կվտ/ժ մեծությամբ [8]: Այսօր հանրապետության հիդրոէներգետիկ հատվածի մի մասը գտնվում է ռուսական *«Ինտեր РАО ЕЭС»*[1] ընկերության ձեռքին: Չնայած հայկական էներգետիկ շուկայում ռուսական բիզնեսի ակնհայտ մենաշնորհին, Հայաստանի ղեկավարությունը, այնուամենայնիվ, փորձեր է անում դիվերսիֆիկացնել իր էներգետիկ համակարգը՝ ներքին շուկայում օտարերկրյա այլ ընկերությունների ներգրավելու ճանապարհով: Դրանք հիմնականում իրանական ընկերություններն են, որոնք քանիցս ներգրավվել են Հայաստանի հետ համագործակցության մեջ: 2007թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ խորհրդարանը վավերացրեց հայ-իրանական միջկառավարական համաձայնագիրը Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու մասին: Համաձայնագիրը ստորագրվել էր 2007թ. մարտի 19-ին Մեղրի քաղաքում, նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Մահմուդ Ահմադինեժադի հանդիպման շրջանակներում: Պայմանագրի համաձայն՝ նախատեսվում էր վեց տարվա ընթացքում սահմանամերձ Արաքս գետի վրա երկու հիդրոէլեկտրակայան կառուցել. մեկը՝ Հայաստանի, մյուսը՝ Իրանի տարածքում:

Այսօր արդեն ավարտվել է նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակումը. յուրաքանչյուր կայանի նախատեսված հզորությունը կկազմի 130-140 մվտ, իսկ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը՝ 840 մլն կվտ/ժ: Նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումը մշակել են

[1] Հայաստանում *«Ինտեր РАО ЕЭС»-ը* Հայաստանի էլցանցեր ընկերության և Սևան-Հրազդան կասկադ ՀԷԿ-ի բաժնետոմսերի 100%-ի սեփականատերն է, այն տնօրինում է նաև Հայկական ԱԷԿ-ի ֆինանսական հոսքերը:

իրանական «Մեխաբորց» ընկերությունը և ենթակապալառուն՝ հանձին «Հայ-հիդրոնախագիծ» ինստիտուտի:

Նախագծի արժեքն է $250 մլն: Կարելի է ենթադրել, որ *«Ինտեր РАО ЕЭС»* էներգետիկ հսկան, հայկական էներգետիկ շուկայի առանցքային դերակատարներից մեկը լինելով, այսպես թե այնպես կցանկանա մասնակցել նախագծի իրականացմանը: Սակայն արդյո՞ք այն կիրականացվի քաղաքական համատեքստից դուրս, հնարավորինս կբացառվե՞ն արդյոք խոշոր տերությունների աշխարհաքաղաքական շահերը ՀԷԿ-երի կառուցման գործընթացում՝ ցույց կտա իրադարձությունների հետագա զարգացումը: Այսօր արդեն կարելի է ասել, որ մի շարք արևմտյան ընկերություններ հետաքրքրվում են Հայաստանի հիդրոէներգետիկ հատվածով: Այսպես, Հայաստանի ինչպես հիդրո-, այնպես էլ էներգիայի վերականգնվող աղբյուրներով առանձնապես հետաքրքրված է ԱՄՆ-ը, ինչպես նաև մի շարք գերմանական, նորվեգական, հոլանդական, մեծբրիտանական, ուկրաինական և այլ ընկերություններ:

Այսպիսով, ռուս-ամերիկա-իրանական աշխարհաքաղաքական եռանկյունու շրջանակներում ընթացող մրցակցությունն անմիջականորեն ազդում է Հայաստանի էներգետիկ անվտանգության ձևավորման վրա՝ գործընթացին հաղորդելով մերթ դրական, մերթ բացասական երանգներ: Անշուշտ, ցանկացած մրցակցություն առողջ շուկայական հարաբերությունների վկայությունն է: Այսօր արդեն միանշանակ կարելի է խոսել այն մասին, որ ռուսական ընկերությունների գործունեությունը հայկական էներգետիկ շուկայում նպաստում է հանրապետության էներգետիկ արդյունավետության ամրապնդմանը: Սակայն կարելի՞ է արդյոք ուշադրությունը սևեռել միայն տնտեսական արդյունավետության վրա՝ մոռանալով էներգետիկ և դրա հետ մեկտեղ՝ ազգային անվտանգության մասին: Կարծում ենք՝ հարցը պետք է գտնվի այսօր Հայաստանի Հանրապետության ղեկավարության կողմից ընդունվող մի շարք արտաքին և ներքին քաղաքական ու տնտեսական որոշումների հիմքում: Ցանկացած ներդրումային գործունեություն ուղղված է այս կամ այն ոլորտի արդյունավետության բարձրացմանը: Ինչ վերաբերում է այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին անվտանգությունն է (էներգետիկ, ռազմական, գիտատեխնիկական, տեղեկատվական, մշակութային և այլն), ապա այն պետք է բխի առաջին հերթին պետության շահերից: Միայն *անվտանգություն-արդյունավետություն* տանդեմի դեպքում կարող ենք խոսել կոնկրետ ոլորտի զարգացման հնարավոր ուղիների մասին: Ընդ որում՝ անվտանգությունը պետք է համարել բազիս, որի վրա պետք է կառուցվի արդյունավետության համակարգը:

Այսօր Հայաստանի Հանրապետությունն իր էներգետիկ պոտենցիալի իրականացման ուղիներ է փնտրում, ինչը հնարավոր է միայն օտարերկրյա պետական և մասնավոր ընկերությունների հետ ակտիվ համագործակցու-

թյամբ: Դա ենթադրում է փորձի փոխանակում, նոր տեխնոլոգիաների ներդրում, բիզնեսի վարում երկուստեք շահավետ և ընդունելի պայմաններով: Սա, իր հերթին, կհանգեցնի նշված աշխարհաքաղաքական եռանկյունու փոխակերպման աշխարհաքաղաքական քառակուսու՝ Հայաստանի լիարժեք մասնակցությամբ: Կարելի է փաստել, որ Իրան-Հայաստան գազատարի անցկացումը, Արաքս գետի վրա ՀԷԿ-երիի կառուցումը, ՆՎԳ շինարարությունը և այլ համատեղ նախագծեր, դրանց խելամիտ տնտեսական և քաղաքական իրականացման պարագայում, հիմնականում կորոշեն Հայաստանի էներգետիկայի հետագա զարգացումը, ինչպես նաև նրա ինտեգրումը տարածաշրջանային և միջազգային էներգետիկ շուկաներում:

Աղբյուրներ և գրականություն

1. «Новое время», Ереван, 2005, 12 февраля.
2. *Жильцов С.С., Зонн И.С., Ушков А.М.*, Геополитика Каспийского региона, М., Междунар. отношения, 2003.
3. *Саруханян С.,* Газопровод Nabucco и Армения // Энергетическая и региональная безопасность, N 3, с. 3-8.
4. *Вартанян А.М.*, Энергетическая дипломатия Тегерана в Закавказском регионе. - www.iimes.ru/rus/stat/2005/17-10-05.html (Институт Ближнего Востока).
5. *Погосян С.,* Президенты решили: НПЗ в РА – быть! // Базис. – Ереван, август-сентябрь 2007, N 6-7 (20-21), с. 32.
6. www.panorama.am
7. www.IRANnews.com
8. 100 лет энергетике Армении / Под редакцией *Л.В. Егиазаряна* и др. – Ереван: Изд-во «Медиа-Модель», 2003.

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀՆԳՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ» ՀԵՏՈ

Սերգեյ Մինասյան

Հայ-վրացական միջպետական հարաբերությունները 1991թ. երկու երկրների անկախության ձեռքբերումից հետո բավական հագեցած և, միևնույն ժամանակ, բարդ ճանապարհ են անցել: Երկկողմ հարաբերությունների յուրաքանչյուր փուլ վերջին գրեթե երկու տասնամյակում շատ բանով կախված է եղել ինչպես Հայաստանի և Վրաստանի ներքաղաքական, այնպես էլ տարածաշրջանում տիրող ընդհանուր իրավիճակից: Բացառություն չէ նաև հայ-վրացական հարաբերությունների զարգացումը 2008թ. օգոստոսի 8-ից հետո ընկած շրջանում:

Ավելի քան մեկ տարի է անցել Ռուսաստանի և Վրաստանի միջև օգոստոսյան «Հնգօրյա պատերազմից»: Այն լուրջ ազդեցություն է թողել ոչ միայն ռազմական հակամարտության մեջ ներգրավված կողմերի, այլ նաև տարածաշրջանի մյուս երկրների փոխհարաբերությունների վրա: Բնականաբար, այն անդրադարձել է նաև Երևանի և Թբիլիսիի հարաբերությունների վրա՝ էական ազդեցություն գործելով դրանցում նոր միտումների ձևավորման վրա: Սակայն Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների ներկա վիճակի և հեռանկարների վերլուծությունը «Հնգօրյա պատերազմից» հետո ընկած ժամանակաշրջանում անհնար է առանց Հարավային Կովկասում ստեղծված ընդհանուր տարածաշրջանային համատեքստի ընկալման:

Հարավային Կովկասը «Հնգօրյա պատերազմից» մեկ տարի հետո

2008թ. օգոստոսի «Հնգօրյա պատերազմը» փոխեց Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ձևաչափը և արտաքին դերակատարների ներգրավվածության աստիճանը: Մասնավորապես, Մոսկվայի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչմամբ և այդ երկրներն անվերապահորեն իր ազդեցության ոլորտում ներգրավելով Ռուսաստանի համար Հարավային Կովկասի քաղաքական և աշխարհագրական սահմանները նեղացվեցին բացառապես Հայաստանով և Ադրբեջանով՝ շարունակվող և չկարգավորված Ղարաբաղյան հակամարտությամբ հանդերձ: Իր հերթին, վրաց-ռուսական պատերազմից հետո Վրաստանը Ռուսաստանի համար վերածվեց մի ինչ-որ փակ տարածքի, որտեղ Վրաստանի ներքին քաղաքական և

տնտեսական կյանքի վրա ազդելու Մոսկվայի հնարավորությունները հասցվեցին նվազագույնի: Ռուսաստանի համար «քաղաքական-աշխարհագրական» և տեղեկատվական իմաստով Վրաստանն այժմ գտնվում է ինչ-որ տեղ Վաշինգտոնի, Բրյուսելի և Մոսկվայի արանքում: Ուստի, «Հնգօրյա պատերազմից» հետո Ռուսաստանի և Վրաստանի փոխհարաբերությունները փաստորեն արդեն երկկողմանի չեն (հատկապես եթե հաշվի առնենք երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների բացակայությունը): 2008թ. օգոստոսից հետո Մոսկվայի և Թբիլիսիի փոխհարաբերությունների ողջ համատեքստը ներառվեց Միացյալ Նահանգների, ինչպես նաև եվրոպական երկրների ու կառույցների հետ Ռուսաստանի հարաբերությունների ավելի լայն ձևաչափ, որտեղ Վրաստանը թեև զգայուն, բայց ընդամենը փոքր աղյուս էր «Արևելք» (Ռուսաստան) - «Արևմուտք» (ԱՄՆ և Եվրոպա) բարդ քաղաքական շինվածքում:

«Հնգօրյա պատերազմի» արդյունքում Հայաստանը նույնպես բախվեց տարածաշրջանային նոր մարտահրավերների: Տարօրինակ է, բայց օգոստոսյան հաղթական պատերազմից հետո Հարավային Կովկասում Երևանի գլխավոր ռազմաքաղաքական դաշնակցի դիրքերի ամրապնդումն ու ազդեցության մեծացումը միաժամանակ հեռացրին Ռուսաստանին Հայաստանից: Առաջին հերթին լրիվ փակվեց Ռուսաստանը Հայաստանին կապող հաղորդակցային ճանապարհը, որով իրականացվում էր նաև Հայաստանում տեղակայված ռազմակայանի մատակարարումը: Հիշեցնենք, որ Վրաստանի տարածքի՝ որպես տարանցման ճանապարհի, օգտագործման հնարավորությունը Հայաստանում գտնվող ռուսական զորքերի մատակարարման նպատակով նախատեսված էր 2005թ. Մոսկվայի և Թբիլիսիի միջև կնքված պայմանավորվածություններով, որոնք վերաբերում էին ռուսական ռազմակայանները Վրաստանի տարածքից դուրս բերելուն: Հասկանալի է, որ վրաց-ռուսական պատերազմից հետո Հայաստան ռուսական բեռների ռազմական տարանցման հնարավորությունը Վրաստանի տարածքով տեսանելի ապագայում գրեթե անհնար է: Դժվարացել են նաև Ռուսաստանից Հայաստան և հակառակը Վրաստանի տարածքով ոչ ռազմական բեռների փոխադրման պայմանները:

Իսկ Ադրբեջանի, ինչպես նաև Իրանի կամ Թուրքիայի տարածքների օգտագործումը ռուսական ռազմական բեռների Հայաստան փոխադրման նպատակով կապված է քաղաքական դժվարությունների և էլ ավելի բարդ սահմանափակումների հետ, թեև դա լիովին բացառված չէ: Համենայնդեպս, ներկայումս Հայաստանում գտնվող ռուսական 102-րդ ռազմակայանի մատակարարումն իրականացվում է հիմնականում Ադրբեջանի օդային տարածքով: Դա բավական ունիկալ իրավիճակ է Ղարաբաղյան չկարգավորված հիմնախնդրի պայմաններում, նկատի ունենալով այն, որ Հայաստանի և Ադրբեջանի ցամաքային հաղորդակցությունն ընդհատված է 1990-ական թթ. սկզբներից՝ Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման հետևանքով: Սակայն Ռուսաս-

տանի կողմից Ադրբեջանի տարածքը որպես դեպի Հայաստան ռազմական տարանցման ուղի օգտագործելը, բնականաբար, նույնպես իր սահմաններն ու սահմանափակումներն ունի:

Ինչևէ, «Հնգօրյա պատերազմի» հետևանքները և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստներով Ռուսաստանին զգալիորեն հեռացրին Հայաստանից: Մյուս կողմից՝ Երևանում որոշակի լարվածություն առաջ բերեց Ադրբեջանի և Ռուսաստանի մարտավարական «գազային մերձեցումը» 2009թ. գարնան վերջին, որն իր հերթին Բաքվի նյարդային արձագանքն էր հայ-թուրքական մերձեցման գործընթացին և ապրիլի 22-ին Շվեյցարիայում Երևանի և Անկարայի միջև ստորագրված «ճանապարհային քարտեզին»:

Դրա համար էլ բնական է, որ հայ-ռուսական, ադրբեջանա-ռուսական և հայ-թուրքական փոխհարաբերությունների այս դինամիկան չէր կարող չանդրադառնալ Երևանի և Թբիլիսիի փոխհարաբերությունների վրա:

Հայաստանի արտաքին քաղաքական կոմպլեմենտարիզմն ու Վրաստանի հաղորդակցային «ինստրումենտալիզմը»

«Հնգօրյա պատերազմը» Հայաստանի համար ինքնատիպ «թեստ» էր, որը հնարավորություն էր տալիս արդեն որերորդ անգամ հաստատել կոմպլեմենտարիզմի՝ որպես հայկական արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքի, արդյունավետությունը: Ռուսաստանի՝ կարևոր ռազմաքաղաքական դաշնակցի և Վրաստանի՝ սերտ և պատմականորեն մերձավոր հարևանի ու հիմնական հաղորդակցային գործընկերոջ միջև անցած տարվա պատերազմի ընթացքում Հայաստանը (որն այդ ժամանակ, ոչ ավելի, ոչ պակաս, նաև ՀԱՊԿ-ի՝ Ռուսաստանի հովանու ներքո գտնվող ռազմաքաղաքական դաշինքի նախագահող երկիրն էր) կարողացավ կոռեկտ չեզոքություն պահպանել: Պաշտոնական Երևանին հաջողվեց ոչ միայն քաղաքական չեզոքություն պահպանել, այլ նաև չստեղծել Ռուսաստանի և Վրաստանի հանրություններում Հայաստանը բացասաբար ընկալելու սպառնալիք՝ իր բավական խուսանավող դիրքորոշման շնորհիվ:

Սակայն պետք է խոստովանել, որ 2008թ. օգոստոսյան իրադարձություններին հաջորդած ժամանակաշրջանում Երևանի և Թբիլիսիի փոխհարաբերությունները զուրկ չէին խնդիրներից, որոնք հիմնականում (բայց ոչ բոլորը) «Հնգօրյա պատերազմի» հետևանք էին: Բացի ռազմական տարանցման խնդրից, հայ-վրացական հարաբերությունների վրա կարևոր ազդեցություն ունի, ինչպես արդեն նշել ենք, հարավկովկասյան տարածաշրջանային գործընթացների դինամիկան: Ինչպես նշում են որոշ վրացի փորձագետներ, «Հնգօրյա պատերազմից» և Աբխազիայի ու Հարավային Օսիայի կորստից (համենայնդեպս, տեսանելի ապագայում) հետո Վրաստանն այլևս կորցնելու և զիջելու բան չունի: Ուստի, 2008թ. օգոստոսյան իրադարձություններից հետո վրացական

հասարակությունը և քաղաքական էլիտան չափից ավելի նախանձախնդիր են քաղաքական այն գործընթացներին արձագանքելու գործում, որոնք կարող են այս կամ այն չափով անդրադառնալ իրենց երկրի տարածաշրջանային դիրքերի վրա: Օրինակ, ակնհայտ է, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը (կամ գոնե դրական զարգացման հնարավորությունը) կնվազեցնի Վրաստանի տարածաշրջանային նշանակությունը, կզրկի նրան տնտեսական ու քաղաքական այն առավելություններից, որոնք ունի Թբիլիսին հարավկովկասյան տարածաշրջանում իր երկու հարևանների միջև հակամարտության առկայության պայմաններում: Անգամ Ղարաբաղյան հակամարտության ընդհանուր ֆոնի փոփոխությունը (օրինակ, հայ-թուրքական մերձեցման և Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանների բացման գործընթացի հաջողության դեպքում), ինչպես զգուշանում են շատերը Թբիլիսիում, կարող է բացասաբար անդրադառնալ Վրաստանի՝ տարածաշրջանում ունեցած մենաշնորհային դիրքի վրա: Մասնավորապես, ինչպես նշում են վրացի որոշ փորձագետներ (օրինակ, հայտնի վրացի քաղաքագետ, կրթության փոխնախարար և Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտի տնօրեն Գիա Նոդիան), Վրաստանում կա այն զգացողությունը, թե հայ-թուրքական մերձեցման, սահմանների և հաղորդակցության բացման դեպքում Թբիլիսին տարածաշրջանում կկորցնի իր «արտոնյալ դիրքը» տարանցման և տնտեսական նախագծերում:

Մյուս կողմից՝ վերջին ժամանակներս Վրաստանը Հայաստանի հետ փոխհարաբերություններում հատուկ շեշտադրում է իր բացառիկ դերը Հայաստանի հաղորդակցային ուղիների գործում, ինչն արտահայտվում է սակագնային քաղաքականությունում: Բանն անգամ հասնում է Թբիլիսիի կողմից իր՝ որպես տարանցիկ երկրի, դերի ուղղակի «ինստրումենտալացմանը»: Բացի այդ, կորցնելով Աբխազիան և Հարավային Օսիան՝ Վրաստանը տեսանելի ապագայում հազիվ թե հաջողի օգտագործել իր ուժային կառույցների պոտենցիալն (որոնց զարգացմանը վրացական իշխանությունները չափից ավելի մեծ ուշադրություն և ռեսուրսներ են հատկացրել հետպատերազմյան շրջանում, սկսած 2004թ.) այդ շրջաններում: Սակայն դա փոխհատուցվում է հայերով ու ադրբեջանցիներով բնակեցված Սամցխե-Ջավախքում և Քվեմո-Քարթլիում Վրաստանի կենտրոնական իշխանությունների քաղաքականության փոփոխությամբ և ուժային կառույցների ռեսուրսի օգտագործմամբ: Վրաստանի իշխանությունները և անգամ հասարակության մի մասը կարծում են, թե անցած տարվա իրադարձություններից և Աբխազիայի ու Հարավային Օսիայի կորստից հետո իրենք բարոյական իրավունք ունեն խստացնելու իրենց քաղաքականությունը երկրի էթնիկ փոքրամասնություններով բնակեցված այս շրջաններում: Բնականաբար, նման զարգացումներն ապագայում կարող են բացասական ազդեցություն ունենալ հայ-վրացական միջպետական հարաբերությունների զարգացման վրա:

Ջավախքը և «ռուսական գործոնը»

Վրացական հասարակության և քաղաքական էլիտայի համար Հայաստանի և հայերի նկատմամբ վերաբերմունքը հետխորհրդային շրջանում մշտապես պայմանավորվել է երկու հիմնական կարծրատիպերի ազդեցությամբ, որոնք են՝ հայաբնակ Ջավախքի խնդիրները և Երևանի ու Մոսկվայի փոխհարաբերությունները: Հայերին «անջատողականության» և իբր թե «Ջավախքը» Վրաստանից «պոկելու» մտադրություն ունենալու մեջ մշտապես կասկածելը զուգորդվում է վրացական հասարակության ներսում խորքային հակառուսական տրամադրությունների հետ: Հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների առկայության պայմաններում հակառուսական այդ բացասական տրամադրություններն ակամա (իսկ երբեմն էլ՝ գիտակցաբար) տարածվում են նաև Հայաստանի և հայերի վրա: Ցավոք, դա կարծես անխուսափելի ենթատեքստ է, և այդ ֆոնին հայ-վրացական հարաբերությունները դեռ երկար ժամանակ կշարունակեն զարգանալ: Ուստի, Ջավախքի հիմնախնդիրը և ռուսական գործոնը Երևան-Թբիլիսի փոխհարաբերություններում որոշակի պարբերականությամբ հանգեցնում են դժվարությունների և նույնիսկ խնդիրների:

Օրինակ, այս միտումը և Վրաստանում առկա վախը Ջավախքի խնդիրների նկատմամբ բավական հստակ դրսևորվեցին 2009թ. հուլիսի 24-25-ին Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլու Երևան կատարած այցի նախօրեին: Դրանից մի քանի օր առաջ վրացի սահմանապահներն արգելել էին Թբիլիսի կոնֆերանսի մեկնող, ՀՀ ԱԺ պատգամավոր, ծնունդով ջավախեցի Շիրակ Թորոսյանի մուտքը Վրաստան: Վրաստանի իշխանություններն այս քայլը բացատրեցին նրանով, թե Շ.Թորոսյանը Ջավախքում Վրաստանի իշխանությունների վարած քաղաքականության առիթով կտրուկ արտահայտություններով է հանդես եկել նրանց հասցեին: Միջադեպը հանգեցրեց նրան, որ Հայաստանի ԱԳՆ-ն հանդես եկավ բողոքի պաշտոնական նոտայով: Միևնույն ժամանակ, մի շարք փորձագետների և հայ-վրացական հարաբերություններում ներգրավված քաղաքական գործիչների կարծիքով՝ վրացական իշխանությունների այդ քայլը կարելի էր բացատրել մի քանի պատճառով: Բացի թվում է թե ամենաակնհայտ, «մակերեսին գտնվող» և վրացական կողմից հնչեցված պատճառից (Վրաստանի իշխանությունները դժգոհ են Շ.Թորոսյանի՝ Ջավախքի հարցում ունեցած դիրքորոշումից), դա կարող էր հարուցված լինել նաև Վրաստանի հայերի ու Հայաստանի և Ռուսաստանի ջավախահայերի տարբեր խմբավորումների փոխհարաբերությունների և նրանց միջև ազդեցության ոլորտների բաժանման ներքին գործընթացներով: Սակայն միջադեպը կարող էր նաև այլ պատճառ ունենալ. օրինակ, այն, որ Վրաստանի իշխանությունները փորձում են բարձրացնել հայկական կողմի հետ վարվող բանակցությունների «գինը», այդ թվում և ռուս-վրացական սահմանին գտնվող Վերին Լարսի անցակետի բացման շուրջ:

Հայաստանի և Վրաստանի նախագահների հանդիպման նախօրեին շատ էր խոսվում այդ անցակետի բացման հնարավորության մասին: Ակնհայտ է, որ դեպի Ռուսաստան տանող ուղղակի տրանսպորտային հաղորդակցության վերականգնման հնարավորությունը չափից ավելի էր հետաքրքրում հայկական կողմին, թեև իրականում (ինչը հաստատվում է հետագա զարգացումներով) այդ անցակետի բացման համար ներկայումս լուրջ հիմքեր չկան. ռուս-վրացական ներկայիս հարաբերությունները թույլ չեն տալիս: Եվ հազիվ թե Մոսկվան ու Թբիլիսին առանձնապես ցանկանում են դա: Կրեմլի համար Վերին Լարսի բացմանը համաձայնելը կնշանակեր հրաժարվել օգոստոսյան պատերազմից հետո Վրաստանի ներկայիս իշխանությունների «տոտալ անտեսման» քաղաքականությունից (ինչպես հայտարարում են Մոսկվայում, ընդհուպ մինչև Սահակաշվիլուն փոխելը): Իր հերթին, Թբիլիսիի համար Մոսկվայի հետ ցամաքային հաղորդակցության և թեկուզև ինչ-որ չափով ուղղակի տնտեսական ու հումանիտար շփումների վերականգնումը կնշանակեր մասամբ համակերպվել օգոստոսյան պատերազմից հետո Աբխազիայի և Հարավային Օսիայի շուրջ ստեղծված իրականությանը: Հասկանալի է, որ Թբիլիսիի կողմից օգոստոսյան պատերազմի արդյունքների նման ամրագրումը տեսականորեն կարող է լինել միայն տեսողական մակարդակում, բայց ոչ վրացական հասարակության ու քաղաքական էլիտայի (որոնք հազիվ թե տեսանելի ապագայում կհաշտվեն տեղի ունեցածի հետ) տրամադրություններում, սակայն անգամ դա այժմ հնարավոր չէ: Բավական է հիշել միայն Վրաստանի սկզբունքային դիրքորոշումը ՄԱԿ և ԵԱՀԿ առաքելությունների կարգավիճակի և տարածքային ամբողջականության մասին հիշատակումների շաղկապման հարցում, ինչն ի վերջո հանգեցրեց Ռուսաստանի վետոյին և այդ երկու կազմակերպությունների առաքելությունների գործունեության ընդհատմանը Աբխազիայում և Հարավային Օսիայում:

Բայց այս ամենը չի խանգարում Թբիլիսիին ու Մոսկվային կանոնավորապես հանդես գալ հայտարարություններով, թե նրանք բացառապես «հանուն Հայաստանի» պատրաստ են վերականգնել Վերին Լարսի անցակետը, «միայն թե հակառակ կողմը պետք է կառուցողականություն հանդես բերի և զիջումների գնա»: Ընդ որում՝ և՛ վրացական, և՛ ռուսական կողմերն օգտագործում են հայկական կողմի՝ այդ անցակետը բացելու շահագրգռվածությունը Երևանի հետ այլ խնդիրների շուրջ քաղաքական սակարկումների համար՝ լավ հասկանալով, որ նկատի ունենալով Վերին Լարսի աշխատանքի վերականգնման անիրատեսությունը՝ նրանք առանձնապես ոչինչ չեն կորցնում այդ բանակցային ձևաչափում: Ուստի, բացառված չէ, որ Շ.Թորոսյանի հետ կապված միջադեպը և Վերին Լարսի թեմատիկայի հրատապացումը Թբիլիսին օգտագործեց ավելի խստացնելու համար իր մոտեցումները ինչպես Ջավախքի, այնպես էլ Վրաստանի տարածքով հայկական բեռների փոխադրման սակագների և երկկողմ հարաբերությունների մի շարք այլ հարցերում:

Մյուս կողմից՝ հայկական կողմը նաև փորձեց իր նպատակներին ծառայեցնել Վրաստանի նախագահի հուլիսյան այցելությունը՝ հերթական անգամ ցուցադրելու համար արտաքին քաղաքական կոմպլեմենտարիզմը: Խոսքն, առաջին հերթին, Վրաստանի նախագահին հայկական շքանշանով պարգևատրելու մասին է: Թեև իրադարձությունը զուտ արձանագրային էր և սովորական դիվանագիտական քայլ (Ս.Սարգսյանը նույնպես պարգևատրվել է վրացական շքանշանով անցած տարվա աշնանը Թբիլիսի կատարած այցելության ժամանակ), բայց այն լայն հակադարձ առաջացրեց հատկապես Ռուսաստանում: Այնինչ, այդ ամենի քաղաքական իմաստը, թերևս, Մոսկվային ուղղված «դժգոհության մեսիջ» էր՝ ռուս-ադրբեջանական շփումների ակտիվացման հերթական ռաունդի առնչությամբ:

Ամփոփման փոխարեն. կանխատեսելի սպառումներ

Հարկավոր է ընդգծել, որ հայ-վրացական հարաբերությունների վերլուծությունը պետք է ելնի ոչ միայն «Հնգօրյա պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի զարգացումներից: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն մշտական գործոնները, որոնք անդրադառնում են հայ-վրացական միջպետական հարաբերությունների վրա. առաջին հերթին դրանք Ջավախքի և Վրաստանի տարածքով անցնող ճանապարհների գործունեության հետ կապված հարցերն են:

Ինչ վերաբերում է հայ-վրացական հարաբերությունների վրա տարածաշրջանային համատեքստի ընդհանուր ազդեցությանը, նշենք, առաջին հերթին, վրացական հասարակությունում հայ-թուրքական մերձեցման հեռանկարների (թեկուզև առայժմ բավական աղոտ) բավական հուզական ընկալումը 2009թ. ապրիլին այսպես կոչված «ճանապարհային քարտեզի» ստորագրումից հետո: Հայ-թուրքական մերձեցման արձագանքը Վրաստանում բավական նյարդային էր ու ագրեսիվ. Թբիլիսին սկսեց լրջորեն երկյուղել այն բանից, որ կկորցնի արտոնյալ դիրքերը տարածաշրջանային քաղաքականությունում և մոնոպոլ հաղորդակցային նշանակությունը Հայաստանի համար:

Միաժամանակ, ռուսական գործոնը նույնպես շարունակում է բացասական նստվածք թողնել հայ-վրացական հարաբերությունների զարգացման վրա: ԱՊՀ կազմից 2009թ. օգոստոսին Վրաստանի դուրս գալը ևս այս կամ այն չափով կանդրադառնա հայ-վրացական հարաբերությունների վրա (թեկուզ տնտեսական և անգամ հումանիտար հարցերում):

Այնուամենայնիվ, երկու երկրների միջև պատմականորեն գոյություն ունեցող մոդուս-վիվենդիի առկայությունը հայ-վրացական միջպետական հարաբերությունների զարգացման հույս է ներշնչում՝ անկախ Թբիլիսիի և Երևանի վրա բացասաբար ազդող տարածաշրջանային համատեքստից և գոյություն ունեցող շարունակական քաղաքական հիմնախնդիրներից:

ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արեստակես Սիմավորյան

Երբեմն հայության դավանանքային (կաթոլիկ, բողոքական, առաքելական և այլ) հատվածներում միմյանց ընկալելու որոշակի խնդիրներ են առաջանում, հատկապես այն ժամանակ, երբ կրոնական և ազգային պատկանելություն եզրերը չեն առանձնացվում: Նման խնդիրների ականատես ենք լինում Ջավախքի կաթոլիկ և առաքելական հայերի մոտ, որոնք թեև թույլ են արտահայտված, այդուհանդերձ, արմատապես վերացած չեն:

19-րդ դ. Ջավախքի հայ կաթոլիկների և առաքելականների միջդավանական «հակամարտություններ»-ը, կրոնական հողի վրա միմյանց ատելը սովորական երևույթներ էին, որոնք ուղղորդվում և հրահրվում էին նաև երկու եկեղեցիների ներկայացուցիչների կողմից: Հայկական միջավայրը և խորհրդային շրջանն՝ իր կրոնամերժ գաղափարախոսությամբ, նպաստեցին, որ այդ սառույցը հալվի:

Ուշագրավ է 2006թ. Արցախ այցելած հայր Անդրանիկ Կռանյանի հայտարարությունը, որ կաթոլիկ և առաքելական եկեղեցիները միացնող առիթները ավելի շատ են, քան բաժանողները, իսկ ամենաբարդ խնդիրը բոլորովին էլ կրոնականը չէ, այլ մարդկայինը. *«Մեր արդթքը նույնն է, նույնն են մեր պայքարը, վտանգները: Պարզապես մենք ընդունում ենք, որ հոգևորականների գլխավոր պետը Պապն է, և միլիոնավոր ժողովուրդների եկեղեցին պետք է մի գլուխ ունենա: Մենք ընդունում ենք, որ միջազգային պետը կարող է լինել հայ կամ օտարազգի, մանավանդ՝ Քրիստոսը հայ չէր: Իսկ առաքելական եկեղեցին գտնում է, որ ինքը միակ գլուխն է: Սա վարչական հարց է, և այն չպետք է մեզ իրար դեմ լարի»*[1]:

Ջավախքում հայ կաթոլիկը բնութագրվում է «ֆռանգ» բառով: Հայ կաթոլիկների համար վիրավորական երանգներ ունեն դրա կրճատ կամ փոփոխված լեզվական «ֆրռռ» և «ֆրռիկ» ձևերը: Իրենք՝ կաթոլիկ հայերը, նշում էին, որ «ֆռանգ» բառն այնքան էլ վիրավորական չէ, քանի որ, ըստ ավանդության, իրենք այդպիսին են: Հետաքրքիր է, որ մեր՝ «Ի՞նչ է նշանակում «ֆռանգ» հարցին նույնիսկ կրթություն չստացած մարդիկ պատասխանում էին, որ նրանք ազգային դավանանքից օտարված հայերն են:

[1] Հայ կաթոլիկները Արցախում, Առավոտ, 13.07.2006:

Ժամանակին հայ կաթոլիկներն առաքելականներին ասում էին «հերետիկոս»: Այս բառի օգտագործումը ժամանակակից Ջավախքի հայ կաթոլիկների կյանքում շատ աննշան է, իսկ օգտագործողների մեծ մասը հիմնականում տարեցներն են: Նրանք բառն օգտագործում են որպես ավանդված հիշողություն: Հետաքրքիր է, որ ֆրանսիացիների մեջ տարածված է «զանգակատան մարդիկ» արտահայտությունը, իսկ հայ կաթոլիկներն իրենց համարում են համայնքի «եկեղեցու մարդիկ»:

Երբեմն «ֆռանգ» բառն այնքան ամուր է նստած հայ կաթոլիկների գիտակցությունում, որ առաքելականների մասին խոսելիս նրանց կոչում են հայեր, իսկ իրենց՝ «ֆռանգ»-ներ: Այստեղ «մեղքի» բաժին ունեն նաև հայ առաքելականները[1]: Օրինակ, երբ հայ առաքելականը կամ ազգությամբ վրացի մեկն իմանում է, թե որ գյուղից է սերում կոնկրետ անձը, անմիջապես մատնանշում է նրա «ֆռանգ» լինելը: Դա ձևավորում է բարդույթներ, ինչի հետևանքով «ֆռանգ» բառեզրով նշվում է ոչ թե կրոնական ուղղության հետևորդը, այլ որևէ էթնիկ միավոր (ոչ հայ, պատահել է՝ նույնիսկ ընկալվել է ֆրանսիացի), և դա կարող է նպաստել անհատի խորթացմանը հայկական միջավայրից:

Հետաքրքիր են «պոչավոր» և «պոչը կտրած» արտահայտությունները. առաջինը վերաբերում է առաքելական, իսկ մյուսը՝ կաթոլիկ հային: Այսպիսի արտահայտություններով են միմյանց կոչում ջավախահայերը, բայց դրանք հազվադեպ են օգտագործվում, այն էլ միմյանց վիրավորելու համար: Ավանդության ուժով պահպանված այսպիսի վերապրուկներն աստիճանաբար դուրս են մղվում առօրյա կյանքից:

Բավական հետաքրքիր խումբ են, այսպես կոչված, «կաթոլիկ վրացիները»՝ նախկին հայ կաթոլիկները, որոնք բնակվում են Ասպինձայի, Ադիգենի և Ախալցխայի գյուղերում: Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկների ժողովրդապետ Անդրե Եանիցկին հավաստում է, որ այդ գյուղերի (Ասպինձայում՝ Խզաբավրա, Վարգավ, Ադիգենում՝ Արալ, Ուդե, Ախալցխայում՝ Իվլիտ գյուղերը) բնակիչները նախկին հայ կաթոլիկներ են, սակայն այսօր ներկայանում են որպես վրացի կաթոլիկներ, միայն ազգանուններից է հասկացվում, որ հայեր են եղել, օրինակ՝ Գալուստաշվիլի, Մխիթարաշվիլի: Բավական է ասել, որ այս գյուղերում գործում է լատինական ծես՝ վրացերենով: Սակայն, ինչպես նշեց մեր զրուցակիցը, էթնիկ ծագման հարցերով աշխատում են չզբաղվել և ըմբռնումով են մոտենում պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած երևույթներին:

[1] Այս հարցում հետ չեն մնում նաև վրացիները, որոնց մոտ դավանական հողի վրա ներէթնիկ բաժանումները ևս տեղ ունեն, հատկապես վրաց կաթոլիկների և վրաց ուղղափառների միջև, ինչը վերջին տարիներին սուր բնույթ է կրում:

Քանի որ Խզաբավրա և Վարգավ գյուղերը բավական մոտ են հայ կաթոլիկներով բնակեցված գյուղերին (Ալաստան, Վարևան, Տուրցխ), նրանց շփումները մշտապես սերտ են եղել: Վերոհիշյալ գյուղերի բնակիչները նշում էին, որ նրանք հայեր են և մինչև 30-ական թվականները հայերեն էին խոսում, նույնիսկ «Գովեցյալ Հիսուս» ողջույնի խոսքին գրաբարով պատասխանում էին. «Եղիցի միշտ և յանապա»: Հայ կաթոլիկները նրանց կոչում են շուռ տված հայեր, ինչը ցույց է տալիս, որ դա վերաբերում է ազգային փոխակերպմանը և ոչ թե դավանափոխությանը:

Այս խմբի մոտ հայկական ինքնագիտակցությունը ցածր մակարդակի է: Եթե իսլամացված հայերի սերունդների որոշ մասի մոտ էթնիկ ինքնագիտակցության դրսևորումները կապված են ցեղասպանության տրավմատիկ հիշողությունների հետ և հայությանը վերադառնալու վառ գործոն են, «վրացացած» կաթոլիկների պարագայում այս հանգամանքը բացակայում է, և դժվար է ասել, թե որ գործոնները կկարողանան ազդեցիկ և որոշիչ լինել կորսված արմատներին դառնալու համար:

Այս հարցը մեզանում ուսումնասիրված չէ և լուրջ հետազոտման կարիք ունի, հատկապես այսօր, երբ Ախալցխայի «վրաց կաթոլիկների» շրջանում ուղղափառացման (դրանից բխող վրացականացմամբ) քայլեր են կատարվում, իսկ դա ավելի է հեռացնելու նրանց առանց այն էլ երերուն ինքնագիտակցությունից:

Այս համատեքստում ուշագրավ է Թբիլիսիի հայ կաթոլիկների դրությունը: Ըստ Հեշտիայի հայ կաթոլիկ գյուղի քահանա Անտոնի՝ Թբիլիսիում նրանք բավական մեծաթիվ են: Նրանք փորձում են ծպտյալ մնալ, որոշ մասն էլ հաճախում է Լատին եկեղեցի, որտեղ հայերենով ընթերցումներ չկան: Իսկ Բաթումի հայ կաթոլիկների ամենամեծ խնդիրը հայերենի չիմացությունն է (ռուսախոս հայ կաթոլիկներ են), ինչը նրանց պասիվ հաղորդակից է դարձնում եկեղեցու հետ:

Ինչ վերաբերում է Ջավախքի կաթոլիկ և առաքելական հայերի փոխհարաբերություններին, ապա դրանք բավական սերտ են. ընդհանրապես առաքելական եկեղեցու հետևորդ դառնալու միտքը հայ կաթոլիկների մոտ «սրերով» չի ընդունվում, քանի որ համարում են, որ դա ցանկացած մարդու իրավունքն է: Կաթոլիկների և առաքելականների միջև հարաբերություններն այնքան սերտ են, որ միմյանց եկեղեցիներ այցելությունը սովորական է: Այս մոտեցման հիմնական պատճառն այն է, որ կաթոլիկության դավանաբանական հենքը ներկա սերնդի կողմից յուրացված չէ և, ըստ մեզ, այն կրում է «ժառանգաբար»: Իսկ ներկայում հայ առաքելական եկեղեցու հետևորդ դառնալու ցանկությունը (համայնքից դուրս) ոչ միայն ինքնակամության հետևանք է, այլև խորհրդային ժամանակվա «հավատքի ճգնաժամի» դրսևորման արդյունք:

Ջավախահայ կաթոլիկների շրջանում նկատելի է հետևյալ երևույթը. 1960-1970-ական թթ. Հայաստանում հաստատվելուց հետո, չունենալով կապ-

վածություն որևէ դավանական համակարգի հետ, զուտ ազգային ինքնագիտակցության մղումից ելնելով, դարձել են հայ ավանդական եկեղեցու հետևորդներ: Հետևաբար՝ նման օրինակները միմիայն համայնքից առանձնանալու դեպքում են տեղի ունենում և հատկապես Հայաստանում: Անշուշտ, հայկական միջավայրն այս հարցում մեծ դեր է կատարել: Մյուս կողմից՝ նկատելի է, որ Ախալցխայի գյուղերից Ռուսաստան արտագաղթած հայերի շրջանում կաթոլիկ հավատքին ապավինելը մեծ տեղ ունի: Խոսքը ներքին ամուսնությունների մասին է, ինչն, իրենց հավաստիացմամբ, ոչ թե բխում է միմյանց «լավ ճանաչելու» սկզբունքից, այլ նույնադավան լինելու հանգամանքից և արտահայտվում է հատկապես օտար միջավայրում հայ մնալու ձգտումով: Նշենք, որ որոշ դեպքերում Ռուսաստան արտագաղթած հայ կաթոլիկներն ամուսնանում են նաև դավանակից լեհերի հետ: Սա արդեն այլ խնդիր է և ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ այդ վայրում միևնույն համայնքի անդամներ չեն բնակվում:

Շատ հայեր կարծում են, որ իրենց նախնիներն անհրաժեշտ են համարել կաթոլիկ լինել, ուրեմն դա խոհեմ քայլ է եղել իսլամացումից փրկվելու և հայ մնալու համար:

Այսպիսով, ազգային գիտակցությունն ու կրոնական պատկանելությունը հաճախ ներդաշնակ գոյատևել են Ջավախքի հայ կաթոլիկների կյանքում: Այստեղ չյուրացված դավանանքը մշտապես երկրորդական տեղ է ունեցել՝ հայկական գիտակցությունից հետո: Հայապահպանման տեսանկյունից ազդեցիկ և կարևոր գործոն են հայոց լեզուն, հայ մշակույթը, որի կրողներն են Ջավախքի հայ կաթոլիկները:

Հայ կաթոլիկների հոգևոր-եկեղեցական խնդիրները

Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի) հայ կաթոլիկ համայնքների արդի հիմնախնդիրները, որոնք միահյուսված են այդ տարածաշրջանի ողջ հայության խնդիրների հետ, մի տեսակ ստվերված են և լուսաբանման կարիք ունեն: Ջավախքում այսօր հաշվվում են ավելի քան տասնչորս հայ կաթոլիկ գյուղական համայնքներ: Այս ոլորտի խնդիրները կապված են եկեղեցու կարգավիճակի, հոգևորականության պակասի և դրանցից բխող այլ երևույթների հետ:

Հայ իրականության մեջ կրոնի, եկեղեցու և հոգևորականի դերը բոլոր դարերում մեծ և որոշիչ է եղել կազմակերպչական հարցերում, ինչը վերաբերում է նաև Հայ Կաթողիկեին:

Ջավախքի հայ կաթոլիկների ընդհանուր խնդիրները հարուցվում են երկու ուղղությունից՝ Վրաստանի իշխանությունների կողմից, որի վրա լուրջ ազդեցություն ունի Վրաց ուղղափառ եկեղեցին, և Հայ Կաթողիկեից: Վրաստանում մինչ այժմ չլուծված թիվ 1 խնդիրը եկեղեցիների կարգավիճակի

հարցն է: Միայն առաքելական և կաթոլիկ եկեղեցիները չէ, որ իրավական կարգավիճակ չունեն, այլ մյուս դավանական և կրոնական ուղղությունները նույնպես: Բացի վրաց ուղղափառ եկեղեցուց, մնացածները իրավական առումով, փաստորեն, գոյություն չունեն: Դրանց իրավական ներկայությունը փաստաթղթով ամրագրված չէ: Խնդրի շուրջ բազմաթիվ քննարկումներ են ծավալվել, բայց այն լուծում չի ստացել:

Վրաց ուղղափառ եկեղեցու դերն այնքան մեծ է Վրաստանում, որ ցանկացած, այդ թվում և քրիստոնեական ուղղություն, «աղանդ» է դիտվում: Այլ կրոնների նկատմամբ թշնամական տրամադրությունները տեղ են գտնում Վրաստանում հրատարակվող ուսումնական գրքերում անգամ: Այլ լեզվով հրատարակվող և առկա քրիստոնեական գրականության մեծ մասն առանձին դեպքերում նույնիսկ այրել են[1]:

Հայ կաթոլիկների գլխավոր խնդիրը հոգևորականի բացակայությունն է, ինչը հաստատեցին նաև համայնքները սպասարկող քահանաները: Այսօր տասնչորս կաթոլիկ գյուղեր ընդամենը երեք հոգևորական ունեն. զուգահեռ անցկացնելով հայ առաքելական գյուղերի հետ՝ նշենք, որ նրանք անհամեմատ ավելի վատ վիճակում են, և դա՝ այն դեպքում, երբ հարյուրավոր առաքելական գյուղերում հովվություն են անում ընդամենը երկու-երեք հոգի: Սա լուրջ խնդիր է երկու կողմերի համար էլ: Հստակ է մի բան. ուր եկեղեցիներ և հոգևորականներ չեն գործում, ի հայտ են գալիս տարատեսակ աղանդավորական հոսանքներ, որոնք քայքայիչ ներգործություն են ունենում շրջապատի վրա: Սա ջավախահայության հոգևոր անվտանգությանն առնչվող հրատապ հարց է:

Հայ կաթոլիկ հոգևորականները հիմնականում պատրաստվում են Թբիլիսիում, Հալեպում, Լվովում: Այս հարցը տնօրինում է իրենց եպիսկոպոսը: Քչերին է հաջողվում ավարտել և ստանալ հոգևորականի կոչում: Թբիլիսիում հոգևորականների պատրաստման համար ջանք չէր խնայում Թբիլիսիի հայ կաթոլիկների առաջնորդ[2] (2003-2007թթ.) Էմանուել ծայրագույն վարդապետ Տապաղյանը, ով տեղի հայերից պատրաստում էր քահանաներ, որոնք սովորում էին Թբիլիսիի Սուլխան-Սապա Օրբելիանիի անվան համալսարանում: Ուսումնառությունը վեց տարի է, երկլեզվյա ծրագրով՝ վրացերեն և ռուսերեն[3], իսկ հայ ժողովրդի պատմության, ծիսագիտության, երգի, ժամերգության դասընթացները վարում էր վարդապետը:

Երբեմն առաքելական եկեղեցու սպասավորների բացակայության պատճառով գյուղերի բնակիչները հարսանեկան, կնունքի և այլ ծեսերի համար դի-

[1] Роль православия в государствах и обшествах Грузии и России, Тбилиси, 2004 г., ст.94-95.

[2] Ներկայումս Էմանուել ծայրագույն վարդապետ Տապաղյանը Բաղդադի Հայ Կաթողիկե թեմի առաջնորդն է:

[3] Մասիս, 2007, փետրվար:

մում են հայ կաթոլիկ եկեղեցիներին: Քանի որ երկու եկեղեցիների միջև կան որոշակի պայմանավորվածություններ, կաթոլիկ սպասավորներն ստիպված են լինում այդ մարդկանց ուղարկել Ախալքալաքի առաքելական եկեղեցի: Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդների մեջ Ջավախքում երբևէ պրոզելիտիզմի (հավատափոխության) դեպքեր չեն եղել, և պատճառը արդի իրականությունում երկու եկեղեցիների առողջ հարաբերություններն են: Ինչպես հայր Եանիցկին էր ասում. *«Նրանք չեն մտնում մեր գործերի մեջ, մենք՝ իրենց: Ամեն մեկը գիտի իր հոտի ոչխարներին և հոգ է տանում նրանց մասին»:*

Եկեղեցական արարողությունները հիմնականում կատարվում են հայկական ծեսով, անգամ այն դեպքում, երբ սպասավորներն այլազգի են լինում: Մասնավորապես, հայր Եանիցկին մեզ հետ զրույցում ասաց. *«Շուրջ քսան տարի առաջ ինձ այստեղ ուղարկեց կարդինալը, քանի որ հայ ժողովուրդը այս կողմերում չուներ եպիսկոպոսներ, վարդապետներ: Կային, իհարկե, սփյուռքահայ կաթոլիկ քահանաներ, բայց իրավունք չունեին այստեղ գալու: Այն ժամանակ դա բավական դժվար հարց էր: Ես եկեղեցական արարողությունները սկսեցի կատարել լատինական ծեսով, հետո իրավունք խնդրեցի ընթերցումները կատարել հայերենով, և դրանից հետո պատարագները կատարվեցին հայկական ծեսով՝ գրաբարով, ինչպես առաքելական հայերի մոտ: Մինչև այսօր էլ ծեսերը, խորհուրդները կատարվում են հայկական ծեսով»:* Հավելենք, որ յուրաքանչյուր գյուղում պատարագները կատարվում են շաբաթ և կիրակի օրերին, իսկ եկեղեցի այցելողների թիվը զգալիորեն ավելացել է:

ԽՍՀՄ ժամանակաշրջանի հոգևոր մեկուսացումը որոշ չափով դուրս էր մղել մարդկանց կրոնական ինստիտուտից, բայց այդ պարտադրված բացթողումը վերականգնվում և դանդաղորեն հաստատուն տեղ է գտնում համայնքի կյանքում, և կապվածությունը Հայ Կաթողիկե եկեղեցու հետ էլ ավելի է մեծանում:

Իրավիճակը դրական է, սակայն, եկեղեցիների հարցում: Ախալքալաքի շրջանում կաթոլիկ եկեղեցիները վերանորոգվում են: Այս աշխատանքների մեծ մասը կատարվում է բարերարների կողմից, այլ դրամական օժանդակություններ էլ են լինում, որոնք ստացվում են հատկապես Գերմանիայից: Որևէ օժանդակություն չի ցուցաբերվում Վրաստանի Հանրապետության կողմից: Կան համայնքներ, որոնք եկեղեցիներ չունեն, օրինակ՝ Կաթնատու գյուղում, որտեղ համատեղ ապրում են թե՛ կաթոլիկ, թե՛ առաքելական հայեր, ընդ որում՝ եկեղեցի չունեն նաև վերջիններս: Նույն իրավիճակում են Ասփարա, Նոր Տամբովկա գյուղերը:

Վատթար վիճակում են հատկապես Նինոծմինդայի Ուջմանա և Թորիա գյուղերի եկեղեցիները. ցանկություն կա քանդել Ուջմանայի եկեղեցին և տեղում նորը հիմնել, բայց դեռևս ֆինանսական դժվարություններ կան, ասաց տեղի քահանան:

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ կաթոլիկ եկեղեցիների դռները միշտ փակ են, օրինակ՝ Վարևան գյուղում վրացական եկեղեցու դռները բաց են, թեև սույն գյուղում ընդամենը մեկ վրացական ընտանիք է մնացել (այստեղ երևում է վրաց ուղղափառ եկեղեցու գերակայությունը)։

Վերջին տարիներին Վրաստանում Հայ առաքելական եկեղեցիների հետ կապված միջադեպերը որոշ ժամանակ տեղեկատվական դաշտի առանձնակի քննարկման թեմա դարձան։ Այս համատեքստում հայ կաթոլիկ համայնքների ներքին մարտահրավերները հետին պլան են մղվում։ Հայ կաթոլիկ եկեղեցիների դեմ ոտնձգությունների պատճառով վերջին տասնամյակում տուժել են Ուջմանա և Ալաստան գյուղերի եկեղեցիները։

Մասնավորապես, Ուջմանա գյուղի եկեղեցուց անհետացել է մշակութային արժեք ներկայացնող Մարիամ Աստվածածնի 18-րդ դարի գիպսե արձանը, որը մինչ օրս չի հայտնաբերվել։ Իսկ Ալաստան գյուղի եկեղեցում դիտավորյալ «մաքրվել» է մկրտարանի ավազանի հայերեն արձանագրության մի մասը։ Անտոն քահանան կարծում է, որ նման երևույթները միայն համայնավարական տարիներին կարող էին տեղի ունենալ։ Նման գործողությունները մշատապես կոծկվում են և հրապարակայնորեն չեն քննադատվում։

Պետք է ընդունել, որ հայ կաթոլիկների խնդիրները ողջ հայության խնդիրների մի մասն են, որոնց լուծման համար խելամիտ և շրջահայաց մոտեցումներ են պահանջվում։

ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՆ ՈՒ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Թամարա Վարդանյան

Ուղեղային կենտրոնները Վրաստանում

Հետխորհրդային երկրների առանձնահատկություններից մեկն այն է, որ ուղեղային կենտրոնների ձևավորումն ընթանում է առավելապես ոչ թե ներքին, այլ արտաքին ռեսուրսների հաշվին (իհարկե, կան բացառություններ, երբ ՈւԿ-ն գործում է պետական ֆինանսական աղբյուրների հաշվին)։

Վրաստանի դեպքում պետք է նշել, որ ուղեղային կենտրոնները հիմնականում սնվում են ամերիկյան ու եվրոպական ծրագրերի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցներից և սպասարկում են առաջնային մի շարք ուղղություններ։ Ընդհանրապես, ուղեղային կենտրոնների գործունեությունը հիմնականում ընդգրկում է հասարակական և քաղաքական խնդիրների հարթությունը, իսկ ճշգրիտ գիտությունների ոլորտը հիմնականում տեղայնացված է ակադեմիական հաստատություններում։ Նրանց ֆինանսական խնդիրները լուծվում են ստացվող դրամաշնորհների միջոցով՝ ինստիտուցիոնալ տեսակետից մնալով բուն ակադեմիական համակարգում։

Մյուս առանձնահատկությունն այն է, որ ռուսական աղբյուրներից սնվող գոնե մեկ ուղեղային կենտրոն մեզ հայտնի չէ։ Այսինքն՝ կարելի է փաստել, որ երկրում ծավալվող հասարակական-քաղաքական դիսկուրսում և տեղեկատվական-գաղափարական հարթությունում գերիշխում են արևմտյան ազդակները։

Վրաստանում գործող և մեր կողմից ուսումնասիրված ուղեղային կենտրոնների կայքէջերի մեծ մասի լեզուները վրացերենն ու անգլերենն են։ Այսպես՝ 20 ուղեղային կենտրոնների (տե՛ս աղյուսակը) կայքէջերի շարքում ռուսերեն տարբերակ ունեին միայն 2-ը (Բաց հասարակության Վրաստանի հիմնադրամը՝ *http://osgf.ge* և Հարավային Կովկասի գենդերային տեղեկատվական համացանցը՝ *www.ginsc.net*), իսկ մեկ կայքէջ բացի վրացերեն և անգլերեն հատվածներից ուներ թուրքալեզու էջ (Թուրք-վրացական կրթամշակութային հիմնադրամը՝ *http://www.turkgurcuvakfi.org/)*:

Վրացական կենտրոնների մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանց կողմից ներկայացվող առաջարկությունները (այսպես կոչված *policy paper*-ները)

շոշափելի ազդեցություն ունեն կառավարման օղակների գործունեության վրա: Թերևս, դա բացատրվում է նրանով, որ երկրի ներկայիս իշխանությունները մեծ մասամբ ձևավորվել են ՀԿ սեկտորի ներուժի հիման վրա և, տեղափոխվելով կառավարման օղակներ, պահպանել են նախկին կապերը ՀԿ դաշտի հետ:

Վրաստանում գործող ուղեղային կենտրոններից առաջատարն ու նշանավորը *Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամն է (GFSIS[1]):* Այն հարցիս, թե *«որո՞նք են նշանավոր ուղեղային կենտրոնները Վրաստանում»,* վրացի փորձագետը պատասխանեց. *«Առաջին 5 տեղը կարելի է շնորհել GFSIS հիմնադրամին, հետո միայն թվել մնացյալը»:* Հիմնադրամի ղեկավարն է Ալեքսանդր Ռոնդելին, որը նախկինում ղեկավարել է Վրաստանի ԱԳՆ հետազոտական և վերլուծական բաժինը, հետազոտական ծրագրեր իրականացրել ամերիկյան և բրիտանական մի շարք համալսարաններում, արտակարգ և լիազոր դեսպան է: Հիմնադրամը Վրաստանում գործող քաղաքական-վերլուծական կենտրոններից ամենահայտնին է, ունի լուրջ ֆինանսական աղբյուրներ, շենքային փայլուն պայմաններ և տեխնիկական հագեցվածություն, որակյալ փորձագետներ, իսկ դոնորների կազմում են Ջ.Սորոսի հիմնադրամը, Սասակավա խաղաղության ճապոնական հիմնադրամը, Սթենֆորդի համալսարանը, ԱՄՆ պետդեպարտամենտը, Վրաստանում ԱՄՆ և Չինաստանի դեսպանատները, Ջ.Մարշալի անվան անվտանգության ուսումնասիրման եվրոպական կենտրոնը, Ռենդ կորպորացիան, կանադական 2 խոշոր կազմակերպություններ, իսկ այս ցանկին վերջերս ավելացել է նաև Բադրի Պատարկացիշվիլու հիմնադրամը: Հասարակական ընկալումներում հիմնադրամը համարվում է Մ.Սահակաշվիլու կառավարության «ուղեղային կենտրոնը» և շոշափելի ներդրում է ունեցել «վարդերի հեղափոխության» իրականացման մեջ:

Հիմնադրամի փորձագետները մշտապես հետևում են Վրաստանի ներքաղաքական զարգացումներին և թեև քննադատում են Մ.Սահակաշվիլու քաղաքականությունը, այնուամենայնիվ, Թբիլիսիում ընթացող ընդդիմության բազմահազարանոց ցույցերը նույնպես չեն ողջունում: Հիմնադրամի և Վրաստանում ներկայացված միջազգային բազմաթիվ կառույցների միջև առկա են սերտ համագործակցություն և փոխհամաձայնեցված գործունեություն: Հայտնի է նաև, որ հիմնադրամի փորձագետները սերտ կապեր ունեն Մ.Սահակաշվիլու վարչակազմի անդամների հետ (առանձին նախարարների հաճախակի այցելությունը սովորական երևույթ է), ուստի հիմնադրամը որոշակիորեն ազդում է որոշումների կայացման գործընթացի վրա (հատկապես դա նկատելի էր «վարդերի հեղափոխությունից» առաջ և անմիջապես հետո):

[1] www.gfsis.net

Հիմնադրամում մշտապես ապահովված է ամերիկյան կողմի ներկայությունը՝ առնվազն մեկ փորձագետի տեսքով, որը ղեկավարում է հիմնադրամում ընթացող գրեթե բոլոր հետազոտությունները. նա, իր զբաղեցրած պաշտոնի համաձայն (հետազոտական բաժնի տնօրեն), պատասխանատու է բոլոր հետազոտությունների բովանդակության և արդյունքների համար:

Հիմնադրամի արտաքին քաղաքական վեկտորը Հյուսիսատլանտյան դաշինքն է, իսկ հետազոտությունների հիմնական բովանդակությունը՝ հակառուսականությունը: Այստեղ ամեն տարի իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, որոնց մասնակցում են նաև ակտիվ երիտասարդներ Հարավային Կովկասի երեք ճանաչված հանրապետություններից:

Ջավախքի հիմնախնդիրը Վրաստանի ուղեղային կենտրոնների հետազոտական ծրագրերում

Էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ ծրագրերում զգալի տեղ է զբաղեցնում Ջավախքի հիմնախնդիրը: Այն, օրինակ, վերոնշյալ հիմնադրամի գործունեության առաջնային թիրախներից է:

Դեռևս 2004թ. հիմնադրամում անգլերեն լեզվով Ջավախքի մասին գրքույկի տեսքով տպագրվել էին դաշտային հետազոտության արդյունքները, որտեղ շրջանը ներկայացված էր որպես կլանային համակարգ ունեցող, միջնադարյան օրենքներով ապրող տարածք: Ջավախքի մասին այս մոտեցումը մեծ տարածում գտավ արևմտյան ընկալումներում և մինչև օրս էլ գերիշխող է: Վերջին շրջանում առավել ակտիվացել է հիմնադրամի գործունեությունն այս ուղղությամբ, որի արդյունքն էլ եղավ սույն թվականի հունիսի 22-ին հիմնադրամի գրասենյակի բացման պաշտոնական արարողությունը Ախալքալաքում: Այդ միջոցառման ժամանակ հռչակվել է Ջավախքում հիմնադրամի գործունեության նպատակը՝ օժանդակել Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ինտեգրմանը:

Մյուս՝ նույնպես աչքի ընկնող կենտրոններից է Ռազմավարության և զարգացման ինստիտուտը[1], որի նախագահը՝ Անդրո Բարնովին, նախկինում եղել է Վրաստանի խորհրդարանի Պաշտպանության և անվտանգության կոմիտեի ղեկավարը: Սույն թվականի հունվարին հրատարակվել է իր հեղինակած ուսումնասիրությունը Սամցխե-Ջավախքի մասին, որտեղ մանրամասն նկարագրում է այսպես կոչված «անջատողական» շարժումը Ջավախքում, անուն առ անուն նշում է բոլոր գործող դերակատարներին, բոլոր կազմակերպություններն ու կուսակցությունները, որոնք սկսած 2002թ. որևէ գործունեություն են ծավալել Ջավախքում, բոլոր անձանց, որոնք որոշակի հեղինակություն են վայելում տեղի հայության շրջանում, ակտիվություն են ցուցաբերում և այլն: Հետազոտության մեջ քննարկվում է անգամ Հայկական սփյուռ-

[1] www.stand.ge

քի, Հայ Առաքելական եկեղեցու, ՀՀ կառավարության, «Երկիր» միության և այլ մարմինների ազդեցությունը Ջավախքի ներքաղաքական կյանքում: Իսկ Ջավախքի այսպես կոչված «անջատողական» շարժման պատմությունը հեղինակը սկսում է շարադրել 1991թ. սկսած: Հետազոտությունն ուշագրավ է Ջավախքի նկատմամբ վրացական փորձագիտական մտքի և դիրքորոշումների բացահայտման տեսանկյունից:

Ջավախքի խնդիրներով է զբաղվում նաև մեկ այլ ակտիվ գործող կենտրոն՝ Խաղաղության, ժողովրդավարացման և զարգացման Կովկասյան ինստիտուտը[1]: Սկսած 2006թ.՝ Ջավախքում եվրոպական ծագում ունեցող դոնորների օժանդակությամբ (հիմնականում՝ ԵԱՀԽ գրասենյակի) այս կենտրոնի աշխատակիցների կողմից իրականացվել են 14 տարբեր ծրագրեր, որոնց նպատակը նույնպես շրջանի ինտեգրումն է: Նշված 14 ծրագրերից միայն մեկն է իրականացվել հայկական կողմի հետ համատեղ, որը Երևանում գործող Կովկասյան ինստիտուտն է եղել:

Հատկանշական է, որ գրեթե բոլոր ուղեղային կենտրոնների կայքէջերում տեղադրված է Վրաստանի քարտեզը՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ միասին, շատ դեպքերում անգամ առանց նշելու վերջիններիս գոնե ինքնավար կարգավիճակը:

Ուղեղային կենտրոնների գործունեության մեջ կարելի է նկատել նաև այն, որ սեմինարների, կլոր սեղանների և կոնֆերանսների քանակը մի քանի անգամ գերազանցում է բուն հետազոտական աշխատանքների արդյունքների, ասենք՝ գրքերի, հոդվածների կամ ամսագրերի հրատարակումը, իսկ պարբերականությունը պահպանող ամսագրեր գրեթե չկան: Առավել տարածված են այսպես կոչված *policy paper*-ները, որոնք ներառում են համառոտ փորձագիտական թեզեր այս կամ այն արդիական խնդրի վերաբերյալ: Հիմնարար հետազոտություններ գրեթե չկան:

Համագործակցության դաշտը բազմազան է, նշվում են տարբեր կենտրոնների անվանումներ՝ որպես գործընկերներ, բայց իրականում դրանք հիմնականում ձևական նշումներ են, քանի որ երբ հետևում ենք կոնկրետ ծրագրերին, տեսնում ենք, որ դրանք մեկ, հազվադեպ էլ՝ առավելագույնը երկու կենտրոնների կողմից էին իրականացվում:

Ակադեմիական համակարգը Վրաստանում

Վրաստանի Գիտությունների ազգային ակադեմիան (ըստ 2008թ. հունվարի 1-ից գործող օրենքի[2]), Վրաստանի կառավարության գիտական խորհրդատուն է: Գործող օրենքի 4-րդ կետի համաձայն, այն «ինքնակառավարվող գիտական հաստատություն է, որն ինքնուրույն հաստատում է ակադեմիայի կարգավիճա-

[1] www.cipdd.org
[2] Տե՛ս http://www.science.org.ge/english.html

կը, ձևավորում է կառուցվածքը և որոշում ակադեմիայի գիտական կազմակերպման հարցերն ու աշխատակազմը, ինչպես նաև տնտեսական և միջազգային համագործակցության խնդիրները»[1]: Ակադեմիայի ֆինանսավորման հիմնական բազային աղբյուրը Վրաստանի պետական բյուջեի տարեկան հատկացումներն են, որոնք կազմում են ՀՆԱ 0.2 տոկոսը, ամեն մի գիտնականի վրա տարեկան ծախսվում է 600 ԱՄՆ դոլար: Ակադեմիան բաղկացած է 9 գիտական ուղղություններով դեպարտամենտից, 5 գիտական հանձնաժողովից: Ակադեմիայի նախագահն է միջազգային ճանաչում ունեցող լեզվաբան Թամազ Գամկրելիձեն, կառավարվում է 15 անդամներից բաղկացած գիտական խորհրդի կողմից:

Այն պարբերաբար հրատարակում է տեղեկագիր, որի բոլոր համարները (բաց ձևաչափով) տեղադրված են ակադեմիայի կայքէջում ու հասանելի են բոլոր ընթերցողների համար: Տեղեկագրի բովանդակության ուսումնասիրության արդյունքում նկատել ենք հասարակագիտական հոդվածների խիստ սահմանափակ քանակություն: Հասարակագիտական հոդվածների շարքում գերակշռում են լեզվաբանության ոլորտի ուսումնասիրությունները, իսկ պատմագիտական, քաղաքագիտական հոդվածներն աղքատիկ են: Թերևս, դա բացատրվում է նրանով, որ այս ոլորտների մասնագետները հիմնականում տեղափոխվել են ուղեղային կենտրոններ (կամ պետական կառավարման մարմիններ) և այնտեղ են շարունակում իրենց գործունեությունը:

Այնուամենայնիվ, հասարակագիտական հոդվածների ընդհանուր քննությունը ցույց է տալիս, որ պատմագիտական, լեզվաբանական, աղբյուրագիտական, հնագիտական ուղղվածությամբ աշխատություններում նկատվում է ավանդական վրացակենտրոնությունը:

Իսկ համալսարանական հաստատությունների ընդհանուր քննությունը ցույց է տալիս, որ բավական տարածված է տարբեր դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ համալսարանների ներսում հետազոտական կենտրոնների հիմնադրումը: Այսպես, գիտական անձնակազմը ներգրավվում է դրամաշնորհային ծրագրերում և չի հեռանում համալսարաններից: Նման երևույթ առկա է նաև ՀՀ կրթական հաստատություններում, բայց դրամաշնորհների սակավության հետևանքով մեզանում այնքան էլ տարածված երևույթ չէ:

Այսպիսով, Վրաստանի *think tank*-երի և ակադեմիական հաստատությունների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել.

- Վրաստանի *think tank*-երում նկատվում է արտասահմանյան փորձագետների (դոնորների անմիջական ներկայացուցիչների) մշտական ներկայություն: Նրանք գործուղվում են Վրաստան՝ մի քանի տարի ժամկետով, և այդ կենտրոններում նրանց կողմից և նրանց անմիջական ղեկավարությամբ իրականացվում են ընթացիկ հետազոտական ծրագրեր:

[1] Տե՛ս http://www.science.org.ge/Statute1.htm

- Վրաստանի ուղեղային կենտրոնների շարքում բավական մեծաթիվ են տնտեսական ուղղվածությամբ հաստատությունները, որոնք հիմնականում տնտեսագիտական վերլուծություններով են զբաղվում:
- Վրաստանի *think tank*-երի ծրագրերն ու հետազոտական աշխատանքներն առավել ազգայնական են: Դրանք հակառուսական ուղղվածություն ունեն, քաղաքական բնույթի աշխատանքներում գերակշռում են Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման պլանները, Ջավախքի խնդրում մատնանշվում է «անջատողականությունը»: Այսինքն՝ վրացական ազգայնականությունը, ի տարբերություն հայկական ազգայնականության, խրախուսվում է միջազգային դոնորների կողմից, քանի որ վրացական ազգայնականությունը բացահայտ հակառուսական է:
- Ակադեմիական հաստատություններում տարածաշրջանին առնչվող թեմաներում նկատվում են վրացակենտրոնությունն ու ազգայնականությունը (օրինակ՝ վրաց հայագետների շրջանում):
- Համալսարանական հաստատություններում մեծ տեղ են զբաղեցնում դրամաշնորհային ծրագրերը, ինչը հնարավորություն է տալիս համալսարանների ներսում հիմնադրել հետազոտական կենտրոններ՝ գիտական անձնակազմը ներգրավելով դրամաշնորհային ծրագրերում:

Վրաստանի ուղեղային կենտրոնները

	Անվանում	Ղեկավար	Գործունեության ուղղությունները	Ֆինանսավորում/ Համագործակցություն
1.	Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամ www.gfsis.org	Ալեքսանդր Ռոնդելի	Ռազմավարական հետազոտ. տնտեսագիտ., քաղաքագ. բնագավառներում	Ջ.Սորոսի, Ֆ.Էբերտի հիմն., RAND կորպ., Մարշալի կենտրոն, Սթենֆորդի համ., ԱՄՆ դեսպ. և այլն
2.	Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտ www.cipdd.org	Գիա Նոդիա	Բազմազգ հասարակ. քաղաքացիական ինտեգրացիոն գործընթացների	Ավստրիայի կառավ., Եվրախորհուրդ, Եվրասիա հիմն. , ԱՄՆ դեսպ., ՄԱԿ գրասենյակ, Բաց հասարակության ինստիտուտ
3.	Ֆ.Էբերտի հիմնադրամ www.fes.ge	Տարածաշրջանային տնօրեն՝ Մ.Ջորելիուս, Վրաստանի բաժնի տնօրեն Իա Տիկանաձե	Կոնֆլիկտների կանխարգելում, քաղաքական նոր մշակույթի ձևավորում	Բեռլինի և Բոննի Ֆ.Էբերտի հիմնադրամ

	Անվանում	Ղեկավար	Գործունեության ուղղությունները	Ֆինանսավորում/ Համագործակցություն
4.	Ռազմավարական հետազոտությունների կենտրոն www.src.ge	Իրակլի Մենաղարիշվիլի Նինո Մելիքաձե Նաթելա Սախոկիա	Ազգային անվտանգության հարցեր	Վրաստանի կառավարություն, Ազգային ժողով, նախագահ, ԱՄՆ պետ.դեպ., Համաշխարհային բանկ, ՄԱԿ գրաս., Զարգ. և համագործ. շվեյցարական գործակալություն, Բրիթիշ Փեթրոլիում, OXFAM, Սորոսի և Էբերտի հիմնադրամներ, սոցիալ-տնտես. հետազ. կենտրոն (Լեհաստան) և այլն
5.	Բաց հասարակության Վրաստանի հիմնադրամ www.osgf.ge	Կախա Խուցիշվիլի	Բաց, ժողովրդավարական հասարակության ձևավորում, դիկտատուրական ռեժիմների դեմ պայքար	Նյու Յորքի Բաց հասարակության ինստիտուտ
6.	Հյուսիսատլանտյան դաշինքի (NATO) տեղեկատվական կենտրոն www.natoinfo.ge	Թենգիզ Գոգոթիշվիլի	Նպաստել Վրաստանի անդամակցությանը դաշինքին	Հյուսիսատլանտյան դաշինք (NATO) , Վրաստանում հավատարմագրված դեսպանատների հետ
7.	Քաղաքական հետազոտությունների Թբիլիսյան դպրոց www.coe.int/T/E/Com/Files/Themes/Political-schools/Tbilisi-school.as	Արմազ Ախվլեդիանի	Նպաստել եվրոպական արժեքների տարածմանն ու եվրոպական կառույցներին Վրաստանի ինտեգրմանը	Եվրախորհուրդ
8.	Ռազմավարության և զարգացման ինստիտուտ www.stand.ge	Անդրո Բարնովի	Ինտեգրացման խնդիրներ, կրթական և մշակութային հարցեր, Ջավախքի հիմնահարց	Բիզնես սեկտոր

	Անվանում	Ղեկավար	Գործունեության ուղղությունները	Ֆինանսավորում/ Համագործակցություն
9.	Թուրք-վրացական կրթամշակութային հիմնադրամ (կենտրոնական գրասենյակը՝ Ստամբուլ) www.turkgurcuvakfi.org	Մ.Արդվինլի	Ճորոխի ավազանի վրացական ճարտարապետության ուսումնասիրություն, թուրք-վրացական երկխոսություն, միջմշակութային կապերի ամրապնդում, համատեղ կրթական ծրագրերի իրականացում	Թուրքիայում Վրաց Կաթոլիկ եկեղեցի
10.	Վրաց-եվրոպական քաղաքականության և օրենսդրական խորհրդատվության կենտրոն www.geplac.org	Կ.Մանիոկաս, Կ.Գոգոլաշվիլի, Ա.Գեգեշիձե	Վրաստանի օրենսդրական բարեփոխումների անցկացում, տնտեսագիտական հետազոտություններ	Կառավարություն, դատական իշխանություններ
11.	Անվտանգության վերլուծության վրացական կենտրոն	Դավիթ Սմիթ	Անվտանգության հարցեր, էթնիկ փոքրամասնությունների ինտեգրում	Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամ
12.	Ժողովրդավարական զարգացման հիմնադրամ	Նինո Բուրջանաձե	Ժողովրդավարության տարածում	ԱՄՆ
13.	Վրաստանում Եվրասիա համագործակցություն www.epfound.ge	Դավիթ Լիի	Սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների մշտական մոնիթորինգ, միջսահմանային համագործակցություն	Եվրասիա հիմնադրամ, Եվրոպական հանձնաժողովի միջազգային ֆինանսական կորպորացիա, Tacis, ՄԱԿ միջազգային զարգացման գրասենյակ, Շվեդական միջազգային զարգացման գործակալություն (SIDA), ԵԱՀԽ
14.	Վրաստանի Ռազմավարական հետազոտությունների և զարգացման կենտրոն www.csrdg.ge	Էկա Ուրուշաձե	Քաղաքացիական հասարակության կառուցում, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մոնիթորինգ	Նիդեռլանդների Միջազգային համագործակցության զարգացման կազմակերպություն, Եկեղեցու զարգացման ծառայություն, Էբերտի հիմնադրամ, Եվրասիա հիմնադրամ, Համաշխարհային բանկ

	Անվանում	Ղեկավար	Գործունեության ուղղությունները	Ֆինանսավորում/ Համագործակցություն
15.	Միջազգային հեռահաղորդակցման և տեղեկատվության կենտրոն www.itic.org.ge	-	Հետազոտություններ բիզնես ոլորտում, շուկայի մոնիթորինգ	Կանադական համագործակցության հիմնադրամ, Եվրասիա, Բաց Հասարակության ինստիտուտ, Աշխարհում խաղաղության Վինթտոն հիմնադրամ
16.	Ռազմավարական հետազոտությունների կովկասյան կենտրոն	Մամուկա Արեշիձե	Հարավկովկասյան ինտեգրման հարցեր	Եվրասիա հիմնադրամ
17.	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա (Վրաստան)	Ալեքսանդր Ռուսեցկի	Քաղաքացիական հասարակություն	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա
18.	Հիշողության ուսումնասիրության կենտրոն և կանանց հիմնադրամ www.taso.org.ge	Ցիսանա Գոդերձիշվիլի	Գենդերային հիմնահարցերը Վրաստանում	Բաց հասարակության հիմնադրամ
19.	Հարավային Կովկասի Գենդերային տեղեկատվական համացանց www.ginsc.net	Ելենա Ռուսեցկայա	Կանանց իրավունքների հիմնախնդիրները, բռնությունները կանանց նկատմամբ, կանանց դերը քաղաքական կյանքում, ֆեմինիզմ	Կանանց գլոբալ հիմնադրամ, Բաց հասարակության ինստիտուտ
20.	Քաղաքացիական հասարակության ինստիտուտ www.civilin.org	Վաժա Սալամաձե	Քաղաքացիական հասարակության կայացում, Շրջակա միջավայրի պահպանություն, Իրավական պետության կառուցում	Եվրամիություն, ԵԱՀԽ, ՋիԹիԶեթ, Փախստականների Նորվեգական խորհուրդ, Վրաստանում Կանադայի դեսպ., Վրաստանում ԱՄՆ դեսպ., OXFAM, Ուրբանիզացիայի ինստիտուտ, ՄԱԿ զարգացման գործակալություն և այլն

ՎՐԱՑԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ

Վահրամ Հովյան

Վերջին շրջանում հայ-վրացական հարաբերություններում տեղի են ունենում աննախադեպ զարգացումներ։ Դրանց դրսևորումներից է հայ-վրացական սահմանազատման հարցի սրումը սույն թվականի օգոստոսի վերջին, երբ վրացի սահմանապահները բռնագրավեցին ՀՀ-ին պատկանող սահմանամերձ Բավրա գյուղի որոշ հողատարածքներ՝ զրկելով տեղի բնակչությանը գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու հնարավորությունից։

Սակայն առավել աննախադեպ էր սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի կողմից Ջավախքի հիմնախնդիրների բարձրացումը։ ՀՀ նախագահը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «Ինտեգրում առանց ձուլման» սկզբունքից։ Ինտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը։ Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայկական Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը։ Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»[1]։ Նախկինում ՀՀ բարձրագույն ղեկավարությունը՝ նախագահի մակարդակով, երբևէ չէր բարձրացրել Ջավախքում լեզվական, կրոնական և ազգային ինքնության պահպանմանն առնչվող այլ հարցեր։ Ընդհակառակը, մինչ այդ ՀՀ իշխանությունները խուսափում էին այդ հիմնահարցերից՝ կոչ անելով ջավախքցիներին տիրապետել վրացերենին։

[1] Հայաստանի Հանրապետություն, 02.09.09, թիվ 168 (4759)։

Եթե հայ-վրացական սահմանային միջադեպը մեծ արձագանք չունեցավ վրացական տեղեկատվական դաշտում, ապա այլ էր իրավիճակը Ս.Սարգսյանի վերոհիշյալ հայտարարության առնչությամբ: Վրացական կողմը թե՛ պաշտոնական և թե՛ ոչ պաշտոնական մակարդակներով արձագանքեց ՀՀ նախագահի հայտարարությանը: Այդ արձագանքի վերլուծությունն օգտակար կարող է լինել Ջավախքի նկատմամբ վրացական քաղաքականությունը (այդ թվում նաև՝ տեղեկատվական դաշտում) ավելի խոր հասկանալու համար:

Վրաստանի պաշտոնական արձագանքը Ս.Սարգսյանի հայտարարությանը հնչեցրին երկու պետական գործիչներ՝ ԱԳ նախարար Գ.Վաշաձեն և փոխվարչապետ, վերաինտեգրման հարցերով պետնախարար Թ.Յակոբաշվիլին:

Առաջինի արձագանքը դիվանագիտական էր և խուսափողական: Ս.Սարգսյանի հայտարարությանը Գ.Վաշաձեն անդրադարձավ սեպտեմբերի 4-5-ը Հայաստան կատարած այցի ընթացքում: Զրուցելով լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ՝ Վրաստանի ԱԳ նախարարը նշեց, որ Վրաստանում հարգանքով են վերաբերվում Հայաստանում հնչած ցանկացած գաղափարի նկատմամբ: ՀՀ նախագահը, Գ.Վաշաձեի խոսքերով, չի ասել, թե Ջավախքում հայերենը պետք է հռչակել որպես մարզային լեզու: Ս.Սարգսյանն ընդամենը առաջարկել է այդ հարցը քննարկել: Իսկ Վրաստանը պատրաստ է ցանկացած հարց քննարկել Հայաստանի հետ: Վրաստանի ԱԳ նախարարը նշել է, որ անկախ նրանից՝ հայերենին կտրվի մարզային լեզվի կարգավիճակ, թե ոչ, հայերը Վրաստանում պաշտպանված են, իրավահավասար, և նրանց իրավունքները երաշխավորված են, ինչպես մյուս ազգային փոքրամասնությունների պարագայում: Հայերը, ըստ Գ.Վաշաձեի, Վրաստանի պատմության և մշակույթի անբաժանելի մասն են[1]:

Թ.Յակոբաշվիլու արձագանքը ՀՀ նախագահի հայտարարությանը, թեև նույնպես աչքի էր ընկնում քաղաքական կոռեկտությամբ, սակայն ավելի հստակ էր և կտրուկ: Հարցազրույց տալով ռուսական *«Независимая газета»* թերթին՝ Վրաստանի փոխվարչապետը հայտարարեց, որ ինքը չի կարծում, թե Ս.Սարգսյանի հայտարարությունը կապված է հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման հետ, կամ դրա հետևում կանգնած են Ռուսաստանի շահերը: Ըստ Թ.Յակոբաշվիլու՝ Հայաստանն ու Վրաստանը լավ հարևաններ են և այդպիսին էլ կմնան հետայսու:

Անդրադառնալով Ջավախքում հայոց լեզվին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ շնորհելու հարցին՝ Վրաստանի փոխվարչապետը նշեց. «Մենք շատ ուրախ ենք, որ Հայաստանում հայերենը միակ պետական լեզուն է»[2]: Այս հայ-

[1] Грузия готова обсуждать любые идеи с Арменией – МИД http://apsny.ge/2009/pol/1252105205.php?95ed8b40

[2] Саргсян пошел на обострение: Ереван рекомендует Тбилиси повысить статус армянского языка http://www.ng.ru/cis/2009-09-03/5_Sargsyan.html?mthree=3

տարարությունը, ըստ էության, պարզ ակնարկ է առ այն, որ Վրաստանի համար ցանկալի չէ տեսնել հայերենը որպես պետական լեզու Վրաստանում:

Ինչ վերաբերում է Հայ Առաքելական եկեղեցու իրավական գրանցման և հայկական հուշարձանների պահպանման խնդրին, ապա այդ առնչությամբ Թ.Յակոբաշվիլին նշում է, որ Հայ Առաքելական եկեղեցու գրանցումն ընթացքի մեջ է, և Հայաստանը տեղյակ է պահվել այդ մասին: Վրաստանում, ըստ Թ.Յակոբաշվիլու, բոլոր պատմական, ճարտարապետական, կրոնական հուշարձանները՝ անկախ դրանց ծագումից, գտնվում են պետության պահպանության ներքո, և դա նույնպես հայտնի է Հայաստանին: Պարզապես խնդիր կա մի քանի վիճելի հուշարձանների և եկեղեցիների շուրջ: Սակայն կարևորն այն է, որ այդ վիճելի հարցերով զբաղվեն պատմաբաններն ու մասնագետները, այլ ոչ թե քաղաքական գործիչները:

Ինչ վերաբերում է Բավրա գյուղի մոտ տեղի ունեցած սահմանային միջադեպին, ապա Թ.Յակոբաշվիլու կարծիքով՝ նմանատիպ միջադեպեր եղել են և կլինեն, քանի դեռ վերջնականապես լուծված չէ հայ-վրացական սահմանի հստակեցման և ապառազմականացման հարցը: Իսկ այդ ուղղությամբ աշխատանքները տարվում են հայ- վրացական համատեղ հանձնաժողովի կողմից:

Վրացական ոչ պաշտոնական շրջանակների արձագանքը Ս.Սարգսյանի հայտարարությանը չուներ պաշտոնական արձագանքին բնորոշ քաղաքական կոռեկտությունը: Այստեղ գնահատականներն ու մեկնաբանությունները տրվում էին առավելապես բաց տեքստով: Ոչ պաշտոնական շրջանակների գնահատականներում գերիշխող էին հակահայկական և հակառուսական տրամադրությունները, իսկ մեկնաբանությունները կապվում էին հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր բարելավման, ռուսական գործոնի ազդեցության և այլ հանգամանքների հետ:

Այսպես, ռուսական *«Независимая газета»* թերթին տված հարցազրույցում Վրաստանի քաղաքական գործիչներից մեկը, որի անունը չի նշում ռուսական պարբերականը, Ս.Սարգսյանի հայտարարությունը կապել է հայ-թուրքական հարաբերություններում վերջերս տեղի ունեցող զարգացումների հետ: Ըստ այդ գործչի՝ Ս.Սարգսյանի հայտարարությունը հաջորդեց հայ-թուրքական սահմանի բացման վերաբերյալ տեղեկություններին: Փաստորեն, եզրակացնում է քաղաքական գործիչը, Հայաստանի իշխանություններն այս բոլոր տարիների ընթացքում անկեղծ չեն եղել Վրաստանի նկատմամբ, և դա պայմանավորված էր նրանով, որ Վրաստանը Հայաստանի համար արտաքին աշխարհի հետ կապող միակ պատուհանն էր[1]:

Ըստ էության, ստացվում է, որ, համաձայն վրացի քաղաքական գործչի, Հայաստանը միշտ էլ Վրաստանի նկատմամբ ոտնձգություններ կատարելու ցան-

[1] Նույն տեղում:

կություն կամ հավակնություն է ունեցել: Պարզապես մինչ այժմ առկա աննպաստ հանգամանքները թույլ չեն տվել դա անելու: Այժմ Հայաստանի համար ավելի բարենպաստ իրավիճակի պայմաններում վերջինս գնում է Վրաստանի նկատմամբ ոտնձգություններ կատարելու ճանապարհով:

Վրացական *www.apsny.ge* կայքէջը, վկայակոչելով «Ախալի տառբա» (Նոր սերունդ) թերթը, հայ-վրացական հարաբերություններում նկատվող վերջին զարգացումները կապում է ռուսական գործոնի հետ: Ըստ այդմ՝ Ռուսաստանը փորձում է ամեն կերպ ապակայունացնել իրավիճակը Սամցխե-Ջավախքում, ինչին նպաստում են տեղական ծայրահեղական կազմակերպությունները և հայ քաղաքական գործիչները: Ինչպես հաղորդում է կայքէջը, վրացական փորձագետները վաղուց սպասում էին իրավիճակի լարվածություն Սամցխե-Ջավախքում[1]:

Հրապարակված նյութի մեջ ՀՀ նախագահի հայտարարությունը Ջավախքի կապակցությամբ ընկալվում է որպես հակավրացական: Նշվում է, որ եթե մինչ այժմ հակավրացական հայտարարություններով հանդես էր գալիս միայն Հայաստանի ընդդիմությունը, իսկ իշխանությունները ձեռնպահ էին մնում այդպիսի քայլերից, ապա այժմ, Հայաստանի նախագահի կարծիքով, հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակի շնորհումը, Հայ Առաքելական եկեղեցու իրավական գրանցումը և հայկական հուշարձանների պահպանումը միայն կնպաստեն հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը[2]: Փաստորեն, հայ-վրացական բարեկամության ամրապնդման կոչը՝ լեզվական, կրոնական և մշակութային ժառանգության պահպանման խնդիրների լուծման միջոցով հակավրացական է դիտվում: Հրապարակված նյութի կանխատեսմամբ՝ Ս.Սարգսյանի հայտարարությունը կոգևորի Սամցխե-Ջավախքի անջատողական ուժերին, որոնք վերջին մեկ տարվա ընթացքում աչքի չէին ընկնում մեծ ակտիվությամբ[3]:

Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ.Կանդելակին նույնպես Ս.Սարգսյանի հայտարարությունը կապում է ռուսական ազդեցության հետ: Ըստ վրացի խորհրդարանականի՝ Ռուսաստանն ուժեղացնում է ճնշումը Հայաստանի վրա, որպեսզի վերջինիս հրահրի իր հյուսիսային հարևանի դեմ: Համաձայն Գ.Կանդելակիի՝ Վրաստանը նշանակալի քայլեր է ձեռնարկել հայերին երկրի հասարակական կյանքին ինտեգրելու համար: Սակայն, չնայած դրան, Ռուսաստանը կարող է օգտագործել Ջավախքը՝ տարածաշրջանում դրությունը ապակայունացնելու համար[4]:

[1] Россия пытается создать в Грузии очередной очаг напряженности http://www.apsny.ge/2009/conf/1251917548.php?03a5df60

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Вице-премьер Грузии: «Пусть Армения занимается развитием армянского языка у себя» http://www.vesti.az/news.php?id=15322

Հայաստանի նախագահի հնչեցրած հայտարարության կապակցությամբ ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել Կովկասի հարցերով վրացի փորձագետ Մ.Արեշիձեն: Նրա կարծիքով, եթե Հայաստանը հայերենը պետական լեզու հռչակելու հարց բարձրացներ նաև ԱՄՆ-ի ու Ռուսաստանի առաջ, որտեղ նույնպես համախումբ կերպով բնակվում են հայեր, ապա դա հասկանալի կլիներ: Մինչդեռ տվյալ դեպքում, Մ.Արեշիձեի խոսքերով, կասկածներ են առաջանում, որ Հայաստանը խոսում է այդ խնդրի մասին այնտեղ, որտեղ կարողանում է դա անել[1]:

Այս մոտեցումը համահունչ է Ջավախքը որպես հայկական սփյուռքի համայնքներից մեկը դիտարկելու և այդպիսին ներկայացնելու վրացական ավանդական տեղեկատվական քաղաքականությանը: Ջավախահայությունը դիտվում է ոչ թե որպես իր սեփական երկրում ապրող Հայության մի հատված, այլ որպես օտար երկրում բնակություն հաստատած սփյուռքահայ համայնքներից մեկը, ինչպիսիք են, օրինակ, ԱՄՆ-ի և Ռուսաստանի հայ համայնքները:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Գ.Սագարեիշվիլին կարծում է, որ Հայաստանի նախագահի առաջարկության կենսագործումը կհանգեցնի Վրաստանի և նրա պետականության վերացմանը: Եթե Ջավախքում հայերենին տրվի մարզային լեզվի կարգավիճակ, ապա նման պահանջով հանդես կգան նաև Վրաստանի այլ ազգային փոքրամասնությունները՝ ադրբեջանցիները, քրդերը և այլն: Ըստ Գ.Սագարեիշվիլու՝ Վրաստանի ազգային փոքրամասնությունները հնարավորություն ունեն ազատորեն կիրառելու իրենց մայրենի լեզուները (նկատի ունի ներքին հաղորդակցության ժամանակ՝ ոչ պաշտոնական մակարդակում- Վ.Հ.): Հայերը, մասնավորապես, որոնք ապրում են ինչպես Ջավախքում, այնպես էլ Թբիլիսիում, բացի իրենց մայրենի լեզվով խոսելու հնարավորությունից, ունեն նաև իրենց դպրոցները, թատրոնները, եկեղեցիները: Վրաստանի ազգային փոքրամասնությունների համար, համաձայն վրացի պատգամավորի, լավ կլիներ, որ ուսումնասիրեին վրացերենը[2]:

Վրացի խորհրդարանականի այս մեկնաբանությունները վերաբերում են լեզվական խնդրին: Սակայն ՀՀ նախագահի հայտարարությունն ավելի լայն ծավալվելու տեղիք տվեց Գ.Սագարեիշվիլուն: Նա նշում է, որ Վրաստանն իր հերթին կարող է հավակնություններ ցուցաբերել Հայաստանի նկատմամբ: 1921թ., երբ Վրաստանում իշխանությունն անցավ բոլշևիկների ձեռքը, Քվեմո-Քարթլիի որոշ տարածքներ տրվեցին Հայաստանին: Այդ տարածքներում «կան վրացական պատմամշակութային հուշարձաններ, որոնք այժմ գտնվում են

[1] Приемлем ли региональный статус армянского языка? http://apsny.ge/2009/pol/1252003339.php?188415f0

[2] Указанный Арменией путь уничтожит Грузию – депутат грузинского парламента http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=14650&SectionID=0&RegionID=0&Date=-09/04/2009&PagePosition=1

ողբալի վիճակում»: Մինչդեռ Վրաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիները, ըստ վրացի պատգամավորի, վերանորոգվում են և տրվում օգտագործման: Բացի այդ, երբ հայերը հալածանքների էին ենթարկվում հզոր ուժերի կողմից, վրացիները ապաստան են տվել և պաշտպանել նրանց: Վրացի պատգամավորն ավելի հեռուն է գնում և նշում, որ հայերը հավակնություններ ունեն նաև Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Սակայն նրանք պետք է գիտակցեն, որ «դատապարտված են ապրելու ադրբեջանցիների հետ միասին»: Դա, համաձայն Գ.Սագարեիշվիլու, պետք է հիշեն նաև աբխազներ ու օսերը: Վրացի պատգամավորի կարծիքով՝ և՛ հայերը, և՛ աբխազներն ու օսերը պետք է գիտակցեն, որ հեռու չէ այն օրը, երբ Վրաստանն ու Ադրբեջանը ոտքի կկանգնեն իրենց «պատմական տարածքները ազատագրելու համար»[1]:

Ակնհայտ է, որ ՀՀ նախագահի հայտարարությունը առիթ եղավ վրացական որոշ շրջանակների համար՝ ի դեմս պատգամավոր Գ.Սագարեիշվիլու, ծավալելու հակահայ քարոզչություն: Մեկնաբանելով Ս.Սարգսյանի հայտարարությունը՝ վրացի պատգամավորն անդրադառնում է Հայաստանի նախագահի բարձրացրած լեզվական հարցին՝ խոսքի մեծ մասը նվիրելով այլ թեմատիկ շրջանակներում հակահայ քարոզչությանը:

Անկախ փորձագետ Զ.Անջափարիձեն հայ-վրացական հարաբերություններում վերջին զարգացումները դիտարկում է որպես երկու երկրների միջև լարվածության արտահայտություն: Նրա կարծիքով՝ պատահական չէ, որ հայ-վրացական սահմանային միջադեպը Բավրա գյուղի մոտ, որի շուրջ, ըստ փորձագետի, մեծ աղմուկ են բարձրացրել հայկական լրատվամիջոցները, և Հայաստանի նախագահ Ս.Սարգսյանի հայտարարությունը Ջավախքի վերաբերյալ ժամանակային առումով համընկնում են: Փորձագետի կարծիքով՝ որքան էլ փորձեն համոզել, թե Հայաստանի նախագահի խոսքերը լրատվամիջոցների կողմից ներկայացվում են համատեքստից կտրված և իրականում նա խոսել է հայ-վրացական հարաբերությունների խորացման մասին, խնդիրը հնարավոր չէ թաքցնել: Փորձագետը գտնում է, որ Թբիլիսիի կողմից խնդիրները շարունակաբար քողարկելու քաղաքականությունն է հանգեցրել դեպքերի ներկայիս վիճակին: Իրականում, Հայաստանի նախագահի ելույթում հնչած մտքերը ոչ միայն հստակ էին, այլև, ըստ Զ.Անջափարիձեի, սպառնալիք էին պարունակում: Փորձագետը որպես սպառնալիք է գնահատում Ս.Սարգսյանի այն միտքը, որ Ջավախքի հարցերում Հայաստանը պետք է լինի նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային: Համաձայն փորձագետի՝ այդ արտահայտության նպատակն է Թբիլիսիին հասկացնել, որ Հայաստանը լրջորեն է տրամադրված և պետք չէ թերագնահատել Հայաստանի նախագահի ելույթը:

[1] Նույն տեղում:

Փորձագետի կարծիքով՝ Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթուղու կառուցումը խոր անհանգստություն է առաջացրել Հայաստանում, որը փորձում է ամեն կերպ տապալել այդ նախագծի իրականացումը: Ըստ Զ.Անջափարիձեի՝ Հայաստանը դեմարշ է սկսում Վրաստանի դեմ այն ժամանակ, երբ վերջինս ուշքի չի եկել 2008թ. օգոստոսյան ռուս-վրացական պատերազմից, և Ռուսաստանի հետ ռազմական նոր բախման հավանականությունը դեռևս մեծ է: Հաշվի առնելով այն, որ Վրաստանի դեսուվերենացման գաղափարը դեռևս պահպանվում է ռուսաստանյան շրջանակներում, անհիմն չէ այն վարկածը, որ Հայաստանի սադրանքների հետևում կանգնած է Մոսկվան: Ըստ Զ.Անջափարիձեի, եթե Վրաստանը զիջման գնա և հայերենին շնորհի մարզային լեզվի կարգավիճակ, նմանատիպ պահանջով կարող են հանդես գալ նաև Վրաստանի մյուս ազգային փոքրամասնությունները, օրինակ՝ ադրբեջանցիները[1]:

Փորձագետի մեկնաբանություններում միակ կառուցողական դատողությունն այն է, որ, ըստ նրա, առկա իրավիճակի պատճառն այն է, որ Վրաստանի թե՛ նախկին և թե՛ ներկա իշխանությունները լուրջ ուշադրություն չեն դարձրել ազգային փոքրամասնություններին վրաց հասարակության մեջ ինտեգրելու հարցի վրա, թեև այդ նպատակով ծախսվել են զգալի միջոցներ: Այնուամենայնիվ, փորձագետի կարծիքով, հանուն արդարության պետք է նաև նշել, որ Վրաստանի իշխանությունների գործադրած ջանքերն ազգային փոքրամասնությունների ինտեգրման ուղղությամբ բարենպաստ հողի վրա չեն հայտնվել[2]: Նա, ըստ էության, մեղադրանք է ներկայացնում ազգային փոքրամասնություններին՝ քողարկված կերպով հանդիմանելով նրանց Վրաստանի իշխանությունների գործադրած ջանքերին չարձագանքելու համար:

Փորձագետը գտնում է, որ Հայաստանի նախագահի ելույթը կոգևորի Ջավախքի կենտրոնախույս ուժերին՝ անջատողականության ալիք բարձրացնելով այդ տարածաշրջանում: Պետք չէ աչք փակել և անուշադրության մատնել Ս.Սարգսյանի ելույթը: Կոնֆլիկտները սովորաբար սկսվում են նախագահների հայտարարություններից հարևան պետություններում հայրենակիցների ծանր վիճակի մասին, դրան հաջորդում են բախումները տեղեկատվական դաշտում, այնուհետև՝ սահմանային միջադեպերը, որոնք էլ վերաճում են լուրջ բախումների: Վերջում փորձագետը նշում է, որ, եթե Թբիլիսին մերժի հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակի շնորհումը և այդ հողի վրա սկսվեն բախումներ, ապա Երևանն անմիջապես կհայտարարի, որ ցանկանում էր խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով,

[1] Заал Анджапаридзе, Назревает новый армяно-грузинский конфликт? http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=14658&SectionID=0&RegionID=0&Date=09/04/2009&PagePosition=1

[2] Նույն տեղում:

իսկ Թբիլիսին համարժեք մոտեցում չցուցաբերեց: Այնպես որ՝ գնդակը Վրաստանի դաշտում է[1]:

Լեյբորիստական կուսակցության՝ միջազգային հարցերով քարտուղար Նեստան Կիրտաձեն Հայաստանի նախագահ Ս.Սարգսյանի կողմից լեզվական և կրոնաեկեղեցական հարցերի բարձրացումը համարում է սադրանք՝ պահանջելով ինչպես պաշտոնական Թբիլիսիից, այնպես էլ վրաց հասարակությունից ու ընդդիմությունից հստակ և կոշտ պատասխան տալ հայկական կողմին: Վրաստանը պետք է հասկացնի հայկական կողմին, որ բազմազգ երկիր է, հանդուրժողական, սակայն իր ինքնիշխանության և տարածքների հաշվին չի համաձայնի սադրանքի:

Վրացի քաղաքական գործիչը գտնում է, որ այդպիսի սադրանքները նախագահ Մ.Սահակաշվիլու և նրա վարչակարգի գործունեության հետևանքով են ի հայտ գալիս: Իրենց անհեռատես քաղաքականությամբ Վրաստանի իշխանությունները երկիրը հասցրել են այդ վիճակի: Եթե Վրաստանի արտաքին քաղաքականության գիծը լիներ խաղաղ, բարիդրացիական հարաբերությունների զարգացումը, այսօր երկիրը չէր կանգնի սադրանքները դիմագրավելու խնդրի առջև: Մինչդեռ Մ.Սահակաշվիլու վարչակարգն իր արկածախնդիր և չմտածված քաղաքականությամբ երկրի ինքնիշխանությունը դրել է լրջագույն սպառնալիքների տակ: Մ.Սահակաշվիլու վարած քաղաքականության հետևանքով Վրաստանը տարածքային կորուստներ ունեցավ, երկրի տարածքի վրա ստեղծվեցին երեք ինքնիշխան պետություններ, իսկ Վրաստանի հետագա մասնատման և ինքնիշխանության կորստի վտանգն այսօր էլ իրական է: Ն.Կիրտաձեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին՝ այլևս չգնալ սադրանքների[2]:

Թե որքանով է Մ.Սահակաշվիլու վարած քաղաքականության նկատմամբ վերոնշյալ քննադատությունն օբյեկտիվ և հիմնավոր, այլ քննության հարց է: Կարևորն այն է, որ վերոնշյալ մեկնաբանությունը, ըստ էության, վրացական ներքաղաքական կյանքում Ջավախքի գործոնը շահարկման առարկա դարձնելու դրսևորումներից է: Վրացական ընդդիմադիր ուժը Հայաստանի նախագահի հայտարարությունն օգտագործում է որպես առիթ՝ նախագահ Մ.Սահակաշվիլուն քննադատելու համար:

Հնչած գնահատականներից էապես տարբերվում են Ս.Սարգսյանի հայտարարության՝ վիրահայ առաջնորդների մեկնաբանությունները: Վրաստանաբնակ Հայության առաջնորդներից մեկը՝ «Բազմազգ Վրաստան» հ/կ նախագահ Առնոլդ Ստեփանյանը, ռուսական *«Независимая газета»* թերթին տված

[1] Նույն տեղում:

[2] Грузинский политик требует дать жесткий ответ президенту Армении http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=14519&SectionID=0&RegionID=0&Date=09/02/2009&PagePosition=1

հարցազրույցում նախ արձանագրել է, որ Ս.Սարգսյանը հայաստանյան իշխանությունների առաջին ներկայացուցիչն է, ով հանդես է գալիս Վրաստանում հայոց լեզվի կարգավիճակի բարձրացման առաջարկությամբ: Մինչ այս այդպիսի առաջարկությամբ հանդես էր գալիս միայն հայաստանյան ընդդիմությունը: Այնուհետև, Ա.Ստեփանյանի կարծիքով, ՀՀ նախագահի հայտարարությունը չի հանգեցնի իրավիճակի ապակայունացմանը Ջավախքում: Ջավախքցիները մինչ այդ էլ հանդես են եկել գործավարությունը, ինչպես նաև այլ թղթաբանությունը վրացերենի հետ մեկտեղ նաև հայերենով իրականացնելու պահանջով: Ա.Ստեփանյանի մտահոգությունն այն է, որ Ս.Սարգսյանի հայտարարությունը կարող է ուժեղացնել վրացական որոշ շրջանակներում հակահայկական տրամադրությունները, որոնք ակտիվանում են տարին երկուերեք անգամ պարբերականությամբ: Ըստ «Բազմազգ Վրաստան» հ/կ նախագահի՝ Ս.Սարգսյանը բարձրացրել է շատ կարևոր հարցեր, որոնք պետք է լուծել, այլ ոչ թե լռության մատնել[1]:

Ավելի դիվանագիտական էր Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրդի մեկնաբանությունը: Ըստ նրա՝ Հայաստանի նախագահի խոսքերը ներկայացվում են համատեքստից կտրված: Իրականում Ս.Սարգսյանը խոսել է վրաց հասարակության մեջ հայերի ինտեգրման անհրաժեշտության մասին: Ինչ վերաբերում է հայերենը Ջավախքում մարզային լեզու հռչակելու խնդրին, ապա, Վ.Բայբուրդի գնահատմամբ, Վրաստանի ազգային փոքրամասնություններն առանց այդ էլ ունեն իրենց լեզուներն ազատորեն կիրառելու հնարավորություն: Իսկ ջավախահայության մասով Վ.Բայբուրդը գտնում է, որ լավ կլիներ, եթե նրանք առաջին հերթին սովորեին վրացերեն[2]:

Վրաստանի տեղեկատվական քաղաքականությունը Ջավախքի նկատմամբ բնորոշվում է նաև ադրբեջանական տեղեկատվական ռեսուրսների օգտագործմամբ: Վրացական տեղեկատվական աղբյուրներում հաճախ են տեղ գտնում Ջավախքի, հայ-վրացական հարաբերությունների մասին արտատպված ադրբեջանական նյութեր, ինչպես նաև ադրբեջանցիների կողմից հնչեցված կարծիքներ: Այլ կերպ ասած՝ վրացական տեղեկատվական դաշտը յուրահատուկ ամբիոն է ադրբեջանական հակահայ քարոզչության համար: Միևնույն ժամանակ, ադրբեջանական հակահայ նյութերը որոշակի ռեսուրս են հանդիսանում վրացական տեղեկատվական դաշտի համար: Եվ հայ-վրացական հարաբերությունների վերջին զարգացումներին արձագանքելիս նույնպես վրացական տեղեկատվական դաշտը զերծ չմնաց ադրբեջանական նյութերի օգտագործումից:

[1] Саргсян пошел на обострение: Ереван рекомендует Тбилиси повысить статус армянского языка http://www.ng.ru/cis/2009-09-03/5_Sargsyan.html?mthree=3

[2] Приемлем ли региональный статус армянского языка? http://apsny.ge/2009/pol/1252003339.php?188415f0

Այսպես, *www.apsny.ge* կայքէջը սեպտեմբերի 4-ին հրապարակեց մի նյութ, որտեղ արտացոլված էր ադրբեջանցի վերլուծաբան Ֆ.Սադիխովի կարծիքը հայ-վրացական հարաբերությունների վերջին զարգացումների մասին: Նույն նյութը սեպտեմբերի 3-ին հրապարակվել էր ադրբեջանական *www.1news.az* կայքէջում: Չի բացառվում, որ վրացական կայքէջը նյութը արտատպել է ադրբեջանական կայքէջից:

Ըստ ադրբեջանցի վերլուծաբանի՝ Հայաստանը երբեք չի թաքցրել տարածքային հավակնությունները հարևան Վրաստանից: Այսօր, երբ նկատվում է հայ-թուրքական սահմանի բացման տարբերակ, ըստ Սադիխովի, Հայաստանը փորձում է Վրաստանի նկատմամբ սադրանքի միջոցով հիմնավորել սեփական հասարակության առաջ հայ-թուրքական սահմանի բացման անհրաժեշտությունը՝ փորձելով ցույց տալ, որ տրանզիտային կախվածությունը Վրաստանից վտանգավոր է Հայաստանի համար: Համաձայն ադրբեջանցի վերլուծաբանի՝ «Ռուսաստանի ֆորպոստ Հայաստանը» փորձում է սադրանքի գնալ Վրաստանի նկատմամբ երկու հատվածներում: Առաջինը Սամցխե-Ջավախքն է, որտեղով անցնում են և կառուցվում տարածաշրջանային կոմունիկացիաները, մասնավորապես՝ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին: Երկրորդը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սահմանների հատման վայրում է, որտեղով անցնում են տարածաշրջանային նավթագազային խողովակաշարերը: Հայաստանը, ըստ Սադիխովի, ապակայունացնելով իրավիճակը Վրաստանի «մուտքի» և «ելքի» հատվածներում, փորձում է տապալել տարածաշրջանային էներգետիկ և կոմունիկացիոն ծրագրերը: Համաձայն ադրբեջանցի վերլուծաբանի՝ Հայաստանն իր ողջ գոյության ընթացքում փորձել է ապակայունացնել իրավիճակը Հարավային Կովկասում: Այժմ էլ շարունակում է իր այդ քաղաքականությունը՝ մի կողմից անջատողական տրամադրություններ հրահրելով Սամցխե-Ջավախքում, որի համար օգտագործում է տեղի հայ բնակչությանը, մյուս կողմից սրելով հայ-վրացական սահմանային հարցերը[1]:

Ակնհայտ է, որ ադրբեջանցի վերլուծաբանի կողմից հնչում են տրամաբանորեն միմյանց հետ չկապված անկանոն մեղադրանքներ և ապատեղեկատվություն: Ի՞նչ կապ ունեն միմյանց հետ, օրինակ, Վրաստանի նկատմամբ տարածքային հավակնությունները և հայ հասարակությանը համոզելը, թե Վրաստանից կախվածությունը վտանգավոր է Հայաստանի համար: Հայ հասարակությանն առանց այդ էլ հայտնի է, որ միակողմանիորեն կախվածությունը Վրաստանից վտանգավոր է Հայաստանի համար: Մեղադրանքների ընդհանրությունն այն է, որ դրանք կրում են ընդգծված հակահայկական

[1] Фикрет Садыхов: «Армения умышленно дестабилизирует ситуацию на «входе» и «выходе» в Грузию» http://www.apsny.ge/2009/pol/1252088606.php?20e45500; http://www.1news.az/politics/-20090903055202094.html

բնույթ: Դրանց նպատակային ուղղվածությունը հստակ է՝ տեղեկատվական ազդեցության միջոցով խորացնել լարվածությունը հայ-վրացական հարաբերություններում: Ցավալին այն է, որ ադրբեջանական հակահայ քարոզչությունը արձագանք է ստանում վրացական տեղեկատվական դաշտում և տարածվում վրացական տեղեկատվական միջոցներով:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ-վրացական հարաբերությունների վերջին զարգացումներին վրացական արձագանքը միանշանակ չէ: Եթե Հայ Առաքելական եկեղեցու գրանցման, հայկական մշակութային կոթողների պահպանության հարցերում վրացական կողմը սկզբունքորեն ժխտողական վերաբերմունք չդրսևորեց՝ ներկայացնելով, որ այդ խնդիրների լուծումը պարզապես ժամանակի հարց է, ապա հայերենին Ջավախքում տարածաշրջանային լեզվի կարգավիճակ շնորհելու հարցում դրսևորեց սկզբունքորեն մերժողական վերաբերմունք: Դա վրացական պաշտոնական շրջանակների կողմից արտահայտվեց նրբանկատ և կոռեկտ կերպով: Մինչդեռ ոչ պաշտոնական շրջանակները՝ առանձին քաղաքական գործիչներ, փորձագետներ, լրատվամիջոցներ և այլն, այն արտահայտեցին բաց տեքստով: Հնչեցված գնահատականներում գերակշռում էին հիմնականում հակահայկական և հակառուսական տրամադրությունները: Հայաստանի կողմից լեզվական հարցի բարձրացումը կապվում էր Հայաստանի տարածքային հավակնությունների, տարածաշրջանային էներգետիկ և կոմունիկացիոն ծրագրերը խափանելու փորձերի, Ռուսաստանի ազդեցության, հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորման և այլ գործոնների հետ: Այս գնահատականների ու մեկնաբանությունների տարածման գործում վրացական տեղեկատվական դաշտը չխուսափեց նաև ադրբեջանական ռեսուրսների օգտագործումից: Հիշյալ գնահատականներից, սակայն, որոշակիորեն տարբերվում էին վիրահայոց առաջնորդների (Ա.Ստեփանյան, Վ. Բայբուրդ) գնահատականները, համաձայն որոնց՝ բարձրացված խնդիրները մտացածին չեն, և այդ խնդիրների լուծումը կնպաստի հայերի ինտեգրմանը վրաց հասարակության մեջ:

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Արաքս Փաշայան

Թալիշներն իրանական հնագույն ժողովուրդներից են, հիմնականում շիադավան, բնակվում են Ադրբեջանի հարավարևելյան՝ Իրանին սահմանամերձ կասպիական շրջաններում (Լենքորան, Լերիկ, Մասալին, Աստարին, Յարդմիլին), նաև՝ Բաքվում և հարակից շրջաններում, ինչպես նաև Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում: Թալիշների հետ կապված կնճռոտ հարցերից մեկն այդ ժողովրդի թվաքանակի մասին տարաբնույթ տվյալներն են: Համաձայն 1999թ. Ադրբեջանում անցկացված մարդահամարի՝ նրանց թիվը 76.800 է, սակայն կան նաև այլ տվյալներ, որոնք ժողովրդագրական բարձր ցուցանիշ ունեցող թալիշների իրական թիվը համարում են 200.000-ից 500.000-ը:

XIX դարում ռուս-պարսկական պատերազմների և դրանց արդյունքում կնքված Գյուլիստանի (1813թ.) ու Թուրքմենչայի (1828թ.) պայմանագրերով վերջ դրվեց թալիշական խանության գոյությանը, և թալիշաբնակ հյուսիսային շրջաններն անցան Ռուսաստանի վերահսկողությանը: XX դարում թալիշներն ինքնավար պետական միավորում ստեղծելու երկու անհաջող փորձ կատարեցին: Առաջինը 1919-ին էր, երբ թալիշներն ապստամբեցին մուսավաթական Ադրբեջանի դեմ և հռչակեցին Խորհրդային Մուղանի Հանրապետությունը, որը երեք ամսվա կյանք ունեցավ: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո թալիշաբնակ հյուսիսային շրջանները հայտնվեցին Խորհրդային Ադրբեջանի կազմում՝ վերջնականորեն բաժանելով Իրանի և Ադրբեջանի թալիշներին:

Ընդհուպ մինչև 1930-ականների վերջերը Ադրբեջանում թալիշների ազգային իրավունքները որոշակիորեն պաշտպանվում էին. նրանք սեփական լեզվով կրթություն ստանալու հնարավորություն ունեին: Սակայն այդ շրջանից ի վեր Ադրբեջանում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող խտրականությունների հետևանքով թալիշներն աստիճանաբար սկսեցին ձուլվել: Ոչ թուրքական տարրի, այդ թվում՝ թալիշների նկատմամբ կիրառվող կոշտ քաղաքականության արդյունքում թալիշերենը սկսեց աստիճանաբար դուրս մղվել՝ հօգուտ ադրբեջաներենի: Վտանգվեց նաև թալիշական ինքնության գաղափարը:

Թալիշական ազգային զարթոնքի հարցում մեծ նշանակություն ունեցավ 1993թ. հունիսին թալիշ մի խումբ ազգայնական գործիչների կողմից Ադրբեջանի կազմում Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետության հռչակու-

մը, որը նույնպես շատ կարճ կյանք ունեցավ՝ գոյատևելով մինչև օգոստոս ամիսը: Կենտրոնական իշխանության կողմից թալիշական հուզումները դաժանորեն ճնշվեցին, բազմաթիվ ակտիվիստներ, այդ թվում՝ շարժման ղեկավարները, հայտնվեցին բանտերում և ընդհատակում, շատերը տարագրվեցին: Իշխանությունների ձեռնարկած քայլերը նաև հոգեբանական նշանակություն ունեցան՝ թալիշական շրջաններում ստեղծելով վախի մթնոլորտ: Թալիշական էթնոսի և ազգային խնդիրների գոյության փաստն Ադրբեջանում այլևս փակուղի մտավ:

Տասնամյակների ընթացքում իրականացված հետևողական քայլերի արդյունքում թալիշական շրջանակներում ուսուցման և հաղորդակցության հիմնական լեզուն դարձավ ադրբեջաներենը: Թալիշերենը պահպանեց իր նշանակությունը հիմնականում առանձին գյուղական շրջաններում՝ որպես ընտանեկան շփման միջոց: Հատկանշական է, որ Ադրբեջանում թալիշերենով հրատարակություններ գրեթե չկան, հազվադեպ դարձած թալիշական մամուլը և գրականությունը հիմնականում հրատարակվում են ադրբեջաներենով:

Միևնույն ժամանակ, թալիշների թուրքացման գործընթացը զուգորդվեց Ադրբեջանի նոր պատմության համար ոչ ցանկալի հնագույն թալիշական տեղանունների անվանափոխությամբ կամ թուրքացմամբ: Պատահական չէ, որ Ադրբեջանի պատմության դասագրքերում թալիշների մասին չի խոսվում, նրանք, ընդհանուր առմամբ, դիտարկվում են որպես Լենքորանի բնակիչներ կամ Լենքորանի մշակույթի կրողներ:

Թալիշների նկատմամբ խտրականության մեկ այլ ապացույց է այն փաստը, որ թալիշաբնակ շրջաններում պաշտոնավարում են ոչ թե թալիշներ, այլ տարբեր շրջաններից, հատկապես Նախիջևանից ժամանած մարդիկ: Զուգահեռաբար, թալիշական ազգային շրջաններում տեղի է ունենում ադրբեջանցիների և քրդերի վերաբնակեցում, իսկ առկա սոցիալ-տնտեսական ահագնացող դժվարությունների պայմաններում թալիշ երիտասարդների զգալի մասը ստիպված է արտագաղթել: Առկա միտումները տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը փոխելու և թալիշական խնդրից վերջնականորեն ձերբազատվելու հստակ նպատակ են հետապնդում[1]:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների համոզմամբ՝ թալիշական ազգային շարժումը հիմքում անջատողական է, միտված Ադրբեջանից և Իրանից անջատված տարածքների վրա անկախ թալիշական պետության ստեղծմանը: Մինչդեռ իրականում թալիշ գործիչների հիմնական մասը հակված է խոսել ոչ թե անկախության կամ ինքնավարության, այլ Ադրբեջանի հասարակաքաղաքական կյանքում թալիշների ինտեգրման, Բաքվի կողմից նրանց՝ որ-

[1] *Яна Амелина,* Талышский вопрос в современном Азербайджане, http://www.centrasia.ru/newsA.php?st=1217577960

պես առանձին էթնոս ճանաչելու մասին: Թալիշները ցանկանում են ունենալ հավասար իրավունքներ, կրթություն ստանալ մայրենի լեզվով, չհետապնդվել ազգային պատկանելության համար: Այդ տեսանկյունից հետաքրքիր դիտարկում է արել վտարանդիության մեջ գտնվող թալիշ ազգային գործիչ Ալիքրամ Հումատովը, որը 2009թ. այցելել էր Ռուսաստան: Ռուսաստանցի լրագրող Յանա Ամելինայի հետ զրույցի ժամանակ նա առաջ էր քաշել թալիշների ինքնակազմակերպվելու և ինքնավարությունը վերականգնելու անհրաժեշտությունը: Ա.Հումատովի համոզմամբ՝ միայն Ադրբեջանի երբևէ ժողովրդավարացումը կարող է օգնել թալիշներին՝ վերականգնելու իրենց ազգային իրավունքները[1]:

Առանձին տեսակետների համաձայն՝ չնայած վարչակարգի դիմակայությանը, թալիշական ազգային շարժումն իր մեջ ինքնակազմակերպվելու ուժ երբևէ կգտնի, անշուշտ, եթե դա այլևս ժամանակավրեպ չլինի: Չնայած ժամանակ առ ժամանակ ընդհատակում գտնվող թալիշական ազգային շարժման անդամները հայտարարություններ են անում, սակայն դրանք, հասկանալի պատճառներով, որոշակիորեն կաշկանդված են: Այդ իմաստով՝ թալիշական ազգային իրավունքներին վերաբերող օրակարգերը բավական կենսունակ են արտերկրում (ինչը նկատի է առնում հիմնականում Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, եվրոպական որոշ երկրներ), որտեղ գործում են թալիշական կազմակերպություններ: Դրանք առաջ են քաշում թալիշական ազգային իրավունքների վերականգնումը տարբեր ձևաչափերում: Ընդհանրապես, այս հարցում կան հիմնականում երեք մոտեցումներ՝ թալիշական շրջանների անկախացումն Ադրբեջանից, Ադրբեջանի կազմում թալիշական մշակութային ինքնավարության ձեռքբերումը և, պարզապես, թալիշական ազգային իրավունքների վերականգնումն Ադրբեջանում: Հատկանշական է, որ թե՛ սփյուռքում և թե՛ Ադրբեջանում բնակվող թալիշների շրջանում տիրապետող են հիմնականում երկու կողմնորոշումներ՝ ռուսամետությունն ու իրանամետությունը: Կան նաև բացառապես սեփական ժողովրդի ուժերին ապավինող շրջանակներ, իսկ մարդու իրավունքների պաշտպանության հարցում Արևմուտքի աջակցության ակնկալիքներն այլևս սպառել են իրենց: Ամեն պարագայում, թալիշական սփյուռքը միակ ասպարեզն է ազգային զարթոնքի համար[2]:

Առանձին հետազոտողներ նշում են, որ Ադրբեջանի էթնիկ փոքրամասնությունների շրջանում նկատվում են նաև իսլամական վերածննդի շարժումներ: Ինչ վերաբերում է թալիշական շրջաններին, ապա դրանք զգալիորեն զերծ են Իրանի կրոնական ազդեցությունից, կրոնական ծայրահեղական գա-

[1] «Россия помнит о нас, но ничего не делает», http://www.rosbalt.ru/2009/04/06/631499.html

[2] Մանրամասն տե՛ս *Яна Амелина*, Скрученная пружина «талышского вопроса», http://www.rosbalt.ru/2007/08/20/407337.html

դափարախոսություններից, չնայած իսլամի նկատմամբ կա հետաքրքրության աճ: Տեղի հոգևորականները ենթարկվում են Կովկասի մուսուլմանների վարչությանը, չնայած իրենց կրոնական կենտրոնը համարում են Իրանը[1]:

Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանությունների մոտեցումները թալիշական խնդիրների նկատմամբ ժամանակի ընթացքում նորանոր, նաև անսպասելի դրսևորումներ են ձեռք բերում: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ 2007թ. փետրվարի 2-ին պետության դավաճանության մեղադրանքով ձերբակալվեց և տասը տարվա ազատազրկման ենթարկվեց թալիշ հայտնի մտավորական, Թալիշական մշակութային կենտրոնի տնօրեն, «Թոլիշի սյադո» («Թալիշների ձայն») թերթի խմբագիր, թալիշագետ Նովրուզալի Մամեդովը: Երկու շաբաթ անց՝ փետրվարի 16-ին, ձերբակալվեց նաև թալիշ մեկ այլ գործիչ՝ նույն կենտրոնի աշխատակից, իրանագետ Էլման Գուլիևը և ազատազրկվեց վեց տարով: Հետաքրքիր է, որ վերջիններս մշտապես աչքի են ընկել իշխանության նկատմամբ լոյալ վերաբերմունքով: Փետրվարի 27-ին «Թուրան» գործակալությանը տված հարցազրույցում Ն.Մամեդովի իրավապաշտպան Հիլալ Մամեդովը հաստատեց, որ Մամեդովին մեղադրում են «Թոլիշի սյադո» թերթի հրատարակության համար Իրանից գումարներ ստանալու մեջ: Ռամիզ Մամեդովը՝ Ն.Մամեդովի փաստաբանը, *EurasiaNet*-ին տված հարցազրույցում նշել էր, որ լեզվաբանին ներկայացված մեղադրանքներն անհիմն են[2]:

Թալիշ մտավորականների ձերբակալությունն Ադրբեջանում անարձագանք չմնաց: Փաստը դատապարտող հայտարարություն տարածեցին Բաքվի խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտը[3], առանձին իրավապաշտպան կառույցներ, ովքեր Ն.Մամեդովին ճանաչեցին իբրև քաղբանտարկյալ[4]: 2007թ. ԱՄՆ-ի կողմից Իրանի վրա հնարավոր հարձակման մասին շրջանառվող լուրերը թույլ տվեցին առանձին վերլուծաբանների, այդ թվում՝ Ն.Մամեդովի իրավապաշտպաններին, պնդել, որ նման քայլով Ադրբեջանի իշխանությունները ձգտում են ի ցույց դնել ԱՄՆ-ին, որ սեփական երկրում չեզոքացնում են իրանական հետաքրքրությունները պաշտպանող ուժերին: Հ.Մամեդովի համոզմամբ՝ դրանով Ադրբեջանի հատուկ ծառայությունները պրոֆիլակտիկ աշխատանք են տանում, որպեսզի էթնիկ փոքրա-

[1] *Idrak Abbasov*, Talysh of Azerbaijan Look South and North, http://lgi.osi.hu/documents.php?id=1781

[2] *Х.Бакинский, М.Мурадова,* Американо-иранские трения становятся причиной арестов среди представителей национальных меншиств?, http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav030507aru.shtml

[3] "Институт Мира и Демократии": суд над лидером талышей в Азербайджане абсурден, http://www.kavkaz-uzel.ru/newstext/news/id/1207204.html

[4] В Азербайджане глава Талышского культурного центра объявлен политзаключенным, http://www.kavkaz-uzel.ru/articles/139755

մասնությունները չպայքարեն իրենց իրավունքների համար[1]: Քաղաքագետ Արիֆ Յունուսովի համոզմամբ՝ ձերբակալությունները նպատակ ունեն ապացուցել ԱՄՆ-ին և Արևմուտքին, որ իշխանությունները պայքարում են ահաբեկչության դեմ: Նրա կարծիքով՝ եթե իրավիճակն Իրանի շուրջ սրվի, անկանխատեսելի է, թե իրենց ինչպես կդրսևորեն մարդիկ Ադրբեջանի հարավում[2]:

Ունենալով առողջական լուրջ խնդիրներ և չդիմանալով բանտային ծանր պայմաններին՝ ձերբակալությունից երկու տարի անց, 2009թ. օգոստոսի 17-ին Ն.Մամեդովը մահացավ բանտի հիվանդանոցում: Իշխանությունները որևէ կերպ չէին արձագանքել բանտարկյալին քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու իրավապաշտպան կառույցների խնդրանքին: Ն.Մամեդովի այրու՝ Մարիամ Մամեդովայի կարծիքով, իր ամուսնուն սպանել են: Վերջինս Ադրբեջանի գլխավոր դատախազից պահանջել է պարզել մահվան հանգամանքները՝ այդ գործընթացում ներգրավելով միջազգային իրավաբանների և փորձագետների: Նա նշել է, որ իշխանությունները բարոյական և ֆիզիկական ճնշումներ են իրականացրել թե՛ իր ամուսնու և թե՛ ընտանիքի նկատմամբ, որի հետևանքով 2007թ. սեպտեմբերին մահացել է ավագ որդին, իսկ կրտսերը բանտարկված է[3]:

Հարկ է նշել, որ թալիշական խնդիրներն Ադրբեջանում շոշափում են նաև ուժային տարբեր կենտրոնների, առաջին հերթին՝ Իրանի և Ռուսաստանի հետաքրքրությունները: Իրանը Թալիշստանը, իսկ ավելի ճիշտ, Իրանից ժամանակին անջատված հյուսիսային Թալիշստանը, դիտարկում է որպես իրանական աշխարհի բաղկացուցիչ: Պատահական չէ, որ Ադրբեջանի անկախացումից ի վեր Թեհրանը թալիշական շրջաններում իրականացրել է գործուն քարոզչություն՝ իր քաղաքական և կրոնական ազդեցությունը տարածելու համար: Ըստ որոշ տեղեկությունների՝ իրանական հատուկ ծառայություններն Ադրբեջանում սովորաբար հավաքագրում են թալիշական ծագման գործակալներ: Իսկ իրանական «Սահար» հեռուստաալիքը, որ հեռարձակվում է Ադրբեջանի հարավում, թալիշներին կոչ է անում քայլեր ձեռնարկել Ադրբեջանի կառավարության դեմ[4]: Միևնույն ժամանակ, Իրանը մշտապես զգուշանում է սեփական երկրում թալիշական գործոնի ակտիվացումից:

Թե՛ թալիշներին և թե՛ Ադրբեջանի էթնիկ այլ փոքրամասնություններին առնչվող խնդիրները կարևոր գործոն են Ռուսաստանի համար՝ Ադրբեջանի

[1] Комитет защиты Мамедова: в Азербайджане ущемляются права не-тюрков, http://www.kavkaz-uzel.ru/newstext/news/id/1191514.html

[2] *Х.Бакинский, М.Мурадова,* նշվ. հոդվածում:

[3] В Азербайджане вдова Новрузали Мамедова считает, что ее мужа убили в тюрьме, www.kavkaz-uzel.ru/articles/158854

[4] *Х.Бакинский, М.Мурадова,* նշվ. հոդվածում:

վրա ճնշումներ բանեցնելու տեսանկյունից: Հատկանշական է, որ Ռուսաստանում են ապաստան գտել և գտնում թալիշական ազգային շարժման բազմաթիվ գործիչներ, այստեղ կան թալիշ աշխատանքային էմիգրանտներ, և վերջապես՝ թալիշական սփյուռք:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանն, ըստ էության, դարձել է թալիշական շարժման ինտելեկտուալ և տեղեկատվական հովանոցը[1], այն հրապարակայնորեն չի արձագանքում թալիշական խնդիրներին: Այս հանգամանքը շատ ցավագին է ընդունվում թալիշների կողմից, որոնց կարծիքով՝ Ռուսաստանը պատմականորեն պատասխանատվություն ունի թալիշական խնդիրների նկատմամբ: Ինչ վերաբերում է Արևմուտքին, ապա վերջինս ներկա փուլում հատուկ հետաքրքրություն չի ցուցաբերում իրանական ծագում ունեցող թալիշներին աջակցելու համար և բավարարվում է առանձին հայտարարություններով: Մասնավորապես՝ վերջերս Ն.Մամեդովի մահվան կապակցությամբ *Human Rights Watch* միջազգային իրավապաշտպան կազմակերպությունն Ադրբեջանի գլխավոր դատախազին և արդարադատության նախարարին մի նամակ է հղել, որում կոչ է անում օբյեկտիվորեն ուսումնասիրել Ն.Մամեդովի մահվան հանգամանքները[2]:

Թալիշական շարժման հեռանկարները մշուշոտ են: Տեսականորեն, թալիշական ազգային շարժումը դաշնակիցներ և անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերելու պարագայում կարող է աշխուժանալ: Թալիշ առանձին գործիչներ հեռանկարում չեն բացառում նաև զինված պայքարի հնարավորությունը:

Էթնիկ փոքրամասնությունների խնդիրներն Ադրբեջանի ամենացավոտ և երկիրը խոցելի դարձնող հարցերից են, որոնք շարունակում են գոյություն ունենալ՝ ժամանակ առ ժամանակ ընդունելով դրսևորման նորանոր ձևեր: Միևնույն ժամանակ, թալիշների օրինակը մեկ անգամ ևս ի ցույց է դնում, որ էթնիկ փոքրամասնություններն Ադրբեջանում հեռանկար չունեն:

[1] *Ա.Հակոբյան*, Թալիշական ազգային շարժման հեռանկարները, http://www.noravank.am/am/?page=analitics&nid=29

[2] Տե՛ս http//kavkaz-uzel.ru/articles/158525

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1918-1920ԹԹ.

Հայկարամ Նահապետյան

Ընթացիկ տարվա մարտի 29-ին ադրբեջանական *day.az* պորտալի կայքում հայտնվեց հրապարակում, ըստ որի՝ «Նյու Յորք թայմս» օրաթերթի արխիվում իբր թե գտնվել էր մի հոդված, որում Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը նշված էին որպես 1918-1920թթ. մուսավաթական Ադրբեջանի մաս *(http://day.az/news/politics/151388.html)*: Քանի որ Արցախը ոչ նշված տարիներին, ոչ երբևէ անկախ Ադրբեջանի մաս չի կազմել (նաև այն պարզ տրամաբանությամբ, որ 1918-ի մայիսի 28-ից առաջ անկախ Ադրբեջան չի եղել), մնում է պարզել այս հերթական ապատեղեկատվության ակունքները, ինչպես նաև նպատակահարմար է հստակեցնել, թե ինչ է իրականում գրել «Նյու Յորք թայմսը», ինչպես նաև մյուս հեղինակավոր ամերիկյան լրատվամիջոցները Լեռնային Ղարաբաղի մասին Հարավկովկասյան հանրապետությունների կարճաժամկետ անկախության ժամանակահատվածում: Այսպիսով, *day.az-ը* մեջբերում է «Նյու Յորք թայմսի» 1920թ. օգոստոսի 4-ի հրապարակումը, որում նշված է, թե «հայաբնակ Զանգեզուրը և Ղարաբաղը ճանապարհների և կոմունիկացիաների բացակայության պատճառով կտրված էին Հայաստանի Հանրապետության մնացած հատվածից և չէին վերահսկվում Հայաստանի իշխանությունների կողմից»[1]: Ադրբեջանական քարոզչամեքենան մամուլի այս հաղորդագրությունը որակել է ոչ ավելի, ոչ պակաս՝ «պատմական ապացույց, որ այս տարածքները պատկանել են Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությանը», չնայած մամուլի հաղորդագրության մեջ «Ադրբեջան» բառն անգամ չի հիշատակվում: Փաստը, որ ադրբեջանական քարոզչամեքենան ի վիճակի չի եղել ամերիկյան արխիվում գտնել որևէ հրապարակում, որում Արցախը հստակ կնշվեր որպես Ադրբեջանի մաս՝ արդեն խոսուն է: Առավելագույնը, որ ադրբեջանցի քարոզիչները կարողացել են գտնել և հարմարեցնել սեփական կեղծ թեզին, եղել է վերը նշված հրապարակումը: Իսկ ի՞նչ է իրականում հաղորդել ամերիկյան մամուլը Լեռնային Ղարաբաղի մասին 1918-20թթ.:

[1] Doubt Armenia is invaded, “New York Times”, 04.08.1920.

«Չիկագո դեյլի թրիբյուն» օրաթերթի 1919թ. հուլիսի 31-ի համարում կարդում ենք Թիֆլիսում գործող ամերիկյան բանակի սպա, մայոր Ջոզեֆ Գրինի հեռագիրը *«Neat East Relief»* մարդասիրական կազմակերպության գլխավոր տնօրեն Հերբերթ Հուվերին, որն այդ օրերին գտնվում էր Փարիզում՝ Խաղաղության կոնֆերանսին մասնակցելու նպատակով: Ավելի ուշ, 1929-1933թթ. Հուվերը դարձավ ԱՄՆ 31-րդ նախագահը:

«Թուրքերն ու թաթարները երեք ուղղություններով շարժվում են հայերի դեմ: Նրանք կտրել են մատակարարման ուղիները և սպառնում են տարագրել հայերին»: Ինչպես գրում է թերթը, «գլխավոր տնօրեն Հերբերթ Հուվերը մայոր Գրինի նամակը իսկույն ևեթ փոխանցել է Խաղաղության կոնֆերանսին, որտեղ արդեն իսկ առկա էին նմանօրինակ զեկույցներ ամերիկացի և բրիտանացի այլ դիտորդներից»: «Կարող է տեղի ունենալ ավելի ահավոր աղետ, քան 1915-ին էր, հայ ժողովուրդը կարող է վերջնականապես բնաջնջվել, որպես հավերժական ամոթանք դաշնակիցների համար: …Հայկական կառավարությունը նախօրեին սկսել է համընդհանուր զորահավաք… Մենք չենք կարող մարդասիրական գործունեությամբ զբաղվել, քանի դեռ բրիտանական զորքերը հրաման չեն ստացել թուրքական և թաթարական ուժերից մաքրել ամբողջ Ռուսահայաստանը՝ *ներառյալ Ղարաբաղը* և Ալագյոզը»[1],- գրել է մայոր Գրինը:

Նույն օրվա «Ատլանտա քընսթիթյուշըն» հանդեսում կարդում ենք. «Թուրքերն ու թաթարները առաջ են շարժվում Ղարաբաղի և Ալագյոզի ուղղությամբ: Նրանք գրավել են Ռուսահայաստանը, Հայաստանի կառավարությունը հայտարարել է զորահավաք»[2]:

Բնականաբար, ամերիկյան լրատվամիջոցների հրապարակումներում գործածվում է «թաթար», այլ ոչ թե «ադրբեջանցի» էթնոնիմը. վերջինս պաշտոնապես սկսվել է կիրառվել միայն 1936թ. վերջից՝ Ստալինի նախաձեռնությամբ: Ավելին՝ մասնավոր այս երկու հրապարակումներում նշվել է առավել անստույգ՝ «թարթար» տարբերակը: 1918-20-ականների ամերիկյան մամուլում «թաթար» էթնոնիմի փոխարեն հիմնականում կիրառվում էր «թարթար» տարբերակը:

«Քրիսչըն սայնզ մոնիթոր» հանդեսի 1919թ. օգոստոսի 5-ի համարում նշված է. «Ղարաբաղը բնակեցված է բացառապես հայերով, նախկինում եղել է անկախ և ինքնուրույն»[3]: Մեջբերում նույն թերթի օգոստոսի 28-ի համարից. «Թաթարները ձգտում են հայկական Ղարաբաղը անեքսիայի ենթարկել՝ կցելով Ադրբեջանի թաթարական հանրապետությանը: Փարիզից ստացված տեղեկությունները հետևյալ պատկերն են ուրվագծում. հունիսի 4-ի առավոտյան ժամը 3-

[1] Turks, Tatars peril Armenia, “Chicago Daily Tribune”, 31.07.1919.
[2] Turks move to Butcher Armenians, “The Atlanta Constitution”, 31.07.1919.
[3] Maasacre reported of 200 Armenians. “Christian Science Monitor”, 05.08.1919.

ին Ադրբեջանի թաթարական հանրապետության զինված ուժերը, ղեկավարվելով դր Սուլթանովի կողմից, որն ինքն իրեն հռչակել է հայկական Ղարաբաղի նահանգապետ, գրոհեցին հայկական Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիի ուղղությամբ»[1]:

Թերթի սեպտեմբերի 2-ի համարում կարդում ենք. «Մի քանի շաբաթ առաջ, ինչպես հիշում ենք, մայոր Գրինը Թիֆլիսից հեռագիր էր ուղարկել Հերբերթ Հուվերին՝ մանրամասնելով, որ թուրքերը և թաթարները շարժվում են հայկական Ղարաբաղի շրջանի ուղղությամբ: …Ամենակազմակերպված սպանությունները տեղի են ունեցել Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիում»[2]:

Արդեն մեկ տարի անց, երբ Հարավային Կովկասում էր գտնվում 11-րդ Կարմիր բանակը, ամերիկյան մամուլը հաղորդում էր Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու Մոսկվայի ձգտումների վերաբերյալ: 1920թ. հուլիսի 20-ին «Վաշինգտոն Փոստի» «Բոլշևիկները առաջ են շարժվում Հայաստանում» հրապարակման մեջ նշված է. «Հայաստանի կառավարությունը հրաժարվել է ենթարկվել ռուսական սովետական կառավարության վերջնագրին, և բոլշևիկյան բանակը հարձակման հրաման է ստացել: Նրանք արդեն գրավել են Ղարաբաղի շրջանը»[3]: Ադրբեջանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920թ. ապրիլի 28-ին, մինչդեռ ռուսաստանյան բանակն առաջ է շարժվել դեպի Արցախ հուլիսին, ինչը հերթական գլուխկոտրուկն է առաջացնում ադրբեջանական քարոզիչների համար՝ Ղարաբաղի մուսավաթական Ադրբեջանի մաս կազմելու մասին սուտը սեփական և միջազգային հանրությանը մատուցելու առումով: Հուլիսի 26-ին «Նյու Յորք թայմսը» զարգացնում է թեման. «Բոլշևիկների զգալի ուժեր հատել են Հայաստանի Ղարաբաղի շրջանը թուրք ազգայնականների հետ միավորվելու մտադրությամբ»[4]: Մեջբերում նույն օրվա «Աթլանթա քընսթիթյուշընն» հանդեսից. «Զգալի ռուս-բոլշևիկյան ուժեր, հիմնականում հետևակ, հատել են Հայաստանի Ղարաբաղի շրջանի սահմանը: Թուրք ազգայնականները և ռուս բոլշևիկները մոտենում են Շուշիին»[5]:

Օգոստոսի 2-ին նույն թեմայով «Նյու Յորք թայմսը» գրեց. «Ըստ ստացված վերջին տեղեկությունների, բոլշևիկների ներթափանցումը Հայաստան շարունակվում է. պնդումներ կան, որ հուլիսի 20-ին Ղարաբաղի և Զանգեզուրի տարածաշրջաններում հաստատվել է խորհրդային իշխանություն»[6]:

Իսկ 1921թ. մարտի 16-ին, երբ Հայաստանում ժամանակավորապես վերականգնվել էր անկախ իշխանությունը, «Նյու Յորք թայմսը» գրեց. «Հայկա-

[1] Tartars and Kurds slay Armenians, “Christian Science Monitor”, 28.08.1919.
[2] Armenia again, “Christian Science Monitor”, 02.09.1919.
[3] Bolsheviki advance into Armenia. Will give aid to Turks, “The Washington Post” July 20, 1920.
[4] Bolsheviki marching to join Turks, “New York Times”, July 26, 1920.
[5] Bolshevik forces appear in Armenia, “The Atlanta constitution” 26.07.1920.
[6] Soviet invites Djemal pasha to lead Musulman reds, “New York Times”, August 2, 1920.

կան կաբինետի ղեկավար Սիմոն Վրացյանի մարտի 7-ի ռադիոհեռագիրը հրապարակում է, որ բոլշևիկներն ամբողջովին ջարդվել են և ողջ երկիրը՝ Ղարաբաղից մինչև Ալագյազ, այսինքն՝ այն բոլոր տարածքները, որոնք չեն օկուպացվել Թուրքիայի կողմից, ղեկավարվում են Հայաստանի կառավարության կողմից»[1]:

Օրինակները հնարավոր է շարունակել: Ներկայացված մեկ տասնյակ հոդվածներից մեջբերումներում Լեռնային Ղարաբաղը հստակ բնորոշվում է որպես պատմական հայկական տարածք և քաղաքական առումով Հայաստանի բաղկացուցիչ մաս, իսկ Բաքուն՝ ագրեսիվ կողմ, որը ձգտում էր ԼՂ-ն բռնակցել թաթարական Ադրբեջանին: Ինչպես նկատում ենք, ամերիկացի սպա Ջոզեֆ Գրինը կապ է տեսել 1915-ի Հայոց ցեղասպանության և 1919-1920թթ. թուրք-թաթարական ուժերի կողմից Ղարաբաղի հայերին բնաջնջելու փորձի միջև: Սա հերթական վկայությունն է, որ 20-րդ դարավերջին Արցախի հայերը մղեցին բացառապես ինքնապաշտպանական կռիվներ՝ կանխելով 20-րդ դարավերջի նոր ցեղասպանության սպառնալիքը: Իսկ «Նյու Յորք թայմսը» վկայակոչելով՝ Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը որպես ադրբեջանական պատմական տարածք ներկայացնելու փորձը ադրբեջանական կողմի ապատեղեկատվության հերթական դրսևորումներից է, որում Բաքուն փաստացի նաև շահարկում է միջազգային հեղինակավոր լրատվամիջոցի անունը:

[1] Greeks said to plan new drive on Turks, “New York Times”, 16.03.1921.

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

2009թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 4-ը Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում տեղի ունեցավ «Դեպի նոր «կանաչ» պայմանագիրը՝ նոր էներգետիկ և կլիմայական քաղաքականությունը» թեմատիկայով միջազգային գիտաժողովը։ Այն կազմակերպված էր Բեռլինի ազատ համալսարանի, Նորվեգիայի կառավարման բարձրագույն դպրոցի, *BP*-Գերմանիա և *Shell* ընկերությունների կողմից։

Գիտաժողովում քննարկված հիմնական թեման ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումն էր այլընտրանքային էներգետիկայի զարգացման ոլորտում։

Վերջին մեկ տարվա ընթացքում, երբ ֆինանսական ճգնաժամի պատճառով սնանկացել են այլընտրանքային էներգետիկայի զարգացմամբ և ներդրմամբ զբաղվող բազմաթիվ ընկերություններ, այլընտրանքային էներգետիկայի զարգացման մենաշնորհն անուղղակիորեն տրվել է նավթային և գազային ընկերություններին։ Դրանց ֆինանսական կայունությունը հնարավորություն է տվել շարունակել հետազոտություններն ու աշխատանքներն այլընտրանքային էներգետիկայի ոլորտում և, հաշվի առնելով ոլորտի ու տեխնոլոգիաների արագ աճը, նավթային ընկերությունների միջև մրցունակության համար նոր դաշտ ստեղծել։ Ելույթների մեծ մասը նվիրված էր այն խնդրին, որ ներկայիս նավթային և գազային խոշոր կորպորացիաները հետագայում կդառնան այլընտրանքային էներգետիկայի ոլորտի խոշորագույն խաղացողներ, ինչը կպահպանի թե՛ միջազգային էներգետիկ ոլորտի հիմնարար զարգացման պոտենցիալը թե՛ չի փոխի այն ուժերի հարաբերակցությունը, որը կա միջազգային էներգետիկ անվտանգության ոլորտում։

Գիտաժողովի վերջին օրվա հիմնական թեման էր «Էներգետիկ քաղաքականությունը Կասպիցի շրջանում»։ Ի տարբերություն անցած տարիների քննարկումների՝ այս տարի հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր Իրանում տեղ գտած քաղաքական գործընթացների՝ տարածաշրջանային և համաշխարհային էներգետիկ անվտանգության վրա հնարավոր ազդեցություններին։ Սա պայմանավորված էր նրանով, որ ԵՄ էներգետիկ ռազմավարությունը ենթադրում է, որ մինչ 2012 թվականը Իրանն արդեն իսկ պետք է դառնա ԵՄ բնական գազ ներմուծող երկիր։ Սակայն վերջին քաղաքական ճգնաժամն Իրանում և Արևմուտքի հետ հարաբերությունների սրումը կարող են բերել Թեհրանի ու եվրոպական երկրների միջև հնարավոր էներգետիկ համագործակցության խափանման։

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին, գիտաժողովի ժամանակ Կասպիցի և տարածաշրջանի վերաբերյալ հնչած հիմնական ելույթներում այն ներկայացվում էր զուտ որպես ապագա անկայունության գոտի: Վրաստանը վերջնականապես դադարել է համարվել վստահելի պետություն, իսկ նրա տարածքն այլևս չի ընկալվում որպես խոշոր ծավալների էներգետիկ ռեսուրսների արտահանման անվտանգ միջոց: Նշենք, որ գերմանացի զեկուցողներից մեկի ելույթում հետևյալ միտքն արտահայտվեց. «Մենք մեր էներգետիկ անվտանգությամբ ենք վճարում Վաշինգտոնի դիրքերի ուժեղացման համար: Եթե ԱՄՆ-ին պետք է ամրապնդվել Վրաստանում ու Կովկասում, ապա մենք դրա հետ ոչ մի գործ չպետք է ունենանք»:

Կոնֆերանսում նշվեց նաև հայ-թուրքական հարաբերություններում տեղ գտած գործընթացների մասին, ինչը պայմանավորված էր նրանով, որ սեպտեմբերի 2-ին մի քանի գերմանական թերթեր, այդ թվում՝ «Ֆրանկֆուրտեր Զայթունգը», ծավալուն հոդվածներ էին տպագրել հայ-թուրքական նախաստորագրված արձանագրությունների մասին: Դրանցում նաև խոսվում էր այն մասին, որ Հայաստանը կարող է ինտեգրվել տարածաշրջանային էներգետիկ նախագծերում: Նշենք, որ թե՛ զեկույցներում, թե՛ անձնական խոսակցությունների ժամանակ հայ-թուրքական գործընթացը դրական արձագանք ստացավ, սակայն արտահայտվեցին նաև այնպիսի կարծիքներ, թե «մեր փորձը ցույց է տալիս, որ թուրքերի հետ ստորագրած ցանկացած փաստաթուղթ սկսում է աշխատել մեծ դժվարություններով»:

«ԳԼՈԲՈՒՍ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221՝ տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 06.10.2009թ.
Թիվ 5, 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16։ Պայմանական 15 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում